

no 43 f

85-75-52

2004

2000

Handwritten blue scribbles at the top right corner.


ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՈՍՏՈՒԼՈՍ
ԿԱՌՎՈՅՆԱԿԱՆ ՇՄՈՒՆՆԵՐ

ԿԱՌՎՈՅՆԱԿԱՆ ՇՄՈՒՆՆԵՐ
ԿԱՌՎՈՅՆԱԿԱՆ


ՀՐԱՄԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՊԱԳՐԵԼ .

Դատաբանիչ զբոյ ՄեքայէԼ Ծայրագոյն Վար-
դապետ Սալանթեանց Կոստանդնուպօլսեցի . Մեա-
բան և Նուիրակ Արբոյ Լքմիաճնի .

Ի 29 Մարտի . 1834 . Ի Մոսկով :



Handwritten blue scribbles on the right margin.



Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ը Ս Տ Մ Ա Տ Թ Է Ո Ս Ի .

Գ Լ ՈՒ Խ Ե Ռ Ե Զ Ի Ն .

Գ ի Բ Բ ծննդեան յսի
քսի որդւոյ դաւթի .
որդւոյ աբրահամու :

2 Աբրահամ ծնաւ զԻսա-
հակ : Իսահակ ծնաւ զյա-
կովբ : Յակովբ ծնաւ զյու-
դա , և զեղբարս նորա :

3 Յուդա ծնաւ զփարէս
և զարայ ՚ի թամարայ : Փա-
րէս ծնաւ զեղրոն : Եղրոն
ծնաւ զարամ :

4 Արամ ծնաւ զամինա-
դաբ : Ամինադաբ ծնաւ ըզ-
նասոն : Նասոն ծնաւ ըզ-
նաղմոն :

5 Սաղմոն ծնաւ զբոցոս ՚ի
հռեքեբայ : Բոցոս ծնաւ զօ-
բէթ ՚ի հուլթայ : Օբէթ
ծնաւ զհեստէ : Յեստէ ծնաւ
զզաւիթ արբայ :

Գ ի Բ Բ ծնվելոյ յսի
քսի դաւթի որդոյն .
աբրահամի որդոյն :

2 Աբրահամն ծնաւ իսա-
հակին . իսահակն ծնաւ յա-
կովբին . յակովբն ծնաւ յու-
դային և նորա եղբարներին :

3 Յուդան ծնաւ փարէսին
և արային թամարիցն . փարէ-
սըն ծնաւ եղրոնին . եղրոն
ծնաւ արամին :

4 Արամն ծնաւ ամինադա-
բին . ամինադաբն ծնաւ նա-
սոնին . նասոնն ծնաւ նաղ-
մոնին :

5 Սաղմոնն ծնաւ բոցոսին՝
հռեքեբայիցն . բոցոսն ծնաւ
օբէդին՝ հուլթիցն . օբէդն
ծնաւ յեստէին . յեստէն ծնաւ
զաւիթ թագաւորին :

6 Դաւիթ արքայ ծնաւ զսաղումնն ՚ի կնոջէն ուրիայ :

6 Դաւիթ թագաւորն ծընաւ սաղումնին, ուրիայի կընկանիցն :

7 Սաղումնն ծնաւ զրոբովամ : Բոբովամ ծնաւ զաբայ : Աբայ ծնաւ զաստի :

7 Սաղումնն ծնաւ ըրբովամին, ըրբովամին ծնաւ աբային, աբայն ծնաւ աստիին :

8 Աստի ծնաւ զյոսափաթ : Յոսափաթ ծնաւ զյորամ : Յորամ ծնաւ զողիայ :

8 Աստին ծնաւ յոսափաթին, յոսափաթն ծնաւ յորամին, յորամն ծնաւ օղիային :

9 Ողիա ծնաւ զյովամ : Յովամ ծնաւ զաբազ : Աբազ ծնաւ զեղեկիայ :

9 Ողիան ծնաւ յովամին, յովամին ծնաւ աբազին, աբազն ծնաւ եղեկիային :

10 Եղեկիա ծնաւ զմանասէ : Մանասէ ծնաւ զամնն : Ամնն ծնաւ զյոսիա :

10 Եղեկիան ծնաւ մանասէին, մանասէն ծնաւ ամննին, ամննն ծնաւ յոսիային :

11 Յոսիա ծնաւ զյեքոնիա՝ և զեղարս նորա առ դերու թեամբն քաբէլացոց :

11 Յոսիան ծնաւ յեքոնիային՝ և նորա եղարսներն, քաբէլացոց դերու թեան մանսկումնն :

12 Յեա դերու թեանն քաբէլացոց ծնաւ յեքոնիա զսաղաթիէլ : Սաղաթիէլ ծնաւ զզորաբաբէլ :

12 Բաբէլացոց դերու թեանիցն ետե՛ յեքոնիան ծնաւ սաղաթիէլին, սաղաթիէլն ծնաւ զզորաբաբէլին :

13 Չորաբաբէլ ծնաւ զաբիու թ : Աբիու թ ծնաւ զեղիակիմ : Եղիակիմ ծնաւ զազբ :

13 Չորաբաբէլն ծնաւ աբիու թին, աբիու թն ծնաւ եղիակիմին, եղիակիմն ծնաւ զազբին :

14 Ազբ ծնաւ զսաղոկ : Սաղոկ ծնաւ զաբին : Աբին ծնաւ զեղիուղ :

14 Ազբն ծնաւ սաղոկին, սաղոկն ծնաւ աբինին, աբինն ծնաւ եղիուղին :

15 Եղիուղ ծնաւ զեղիազար : Եղիազար ծնաւ զմատթանն : Մատթանն ծնաւ զյակովա :

15 Եղիուղն ծնաւ եղիազարին, եղիազարն ծնաւ մատթաննին, մատթաննն ծնաւ յակովին :

16 Յակովբ ծնաւ զյովսէփ զայրն մարիամու՝ որում խօսեցեալ զմարիամ կոյս՝ յորմէ ծնաւ Յս . որ անուանեցաւ Քս :

17 Եւ ընդ ամ ազգք յաբրահամէ մինչև ՚ի դաւիթ՝ ազգք չորեքտասանք : Եւ ՚ի դաւիթ մինչև ՚ի գերուսէն բաբելոնացւոց՝ ազգք չորեքտասանք : Եւ ՚ի գերուսէն բաբելոնացւոց մինչև ՚ի Քրիստոս ազգք չորեքտասանք :

18 Եւ Յսի Քսի ծնունդն էր այսպէս : Խօսեալ զմայր նորա Մարիամ Յովսէփու՝ մինչև եկեալ առ միմեանս՝ գտաւ յղացեալ ՚ի Հոգւոյն սրբոյ :

19 Եւ յովսէփայր նորա՝ քան զի արդար էր , և ոչ կամեցաւ առական զնա , խորհեցու լռելայն արձակել զնա :

20 Եւ մինչեւ նա զայս ածէր զմտաւ՝ ահա հրեշտակ Տն ՚ի տեսեան երևեցաւ նմա՝ և ասէ : Յովսէփ որդի դաւիթի . մի երկնչիւր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո . քանզի որ ՚ի նմայն ծնեալ է , ՚ի Հոգւոյն սրբոյ է :

21 Ծնել որդի . և կոչես :

16 Յակոբն ծնաւ յօսէփին՝ մարիամու մարդոյն . որ նորան նշանած էր մարիամ կոյսն . որ նորանից Յս ծնուաւ՝ որ Քս կոչեցաւ :

17 Իսպէս՝ ամէն պորտերն աբրահամիցն մինչև դաւիթն՝ տասնուչորս պորտ (են) . և դաւիթիցն մինչև բաբելոնաց գերուսէնն տասնուչորս պորտ . և բաբելոնաց գերուսէնիցն մինչև Քս տասնուչորս պորտ :

18 Եւ Յսի Քսի ծնունդն էսպէս էր . նորա մայր մարիամն նշանած էր յօսէփին՝ և դեռ իրար մօտ չէին եկած՝ ինքն սբ հոգւոյն յղացած գտուաւ :

19 Եւ նորա մարդ յօսէփն . որովհետև արդար մարդ էր . և չէր ուզում որ խայտառակ անէ նորան . միտք արաւ որ ձայն չի հանած՝ թողանէ նորան :

20 Եւ դեռ նա էս մտած մունքի մէջն էր՝ ահա (է՝ է , հրէ՝) տէրի հրեշտակն երազուքն երևեցաւ նորան և ասաց . դաւիթի որդի յօսէփի՝ մի վախենար քո կին մարիամըն քեզ մօտ առնել . ինչուոր նորանում ծննվածն՝ սուրբ հոգւոյն է :

21 Նա որդի կըծընի և նո

յես զանունն նր՝ Յս, զինս փըր կեսցէ զժողովուրդէ իւր ՚ի մեղաց իւրեանց :

22 Այլ այս ամ եղև . զի 199 յի՛ որ ասացաւն ՚ի Տէ ՚ի ձեռնն եսայեայ մարգարէի :

23 Ահա կոյս յղսցի . և ծնցի որդի . և կոչեացեն զանունն նորա Եմմանուէլ . որ թարգմանի, ընդ մեղ Ա՛ծ :

24 Եւ զարթուցեալ յովսէփ ՚ի քնոյ անտի, արար ուղ հրամայեաց նմա հրեշտակն Տ՛ն . և էառ յինքն զկինն իւր :

25 Եւ ոչ զիտէր զնա . մինչև ծնալ զորդին իւր զանդրա նիկ . և կոչեաց զանունն նորա Յիսուս :

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ .

1 Եւ ՚ի ծնանիլն Յսի ՚ի ըիթղէհէմ հրէաստանի, յաւուրս հերովիէի արքայի . ահա մոզք յարեւելից եկին յերուսաղէմ :

2 Եւ ասեն՝ ո՛ր է . որ ծընաւ արքայն հրէից . զի տեստք զաստղ նորա յարեւելս . և եկաք երկիր

ւր անունն Յս կըղնես . նրահամար որ նա իրան ժողովուրդըն կազատէ իրանց մեղքերիցն :

22 Բայց էս ամէն բաներս էսպէս էլաւ՝ որ կատարվի Տէրիցն ասված բանն՝ եսայի մարգարէի ձեռովն (Թէ) .

23 Ահա կոյսն կըլղանայ և որդի կըծնի՝ և նորա անունն էմմանուէլ կըլղանչեն . որ նշանակուի՝ Աստուած մեղ հետ :

24 Եւ յօսէփ որ քնիցն զարթընացաւ՝ էնպէս արաւ ինչպէս որ Տէրի հրեշտակն հրամայեց իրան . և իրան կինըն առաւ իրան մօտ :

25 Եւ չէր զիտում նորան , մինչև որ նա իրան առաջինեկ որդին ծնաւ . և նորա անունն Յս էանչեց :

1 Եւ երբ որ Յս ծնվաւ հրէաստան (Չըհու-ստան) երկրի բեթղէհէմումն, հէրօդէս թագաւորի օրերումն, ահա մոզք արեւելիցն եկին երուսաղէմ

2 Եւ ասացին . ո՛ր տեղ է՝ որ ծնվաւ հրէաների (Չըհու-ստան) թագաւորն . որ մենք նորաստղըն տեսանք արեւելքումն,

պագանեւ նմա :

3 Եւ իբրև լուաւ արքայ
հերովդէս՝ խռովեցաւ՝ և ան
եհմ ընդ նմա :

4 Եւ ժողովեալ զանձ գլխա-
հանայապետս՝ և զգլխիւր ժո-
ղովրդեանն. հարցանէր ՚ի նո-
ցանէ. թէ ո՞ր ծնանիցի Քրիստոս :

5 Եւ նոքա ասեն յնա ՚ի
բեթղէհէմ՝ հրէաստանի. զի
այսպէս գրեալ է ՚ի ձեռն
մարգարէին :

6 Եւ դու բեթղէհէմ եր-
կիր յուդայ՝ ոչինչ կրտսեր ես
յիշխանս յուդայ. ՚ի քէն ել-
ցէ ինձ իշխան. որ հովուեսցէ
զժողովուրդ իմ զհարայէլ :

7 Յայնժամ հերովդէս գաղտ
կոչեաց զմոզսն՝ և ստուգեաց
՚ի նոցանէ զժամանակ աստեղն
երևելոյ :

8 Եւ արձակեալ զնոսա ՚ի
բեթղէհէմ, ասէ. գնայէք
և ստուգեցէք վասն ման-
կանն. և յորժամ գը-
տանիցէք՝ ազդ արասջիք
ինձ. զի և ես եկեալ եր-

և եկինք երկրպագութի ա-
նել նորան :

3 Եւ երբոր հերովդէս թա-
գաւորն էս լսեց՝ շփոթվեցաւ,
և ամէն երուսաղէմն էլ նորա
հետ :

4 Եւ ամէն քահանայապետ-
ներն և ժողովուրդի կարգա-
յօղներն ժողովեց և նորան-
ցից հարցրուց, թէ Քրիստոս
տեղ պիտի ծնվի :

5 Եւ նորանք, ասացին նո-
րան. թէ հրէաստանի (Չհու-
սասանն) բեթղէհէմուսն.
ինչուոր՝ էսպէս գրված է մար-
գարէի ձեռով (թէ)

6 Դուն էլ բեթղէհէմ,
յուդայի երկիր՝ իսկի փոքր
չես յուդայի իշխանների մէ-
ջն. քեզանից իշխան պիտի
դուրս գայ ինձ համար, որ իմ
խորայէլ ժողովուրդը կառա-
վարէ :

7 Ին ժամանակն հերովդէ-
սըն մոզերին թաքուն իրան
մօտ կանչեց, և նորանցից հաս-
տատ տեղեկացաւ էն երևեցած
աստղի ժամանակն :

8 Եւ նորանց դէպի բեթ-
ղէհէմն ուղարկեց և ասաց.
գնայէք շիտակ իմացէք՝ էն
երեխայի համար, և երբոր
կըզտնէք, ինձ էլ իմաց արէք.
որ ես էլ գամ երկրպագու-

կիրպագլից նմա :

9 Եւ նոքա իբրև լուան ՚ի թագաւորէն , զնացին . և ահա աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա՝ մինչև եկեալ եկաց ՚ի վերայ՝ ուր էր մանուկն :

10 Իբրև տեսին զաստղն , խնդացին յոյժ ուրախու թիւն մեծ :

11 Եւ իբրև մտին ՚ի տուն՝ տեսին զմանուկն հանդերձ Մարիամաւ մարբն իւրով . և անկեալ երկիրպագանէին նրմա , և բացեալ զգանձս իւրեանց՝ մատուցին նմա պատարագս . ոսկի , և կնդրուկ , և զմուռս :

12 Եւ հրաման առեալ ՚ի տեսլեան չլառնալ անդրէն առ հերոդէս , ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց :

13 Եւ իբրև գնացին նոքա անախ . ահա հրեշտակ Տեառն երևիւր ՚ի տեսլեանն յովսէփու . և ասէր . արի՛ , առ զմանուկդ . և զմայր իւր՝ և վախի՛ր յեգիպտոս . և անդ լինի՛ ջիր՝ ցորժամ ասացից քեզ . քանզի ՚ի ինդիր է հերովդէսս կորուսանել զմանուկդ :

Թիւն անեմ՝ նորան :

9 Եւ նորանք երբոր էս լսեցին թագաւորիցն՝ գնացին . և ահա էն աստղն որ արևելքու մն տեսելին , ճանապարհըն ցոյց տուաւ նորանց՝ մինչև որ եկաւ կանգնեց էնտեղին վերայ , որտեղ որ երեսայն էր :

10 Երբոր էն աստղն տեսան , շտտ մեծ ուրախութենով ուրախացան :

11 Եւ երբոր տունն մտին՝ երեսայն տեսին իրան մայրմարիամու հետ , և երեսների վերայ ընկնելով երկիրպագուի արին նորան . և իրանց գանձերն (Խաղնիքըն) բաց արին՝ և ընծայ տուին նորան . ոսկի և կնդրուկ և զմուռս :

12 Եւ երազու մն հրաման առին՝ որ մինչև յետ չի դառնան հերոդէսի մօտ , և ուրիշ ճանապարհով գնացին իրանց աշխարհքն :

13 Եւ երբոր նորանք էն տեղից գնացին , ահա Տէրի հրեշտակն երազու մն երևեցաւ յովսէփին . և ասաց . վեր կաց՝ երեսայնդ . և իրան մօրըն՝ վեր կալ . և վախի՛ր եգիպտոս . և էն տեղ մնա՛ մինչև որ ասեմ քեզ . պատճառն որ՝ հերոդէսն ուզում է էդ երեսայնդ կորցնել :

14 Եւ նա յարուցեալ ան
զմանուկն և զմայր իւր գիշե-
րի . և գնաց յեգիպտոս . և
անդ էր մինչև յախաճան հե-
րովդի :

15 Զի լցցի ստացեալն 'ի
Տեառնէ 'ի ձեռն մարգարէին՝
որ ստէ . յեգիպտոսէ կոչեցից
զորդի իմ :

16 Յայնժամ իբրև ետես
հերովդէս թէ խաբեցաւ 'ի մո
գուց անտի , բարկացաւ յոյժ ,
և առաքեաց կոտորեաց զիմ
մանկունս՝ որ էին 'ի բեթ-
ղէհէմ և յիմ սահմանս նո-
րա՝ յերկեմենից և 'ի խոնարհ,
ըստ ժամանակին զոր ստու-
գեաց 'ի մոգուցն :

17 Յայնժամ կատարեցաւ
ստացեալն 'ի ձեռն երեմիայի
մարգարէի՝ որ ստէ :

18 Չայն գուժեաց 'ի հա-
մայ . ողբումն և լալումն՝ և
աշխարումն յոյժ . հաւքել
լայր զորդիս իւր՝ և ոչ կա-
մէր մտիթարիլ՝ զև ոչ էին :

19 Եւ 'ի վախճանենն հերով
դի . ահա հրեշտակ Տն 'ի
տեսլեան երևէր յովսէփայ յե
գիպտոս ,

20 Եւ ասէր՝ արի, ան՝ զմա

14 Եւ նա վերկացաւ երև
խային և իրան մօրըն վեր-
առաւ գիշերուքն և գնաց ե-
գիպտոս . և մինչև հերօղէսի
մեռնիլն էնտեղ էր :

15 Որ կատարվի տէրից ա-
վածըն մարգարէի ձեռովն . որ
ասումէ . եգիպտոսիցն կրկան-
չեմ իմ որդին :

16 Ին ժամանակն երբ որ
հերօղէս տեսաւ՝ թէ էն մո-
գերիցն խաբվեցաւ , շատ
բարկացաւ . և ուղարկեց՝ ա-
մէն երեսխայքըն որ բեթղէհ-
մումըն և նորա չորս կողմու-
մըն էին՝ երկու տարեկանիցն
և նորանից ցածըն կոտորեց ,
ինչպէս որ էն ժամանակըն ի-
մացելէր մոգերիցն :

17 Ին ժամանակն կատար-
վեցաւ երեմիայ մարգարէի
ձեռովն ասածն՝ որ ասումէ :

18 Լալայ ձայն լավեցաւ հը
ռամայի մէջն . սուգ և լաց
և շատ գուգուալ . հաւքել
իրան որդոց վերայ լայ էր լի-
նում՝ և չէր ուզում որ՝ մտի-
թարվի՝ ինչու որ նորանք չը-
կային :

19 Եւ երբ որ հերօղէս մե-
ռաւ , ահա Տէրի հրեշտակն
եգիպտոսի մէջ երազումն ե-
րևեցաւ յովսէփին :

20 Եւ ասաց . վերկաց երե-

նուկդ և զմայր իւր, և զնս
յերկիրն խորացելի. և զմե
ւան որ ինդրէին զանձն
մանկանդ. և զմե

21 Եւ նա յարուցեալ ան
զմանուկն և զմայր նորա
և եկն յերկիրն իլի:

22 Եւ իբրև լուսաւ թէ
արբեղատու թագաւորեաց հրէ
աստանի փոխանակ հերովդի
հօրն իւրոյ՝ երկեաւ երթալ
անդր. և հրաման առեալ ՚ի
տեսլեան. զնայ ՚ի կողմանս
զալիլէացուոց ասաց

23 Եւ եկեալ բնակեցաւ ՚ի
քաղաքին՝ որ կոչէրն սաղարէթ.
զի լցցի բան մարդարէիցն
թէ նապուքեյի կոչեսցի:

ԳԼ.

1 Յաւուրնս յայնոսիկ զայ
յովհաննէս մկրտիչ՝ քարոզել
յանապատին հրէաստանի,

2 Եւ տեսլ. ապաշխարե
ցէք՝ զի մերձեալ է արքայուի
երկնից:

3 Ձիտս է, վասն որոյ ա
սացաւ ՚ի ձեռն հոսայց մար
դարէի, որ ասէ. ձայն բար
բառոյ յանապատի. պատ
րաստ արարէք զձանապարհ

խայիդ և իրան մօրն վերկն
և զնս խորէլց երկիրն, սխա
ճառն որ մեռան նրեք՝ որ ու
զու մէկն երեխայիդ կեանքն առ
նել:

21 Եւ նա վերկացաւ երեկա
յին և իրան մօրն վերառաւ
և եկաւ խորացելացոց երկիրն:

22 Եւ երբ որ լսեց թէ ար
բեղայոս հրէաստանին (Չէհու
սասանի) վերայ թագաւոր
ըռթիւնն է անուամ իրան հայր
հերօղէսի տեղն, վախեցաւ
զնալ էնտեղ. և երազումն
հրաման առաւ զնայ զալի
լեայի կողմն:

23 Եւ եկաւ բնակվեցաւ
նազարէթ սասաք քաղաքումն
որ կատարվի մարգարէսերի
խօսքն թէ նազորեցի կրկոչի:
Գ.

1 Եւ որ երուամ յօհաննէս
մկրտիչն եկաւ որ հրէաստանի
անապատումն (Չէհուսասանի
չէօղումն) քարոզ տայ:

2 Եւ ասումէր. ապաշխա
րեցէք՝ որ երկնքի թագաւո
րու թիւնն մօտայել է:

3 Ինչու որ սա է՝ որ նորա
համար ասվել է եայլի մարգա
րէի ձեռովն, որ ասումէ. կան
չօղի ձայն անապատումն թէ
պատրաստ արէք Տերի ճա

Տեառն. և ուղի զարարէք
զըսելիս նորա : և ինքն յովհաննէս ու-
նէր հանդերձ ՚ի սուտոյ ուղ-
տու, և դօտի մաշկեղէն ընդ
մէջ լւր. և կերակուր նր էր
մարախ և մեղր վայրենի :

5 Յայնժամ ելանէին առ
նոսաննայն երուսաղէմացիք,
և ամհն հրէատարն. և ամենայն
կողմն յորդանանու :

6 Մկրտէին ՚ի նմանէ ՚ի
յորդանան գետ. և խոստովան
լինէին զմեղս իւրեանց :

7 Եւ տեսաւ զըսողումս
՚ի սաղուկեցւոյն և ՚ի փարի-
սեցւոյ եկեալս : ՚ի մկրտու-
թիւն նորա, ասէ ցնոսա.
Ծնունդք իժից՝ ո՞ր ցոյց ձեզ
փախչել ՚ի քարկուժ ենէն՝ որ
գալոյն է :

8 Արարէք այտուհետեւ պը-
տուղարժանի ապաշխարու-
թեան :

9 Եւ մի համարիցիք ասել
յանձինս՝ թէ ունիմք մեք
հայր զաբրահամ. ասեմ՝ ձեզ,
զի կարող է Աճ ՚ի քարանցս
յայտանէ յարուցանել որ-
դիս աբրահամու :

10 Ձի աւատիկ տապար առ
արմին ծառոյ դնի. ամ ծառ

նապարհըն, և շիտակ արէք
նորա գնալոյ ճանապարհըն :

4 Եւ յօհաննէս ինքն հա-
կուսա ունէր՝ ուղտու թըր-
դիցն և կաշուէ դօտիկ իրան
մէջքումն, և նորա կերա-
կուրն մարխ էր և վայրի մեղր :

5 Ին ժամանակն ամհն ել-
ըզուսղէմացիքն և ամհն հրէ-
ատարն (Ջոհաննայն) և ամհն
յորդանանի կողմերն նորա
մտա էին դնում :

6 Եւ նորանից մկրտու-
մէին յորդանանի մէջն և ի-
րանց մեղքերն խոստովանու-
մէին :

7 Եւ (ինքն) որ տեսաւ թէ
սաղուկեցին երիցն և փարիսե-
ցիներիցն շատերն եկելին որ
իրանից մկրտվին, ասաց նո-
րանց. «ձի զաւակներ՝ ո՞ր սո-
վորցրուց ձեզ փախչիլ են
քարկուժենիցն որ գալու է :

8 Հիմիկուց ետեւ ապաշ-
խարութեան արժանի պը-
տուղարէք :

9 Եւ զի կարծէք ասել ձեր
միջումն՝ թէ մենք աբրահամ
ունինք հայր. ասումեմ՝ ձեզ,
որ ամ կարող է էս քարերի-
ցըս որդիք դուրս հանել աբ-
րահամի համար :

10 Ինչու որ՝ հիմիկ կացինն
ծառերի արմատին (սէօսին)

որ ոչ առնիրց զպտուղ բարի,
հատանի և ՚ի հուր արկանի:

11 Ես մկրտեմ զձեզ ջրով
յապաշխարութիւն • բայց որ
զինին իմ գայ՝ հօրագոյն է
քան զիս • և ես չեմ բաւա-
կան բառնալ զկօշիկս նորա •
նա մկրտեսցէ զձեզ ՚ի Հօգին
սուրբ և ՚ի հուր :

12 Որոյ հեծանոցն ՚ի ձեռին
իւրում • և սրբեսցէ զկալ
իւր • և ժողովեսցէ զցորեանն
՚ի շտեմարանս իւր • և զյարգն
այրեսցէ անշէջ հրով :

13 Յայնժամ զայ Յիսուս ՚ի
գալիլեէ ՚ի յորդանան առ
յովհաննէս՝ մկրտիլ ՚ի նմանէ :

14 Եւ յովհաննէս արգելու
ղնա՝ և ասէ • ինձ պիտոյ է ՚ի
քէն մկրտիլ՝ և դու առ ի՞նչ
գաս :

15 Պատասխանի ետ Յս և
ասէ ցնա՝ թո՛յլ տուր այժմ •
զի այսպէս վայելէ մեզ լնուլ
զամենայն արդարութի • և ա-
պա թոյլ ետ նմա •

16 Եւ իբրև մկրտեցաւ Յս,
ել վալվաղակի ՚ի ջրոյ ան-
տի • և ահա բացան նմա եր-
կինք • և ետես զՀօգին Ա

մօտ դրած է • ամէն ծառ որ
բարի պտուղ չի բերէ, կը-
կտրվի և կրակի մէջն կը քցվի :

11 Ես ջրով եմ մկրտում
ձեզ՝ ապաշխարութեան հա-
մար • բայց նա՝ որ ինձանից
ետև կը գայ, ինձանից զօրա-
ւոր է • և ես արժանի չեմ նո-
րա կօշիկներն վերառնել •
նա սուրբ հոգով և կրակով
կը մկրտէ ձեզ :

12 Որ հոսելին իրան ձեռին
է, և իրան կալըն կը սրբէ և
ցորենըն կը հաւաքէ իրան ամ-
բարըն, և տարմանըն անան-
ցընելի կրակով կայրէ :

13 Ին ժամանակն Յս գա-
լիլեայիցըն եկաւ յորդանան
յօհաննէսի մօտն՝ որ նորա-
նից մկրտվի :

14 Եւ յօհաննէսն արգելեց
նորան և ասաց • ինձ պէտք է
որ քեզանից մկրտվիմ՝ և դու
ի՞նչ մօտ ես գալիս :

15 Յս պատասխան տուաւ
և ասաց նորան • Թո՛յլ տուր
հիմիկ • ինչու որ էսպէս կը վա-
յելէ մեզ՝ որ ամէն արդարու-
թիւնըն կատարենք • և յետոյ
թոյլ տուաւ նորան :

16 Եւ երբ որ մկրտվեցաւ
Յս, շուտով ջրիցն դուրս
եկաւ • և ահա (հրէ՛ս) երկինքն
բացվաւ նորա համար • և ար

զի իջանէր եբրեւ զաղաւնի •
և գայր 'ի վր' նր' :

17 Եւ ահա ձայն յերկնից՝
որ ասէր • զան է Որդի իմ սի-
րելի • ընդ որ հաճեցայ :

ԳԼ • Դ •

1 Յայնժամ վարեցաւ Յս
յանապատ 'ի Հոգւոյն փոր-
ձիլ 'ի սատանայէ :

2 Եւ սրահեալ զքառասուն
տիւ և զքառասուն գիշեր՝ ա-
պայ քաղցեալ :

3 Եւ մատուցեալ փորձիչն՝
տսէ ցնա • եթէ Որդի ես ԱՅ
տոսն , զի քարինքս այսօրիկ
հաց լինիցին :

4 Նա պատասխանի ետ՝ և
ասէ • գրեալ է՝ թէ ոչ հացիւ
միայն կեցցէ մարդ • այլ ամ
բանիւ որ ելանէ 'ի բերանոյ
Աստուծոյ :

5 Յայնժամ առեալ ածէ
զնա սատանայ 'ի քաղաքն քր •
և կացուցանէ զնա 'ի վերայ
աշտարակի տաճարին :

6 Եւ տսէ ցնա • եթէ Որ-
դի ես ԱՅ արկ զքեզ աստի
'ի վայր • զի գրեալ է • թէ
հրեշտակայ իւրոց պատուի-
րեալ է վր քո • և 'ի վր ձե-

հորին տեսաւ որ վերէրգալիս
աղաւնուպէս՝ և գալիս էր
նորա վերայ :

17 Եւ ահա ձայն էլաւ երկն-
քիցն որ ասումէր՝ Էդ է իմ
սիրելի որդին՝ որ զորան հա-
ւանել եմ :

1 Ինչ ժամանակն Յս հո-
գովն տարվաւ անապատ տեղ՝
որ սատանայիցն փորձվի :

2 Եւ քառասուն օր և քա-
ռասուն գիշեր ծոմ կենալուց
ետև՝ սովեց :

3 Եւ փորձիչն եկաւ նորան
ասաց • թէ որ դու ԱՅ որդին
ես, ասո՞ որ էս քարերս հաց
լինին :

4 Նա պատասխան տուաւ
և ասաց • գրված է որ՝ չէ թէ
մէնակ հացով կապրի մարդ ,
բայց ամէն խօսքովն՝ որ ասյ
բերանիցն դուրս է գալիս :

5 Ինչ ժամանակն սատա-
նայն նորան առաւ տարաւ սք
քաղաքն , և տաճարի աշտա-
րակին (չուլայն) վերայ կանգ-
նացրուց :

6 Եւ նորան ասաց • թէ որ
ասյ որդին ես • էստեղից քեզ
վէր քցելը՝ ինչու որ գրված է՝
թէ իրան հրեշտակներին հրա-
ման է տուել քեզ համար՝ և

ուսց բարձրեն զքեզ՝ զի մի երբէք հարցես զքարե զոան քո :

7 Ասէ ցնա դարձեալ Յս. զրեալ է՝ թէ ոչ փորձեոցես զՏԵՐ ԱՃ քո :

8 Դարձեալ առնու ածէ զնա սատանայ ՚ի լեառն մի բարձր յոյժ. և ցուցանէ նմա դամենայն թագաւորութիւնս աշխարհի, և զվառս նոցա,

9 Եւ ասէ ցնա. զայս ամբքեզ տաց՝ եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ :

10 Յայնժամ ասէ ցնա Յիսուս՝ երթ յետս իմ սատանայ. զի զրեալ է. Տեառն Աստուծոյ քու՛մ երկիրպագցես՝ և զնա միայն պաշտեսցես :

11 Ապա եթող զնա սատանայ՝ և ահա հրեշտակք մատենն՝ և պաշտէին զնա :

12 Եւ իբրև լուաւ Յս՝ եթէ յովհաննէս մատնեցաւ մեկնեցաւ գնաց ՚ի դալիլեա :

13 Եւ թողեալ զնազարէթ, եկն բնակեցաւ ՚ի կափառնառւմ ՚ի ծովեզերին. ՚ի սահմանն զաբուղովնի և նեփթաղիմայ :

ձեռներին վերայ կառնեն քեզ՝ որ խղի մին ժամանակ քո ուտող քարի չի դիպցնես :

7 Աինէլ Յս նորան տասց. գրված է՝ թէ չի՛ փորձես քո ՏԵՐ ամբքն :

8 Սատանայն մինէլ առաւ նորան (և) տարաւ մին շատ բարձր ստրի վերայ՝ և ցոյց տուաւ նորան ամէն աշխարհքի թագաւորութիւններն և նորանց փառքն :

9 Եւ նորան տասց. էս ամէնքս քեզ կըտամ՝ թէ որ երեսիդ վերայ ընկնելով երկրպագութիւն անես ինձ :

10 Ին՝ ժամանակն Յս նորան տաց. դէ՛ն գնա ինձանից սատանայ՝ ինչուօր զրված է՝ թէ քո ահըր Աստուծոյդ պէտքէ երկրպագութիւն անես՝ և մէնակ նորան պաշտես :

11 Յետոյ սատանայն թողեց նորան. և ահա հրեշտակներն մօտեկին և ծառայութիւն էին անում նորան :

12 Եւ երբոր Յս լսեց՝ թէ յօհաննէսն մատնըվեցաւ, ինքն հեռացաւ գնաց գալիլեա :

13 Եւ նազարէթն թողեց՝ եկաւ բնակվեցաւ կափառնա յուսի մէջն ծովի եզրին (չլուսն) մօտ զաբուղովնի և նեփթաղիմի երկրուսն :

44 Չի լցցի բանն՝ որ ասալ
յաւ ՚ի ձեռն ետպեայ մտրգալ
բէի :

45 Երկիր զաբուղոնի՝ և
երկիր նեփթաղիմայ՝ ճա
նապարհ ծովու՝ յայնկայս յոր
զանանու . զալիլեայ հեթա
նոսայ :

46 Ժողովուրդն որ նստէր
ի խաւարի՝ ետես լոյս մեծ .
և որոց նստէին յաշխարհին և
ի ստուերս մահու՝ լոյս ծա
ղեաց կոցա :

47 Յայնմ հետէ սկսաւ քա
լողել Յս և ասել . ապաշխա
րեցէք՝ զի մերձեալ է արքա
յուժիւն երկնից :

48 Մինչեւ զգնայր Յս
ընդ եղբ ծովուն զալիլեաց
ւոյ՝ ետես երկուս եղբարս
զսմովն զկոչեցին պետրոս . և
զանդրէաս եղբայր նր . ար
կեալ զուռկան ՚ի ծով քանկի
ձկնորսք էին :

49 Եւ ասէ յնոսա . եկայք
զինի իմ . և արարից զձեզ
որսորդս մարդկան :

20 Եւ նոցա թողեալ վաղ
վաղակի զգործիսն՝ գնացին
զհետ նր :

21 Եւ մատուցեալ անտի
յառաջ՝ ետես այլ երկուս եղ

44 Որ կատարվի էն խօսքն
որ ետայի մտրգարէի՝ ձեռովն
ասված է (ԹԷ) .

45 Չաբուղոնի երկիրն և
նեփթաղիմի երկիրըն՝ ծովու
ճանապարհն՝ յորդանանի էն
կողմի, հեթանոսաց զալիլեան .
քանայս զկոցայս :

46 Ժողովուրդն որ խաւա
րի մէջն նստած էր, մեծ լոյս
ատեսու . և լոյս ծաղեց նորանյ
որ մահու երկրօւմն և շուա
բումըն նստած էին :


47 Նրանից ետև Յս սկսեց
քարոզել և ասել . ապաշխա
րեցէք՝ որ երկնքի թագաւու
րուժիւնն մօտայել է :

48 Երբ որ Յս գալիլեացոց
ծովի եղբուքն (ղրգրուհն) ման
էր գալիս, տեսաւ երկու եղ
բարք՝ սիմոնն որ պետրոս է
կոչված, և անդրէասըն նորա
եղբայրըն . որ ուռկանըն (Քօ
ւրն) քցելէին ծովն . ինչու որ
ձուկըն բռնող էին :

49 Եւ նորանց ասաց . իմ
ետևէս եկէք, և ձեզ մարդ
կանց որսող կանեմ :

20 Նորանք էլ շուտով ի
րանց գործիքներըն թողին և
նորա ետևէն գնացին :

21 Եւ հետեղից որ առաջ
գնաց՝ երկու ուրիշ եղբարք



բարս. զյակովըոս զեբեդեայ՝
և զյովհաննէս զեղբայր նորա
ի նաւի. զեբեդեաւ հանդերձ
հարբն իւրեանց. մինչդեռ
կազմէին զուսկանս իւրեանց.
և կոչեաց զնոսա :

22 Նոցա թողել վաղվաղա-
կի զնաւն և զհայրն իւրեանց՝
գնացին զհետ նորա :

23 Եւ շրջէր Յսւ ընդ ամ
կողմն գալիլեացոց . ուսու-
ցանէր ՚ի ժողովուրդս նոցա՝
և քարոզէր զաւետարանն ար-
քայութե՛ն՝ և բժշկէր զամ
հիւանդութիւս, և զամ ախտս
ի ժողովրդեան :

24 Եւ ել լուր նորա ընդ
ամենայն երկիրն ասորոց . և
մատուցին առ նա զամ հի-
ւանդս՝ որ նեղեալ էին ՚ի
պէսպէս ցաւս և ՚ի տանջանս.
և զգիւհահարս՝ և զլուս-
նոոս . և զանդամալոյծս. և
բժշկեաց զնոսա :

25 Եւ երթային զհետ նր
ժողովուրդք բազումք. ՚ի գա-
լիլեէ և ՚ի դեկապօլեայ,
և յեֆմէ, և ՚ի հրեսստանէ .
և յայնկոցս յորդանանու
և բժշկեաց զնոսա :

տեսաւ, յախօբոս զեբեդեա-
նըն՝ և նորա եղբայր յօհան-
նէսըն՝ որ նաւի մէջն իրանց
հայր զեբեդեոսի հետ իրանց
ուսկաններն. (Խօւեբըն) շի-
նումէին, և նորանց կանչեց :

22 Նորանք էլ շուտով նա-
ւըն և իրանց հայրըն թողին՝
և նորա ետեւէն գնացին :

23 Եւ Յսւ մանկերգալիւս
գալիլեայի ամէն կողմերուսն.
նորանց ժողովարանների մէջն
սովորցնումէր՝ և արքայուեա-
ւետարանըն քարոզումէր, և
ամէն ժողովբոգի մէջ էլած
հիւանդութիւններն և ցա-
ւերըն բժշկումէր :

24 Եւ նորա անունն յայտ-
նի էլաւ տարիների ամէն երկ-
րումըն, և ամէն հիւանդնե-
րըն որ կերպ կերպ ցաւերով
և չարչարանքով տանջված է-
ին, նորա մօտ բերին և զի-
ւահարներըն, և լուսնոտներն
և անդամալուծներըն . և նո-
րանց բժշկեց :

25 Եւ շատ ժողովուրդներ
էին գնում նորա ետեւէն գալի-
լեայիցն և դեկապօլիսիցն՝ և
եֆմիցն և հրեսստանիցն (Զհո-
ւսանիցն), և յորդանանի
էն կողմիցն և նրնց բժշկեց :

ԳԼ . Ե .

1 Եւ տեսեալ զԺողո՜վուրդընս՛ն՝ ել ՚ի լեառն . և իբրև նստաւ անդ՝ մատեան առ նա աշակերտքն նորա :

2 Եւ բայեալ զբերան իւր՝ ուսուցանէր զնա՛ն՝ և աւսէր :

3 Երանի՛ աղքատաց հողուով՝ զինոցա է արբայուծիւն երկնից :

4 Երանի՛ սղաւորաց՝ զինոքա մխիթարեցին :

5 Երանի՛ հեղոց՝ զինոքա ժառանգեսցեն զերկիր :

6 Երանի՛ որ քաղցեալ և ծարաւի իցեն արդարուծեան՝ զինոքա յազեսցին :

7 Երանի՛ ողորմածաց՝ զինոքա ողորմուի զտցեն :

8 Երանի՛ այնոցիկ՝ որ ոք են սրաիւք . զինոքա զԼ՛ծ տեսցեն :

9 Երանի՛ խաղաղարարաց՝ զինոքա որդիք Լ՛Ծ կոչեսցին :

10 Երանի՛ որ հալածեալ իցեն վասն արդարուե՛ր զինոցա է արբայուի երկնից :

1 Եւ ժողովուրդներն որ տեսաւ՝ էլաւ սարի վերայ . և երբոր էնտեղ նստեց , նորա աշակերտներն եկին նորա մօտ :

2 Եւ իրան բերանըն բացարաւ , նորանց սովորցնումէր՝ և ասում :

3 Երանի՛ հողով աղքատներին՝ որ նորանցն է երկնքի արբայուծիւնն :

4 Երանի՛ սղաւորներին՝ որ նորանք պիտի մխիթարվին :

5 Երանի՛ հեղահողիններին՝ որ նորանք պիտի ժառանգեն երկիրըն :

6 Երանի՛ նորանց՝ որ սոված և ծարաւ են արդարուե՛ր համար՝ որ նորանք պիտի կըշտանան :

7 Երանի՛ ողորմածներին որ նորանք պիտի ողորմուծիւն զանեն :

8 Երանի՛ նորանց՝ որ սըրտով սուրբ են , որ նորանք պիտի տեսնեն Լ՛ստուծոցն :

9 Երանի՛ խաղաղուի աւօղներին՝ որ նորանք պիտի Լ՛ստուծոց որդիք կոչվին .

10 Երանի՛ նորանց՝ որ արդարուե՛ր համար հալածված են՝ որ նորանցն է երկնքի արբայուծիւնն :

477

8525-52



11 Երանի՛ է՛ ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ՝ և հալածեսցեն . և ասիցեն զամբան չար զձէնջ սուտ վասն իմ :

12 Յնծայէք և ուրախ լերուք . զի վարձք ձեր բազումք են յերկինս . զի այսպէս հալածեցին զմարդարէսն , որ յառաջ քան զձեզ էին :

13 Դուք էք աչ երկրի . եթէ աղն անհամբ՝ ի՞նչ յաղցի . ոչ իմիք աղուից այնուհետև . բայց եթէ ընկե՛նուարտաքս՝ և կոխան լինել ՚ի մարդկանէ :

14 Դուք էք լոյս աշխարհի . ոչ կարէ քաղաք թաքել՝ որ ՚ի վերայ լերին կայցէ :

15 Եւ ոչ լուցանեն ճրագ՝ և դենն ընդ դրուանաւ . այլ ՚ի վր աշտանակի՝ և լոյս տայ ամին՝ որ ՚ի տանն իցեն :

16 Այնպէս լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան . որպէս զի տեսցեն զդործս ձեր բարիս՝ և վառաւորեսցեն ըզհայր ձեր՝ որ յերկինս է :

17 Մի՛ համարիք եթէ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս . ոչ եկի լուծանել՝ այլ ընուլ :

11 Երանի՛ է՛ ձեզ՝ երբ որ նախատինք կրտան և կըհալածեն ձեզ , և իմ պատճառովս ամէն վատ բան սուտ տեղն կասեն ձեզ վերայ :

12 Յնծայէք և ուրախ կայէք՝ որ ձեր վարձքն շատ են երկնքումս . ինչու որ՝ հսպէս հալածեցին մարդարէներին էլ որ ձեզանից առաջ կային :

13 Դուք երկրի աղն էք . թէ որ աղն անհամ լինի , ի՞նչով պիտի աղանվի . նրանից ետև իսկի մին բանի համար զործածելի չէ՛ , միայն թէ դուրս քցվի և մարդկանց ոտի տակն կոխվի :

14 Դուք աշխարհքի լոյսն էք՝ էն քաղաքն որ սարի վր կայ կարող չէ թաքուն մնալ :

15 Եւ ճրագը չեն վառիլ և տաշտի տակ դնիլ , բայց ճրագակալի վերայ՝ և լոյս կըտայ ամէնին որ տան մէջն են :

16 Այնպէս էլ ձեր լոյսըն պէտքէ լուսաւորէ մարդկանց առաջին , որ ձեր բարի գործքըն տեսնեն , և վառաւորեն ձեր հայրըն որ երկնքումս է :

17 Չի՛ կարծէք թէ ես եկել եմ՝ որ օրէնքըն կամ մարգարէներըն քանդեմ , չեմ եկել քանդելոյ , բայց կատարելոյ համար :



18 Ամէն ասեմ՝ ձեզ՝ մինչև անցյցեն երկինք և երկիր՝ յովս մի, որ նշանախեց մի է, ոչ անցյցէ յօրինացն և ՚ի մարգարէից՝ մինչև ամ եղիցի :

19 Որ որ լուծցէ մի ինչ ՚ի պատուիրանացս յայսցանէ ՚ի փոքունց, և ուսուցցէ այնպէս զմարդիկ, փոքր կոչեսցի յարքայուէ երկնից • իսկ որ արասցէ, և ուսուցցէ՝ նա մեծ կոչեսցի յարքայուէ երկնից :

20 Բայց ասեմ՝ ձեզ • զի եթէ ոչ առաւելուցու արդարուի ձեր առաւելքան զպարծն և զխարխտեցուց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից :

21 Լուարուք՝ զի ասացաւ առաջնօրն • թէ մի սպանաներ • զի որ սպանանիցէ՝ պարտական լիցի դատաստանի :

22 Այլ ես ասեմ՝ ձեզ • եթէ ամ որ բարկանայ եղբօր իւրում տարապարտուց՝ պարտաւոր լիցի դատաստանի • և որ ասիցէ ցեղբայր իւր յիմար, պարտաւոր լիցի ասեմի • և որ ասիցէ ցեղբայր իւր մորոս, պարտաւոր լիցի ՚ի գեհեն հրոյն :

18 ՂԶմարիան ասումեմ՝ ձեզ՝ որ մինչև երկինքն և երկիրս անցկենան, օրէնքիցն և մարգարէներիցն մին կէտ՝ որ պղպտիկ նշանակիր է, չի անցկենալ մինչև ամէնն կատարվի :

19 Ով որ էս փոքր պատուիրանքներիցս մինըն քանդէ, և մարդկանց էնպէս սովորցնէ • նա փոքր կըկոչվի երկնքի արքայութենուս • բայց նա՝ որ կանէ և կըսովորցնէ՝ մեծ կըկոչվի երկնքի արքայութենումըն :

20 Միայն թէ ասումեմ՝ ձեզ՝ թէ որ ձեր արդարուին չի աւելանայ աւելի քան կարդացօրներինն և վարխեցիներինն, չէք մտնիլ երկնքի արքայութիւն :

21 Լսելէք՝ որ առաջին մարդկանցն ասվել է՝ թէ մի սպաներ • ինչու որ ով որ կըսպանէ, պարտական կըլինի դատաստանին :

22 Բայց ես ասումեմ՝ ձեզ՝ թէ ովոր զուր տեղն կըբարկանայ իրան եղբօր վերայ, պարտական կըլինի դատաստանին • և ովոր իրան եղբօրն կասէ՝ յիմար, պարտական կըլինի մեծ դատաստանին • և ովոր իրան եղբօրն կասէ՝ մորոս, պարտական կըլինի դժոխքի կրակին :

23 Եթէ մատուցանիցես զպատարագ քո 'ի վերայ սեղանոյ . և անդ յիշիցես, եթէ եղբայր քո ունիցի ինչ խէթ զքէն,

24 Թող պատարագն քո առաջի սեղանոյն . և երթ նախ հաշտեաց ընդ եղբօր քում . և ապա եկեալ մատուցիր զպատարագն քո :

25 Լեր իրաւատոհմ ընդ ոսոխի քում վաղադոյն . մինչդեռ իցես ընդ նմա 'ի ճանապարհի . գուցէ մատնիցէ զքեզ ոսոխն դատաւորի . և դատաւորն դահճի . և արկանիցիս 'ի բանտ :

26 Ամէն ասեմ քեզ . ոչ ելանիցես անտի , մինչև հատուցանիցես զյեարին նաքարակիտն :

27 Լուարուք՝ զի ասացաւ մի՛ շնար :

28 Բայց ես ասեմ ձեզ . թէ ամ որ հայր 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ նմա՝ անդէն շնացաւ ընդ նմա 'ի սրտի իւրում :

29 Եթէ ակն քո աջ գայթաղեցուցանէ զքեզ՝ խլեա՛ս զնա . և ընկեա՛ս 'ի քէն . զի

23 Ուրեմն թէ որ սեղանի վերայ քո պատարագը մատուցանես՝ և էնտեղ միտքդ բերես՝ թէ քո եղբայրդ քեզանից մին խռովութիւն ունի,

24 Քո պատարագը սեղանի առաջին թող . և գնաս առաջ հաշտվի՛ր քո եղբօր հետ . և յետոյ եկ քո պատարագդ արա՛ :

25 Քո հակառակ ոսոխի հետ շուտով քո բանըդ շիտակ արա՛ . քանի որ նորա հետ ճանապարհի վերայ ես , որ չըլինի թէ ոսոխդ քեզ դատաւորին մատնէ , և դատաւորն դահճին (ճէլտապի՛ն) և բանտն (դէնփանն) քցվիս :

26 Ղշմարիտըն ասուեմ քեզ՝ դուրս չես գալ էնտեղիւյրն՝ մինչև վերջին դանկըն էլ չի տաս :

27 Լսելէք՝ որ ասվելէ՝ թէ շնութիւն չի՛ անես :

28 Բայց ես ասուեմ ձեզ՝ թէ ամէն ո՞վ որ մին կնկան վերայ մտիկ տայ նորան ցանկանալոյ համար , նա իսկոյն շընացաւ նորա հետ իրան սըլտի մէջն :

29 Թէ որ քո աջի աչքդ գայթաղուցանէ քեզ , հանի՛ր նորան և դուրս քցիր քեղա-

լու է քեզ՝ եթէ մի յանդա-
մոց քոց կորիցէ . և մի ան-
մարմինդ քո անկանիցի՝ ՚ի գե-
հեն :

30 Եւ եթէ աջ ձեռն քո
զայժաղէցուցանէ զքեզ ,
հատ զնա՝ և ընկեո՞ ՚ի քէն .
զի լու է քեզ՝ եթէ մի յան-
դամոց քոց կորիցէ . և մի ա-
մենայն մարմինդ քո արկանի-
ցի ՚ի գեհեն :

31 Ապաքէն ստացաւ՝ թէ
որ արձակիցէ զկին իւր՝ տացէ
նմա զարձակմանն :

32 Բայց ես ասեմ՝ ձեզ . ե-
թէ ամենայն որ արձակէ զկին
իւր առանց բանի պոռնկու-
թեան՝ նա տայ նմա շնալ .
և որ զարձակեալն առնէ՝
շնայ :

33 Գարձեալ լուարուք . զի
ստացաւ առաջնոցն՝ մի երդ-
նուցուս սուտ . բայց հատուս-
ցես Տ՞ն զերդմուսս քո :

34 Այլ ես ասեմ՝ ձեզ՝ ա-
մենև ին մի երդնուլ . մի յերկի-
նըս՝ զի աթոռ է Աստուծոյ :

35 Եւ մի յերկիր՝ զի պատ-
ուանդան է ոտից նի՞ . և մի
յեհմ . զի քաղաք է մեծի ար-
բայի :

նից . ինչուոր՝ լու է քեզ հա-
մար , թէ քո անդամներիցդ
մինն կորչի՝ և քո ամէն մար-
մինդ չի քցվի դժոխքն :

30 Եւ թէ որ քո աջի ձեռդ
զայժաղէցանէ քեզ , կարի՛ր
նորան՝ և դուրս քցի՛ր քեզա-
նից . ինչուոր՝ լու է քեզ հա-
մար՝ թէ քո անդամներիցդ
մինն կորչի՝ և քո ամէն մար-
մինդ չի քցվի դժոխքն :

31 Եւսէլ ասվելէ՝ թէ ով
որ իրան կինըն դուրս անէ ,
թող դուրս անելոյ թուղթ
տայ նորան :

32 Բայց ես ստուժեմ՝ ձեզ՝
թէ ով որ իրան կինըն դուրս
անէ առանց պոռնկութեան
պատճառի , նորա շնութեան
պատճառն ինքն կըլինի . և
ով որ էն դուրս արածըն առ-
նէ , շնութիւն կըդործէ :

33 Մինէլ լսելէք՝ որ աս-
վելէ առաջին մարդկանցն ,
թէ սուտ երդում չի՛ ուսես ,
բայց Տէրին արած երդմուն-
քըդ վճարի՛ր :

34 Բայց ես ստուժեմ՝ ձեզ՝
իսկի երդում մի ուսէք . ոչ
երկնքովն՝ որ անաթոռն է :

35 Եւ ոչ երկրովն՝ որ նո-
րա ոտն դնելոյ տեղն է . և
ոչ երուսաղէմովն՝ որ մեծ
թաղաւորի քաղաքն է :

36 Եւ մի՛ ՚ի գլուխ, քո երդե-
նուցուս՝ զի ոչ կարես մազ
մի սպիտակ առնել կամ թուլս :

37 Այլ եղիցի ձեր բան՝
այոն՝ այո՛, և ոչն՝ ոչ . զի ա-
ւելին բան զայն ՚ի չարէն է :

38 Լուարուք՝ զի ասացաւ .
ակն ընդ ական . և ատամն ընդ
ատաման :

39 Այլ ես ասեմ ձեզ՝ մի
կալ հակառակ չարին . այլ ե-
թէ ոք ածիցէ ապտակ յաջ
ծնօտ քո՝ դարձն նմա և ըզ
միւսն :

40 Եւ որ կամիցի ոք դատել
և առնուլ զշապիկս քո , թող
՚ի նա և զբաճկոն քո :

41 Եւ որ տարապարհակ վա-
րկցէ զքեզ մղոն մի , երթ
ընդ նմա և երկուս :

42 Որում խնդրէ ՚ի քէն՝
տուր . և որ կամի փոխ առնուլ
՚ի քէն՝ մի դարձուցանէր զե-
րեսս :

43 Լուարուք ապաքէն՝ զի
ասացաւ . սիրեսցես զընկեր
քո՝ և ատեսցես զթշնամին քո :

44 Այլ ես ասեմ ձեզ սի-
րեցէք զթշնամին ձեր . բարի՛
արարէք ատելեաց ձերոց , և

36 Եւ ոչ քո գլխովք եր-
դում կեր՝ որ կարող չես մին
մազ սպիտակ անել կամ թուլս :

37 Բայց ձեր խօսքն թող
լինի, հան՝ հա՛, և չէն՝ չէ՛ . և
նորանից ավելին չարիցն է :

38 Լսելէք՝ որ ասվելէ՝ թէ
աչքն աչքին տեղ՝ և ատամն՝
ատամին տեղ :

39 Բայց ես ասուեմ ձեզ՝
չարին հակառակ չի՛ կենաք .
բայց թէ որ մինն ապտակ
(*իւլէ) կրտայ քո աջ երեսիդ,
մէկէլըն էլ նորան դէմ արա :

40 Եւ ով որ կուզէ քեզ
հետ կուլ անել և քո շա-
պիկըդ առնել , քո կապան
էլ թող նորա մօտ :

41 Եւ ով որ զուր տեղն
քեզ բռնած մին մղոն (աղած)
ճանապարհ կըքչէ, նորա հետ
երկուսն էլ դնո՛ս :

42 Ով որ քեզանից բան
ուզէ՝ տուր . և ով որ կամե-
նայ քեզանից փոխ առնել,
երեսըդ յետ մի դարձնելը նո-
րանից :

43 Մինէլ լսելէք՝ որ աս-
վելէ՝ թէ քո ընկերըդ սիրի՛ր
և քո թշնամին ատի՛ր :

44 Բայց ես ասուեմ ձեզ՝
սիրեցէք ձեր թշնամիներն .
օրհնեցէք ձեր անիծողներին .

աղօթօս ՚ի վերայ այնոցիկ՝ որ
լլկենն զձեզ և հալածեն :

45 Ձի եղիջիք որդիք հօր
ձերոյ՝ որ յերկինսն է . զի զարե-
գակն իւր ծաղէ ՚ի վերայ չա-
րաց և բարեաց . և ածէ անձ-
րև ՚ի վերայ արդարոց և մեղա-
ւորաց :

46 Ձի եթէ սիրիցէք զայ-
նոսիկ, որք սիրեն զձեզ, զինչ
վարձք իցեն . ոչ ասպքէն և
մաքսաւորք զնոցն գործեն :

47 Եւ եթէ տայցէք սիայն
ողջոյն բարեկամաց ձերոց՝
զինչ աւելի առնէք . ոչ ա-
սպքէն մաքսաւորք և մեղա-
ւորք զնոցն գործեն :

48 Արդ՝ եղերուք դուք կա-
տարեալք . որպէս և հայրն
ձեր երկնաւոր կատարեալէ :

ԳԼ • Զ •

1 Օգոյշ լերուք ողոր-
մութե ձերում՝ մի առնել ա-
ռաջի մարդկան . ուր թէ ՚ի
ցոյց ինչ նոյն գուցէ և վարձս
ոչ ընդունիցիք ՚ի հօրէն ձեր-
մէ՝ որ յերկինսն է :

2 Այլ յորժամ առնիցես

բարի՝ արէք ձեզ ատօղներին՝
և աղօթք արէք նորանց վե-
րայ, որ ձեզ կըսարչարեն և
կըհալածեն :

45 Որ որդիք լինիք ձեր
հօրն՝ որ երկնքումն է . որ նա
իրան արեգակըն ծագումէ չար
և բարի մարդկանց վերայ, և
անձրև է ածում արդարնե-
րին և մեղաւորներին վերայ :

46 Բայց թէ որ մէնակնո-
րանց սիրէք որ ձեզ սիրու-
մեն, էլ լինչ վարձք կըլինի
ձեզ . չէ՞ որ մաքսաւորներն
(Կիւսրուս չինէրն) էլ էնպէս
են անում :

47 Եւ թէ որ մէնակ ձեր
բարեկամներին բարև տաք .
լինչ աւելի բան կանէք . չէ՞
որ մաքսաւորներն (Կիւսրուս
չինէրն) և մեղաւորներն էլ էն-
պէս են անում :

48 Ուրեմն դուք կատարեալ
էլէք՝ ինչպէս որ ձեր երկնա-
ւոր հայրն կատարեալէ :

1 Օգոյշ կացէք՝ ձեր ո-
ղորմութեան՝ որ մարդկանց
առաջին չի անէք, իբր նո-
րանց ցոյց տալը համար .
որ չլինի թէ վարձք չառնէք
ձեր հօրիցն որ երկնքումն է :

2 Բայց երբ որ ողորմուի

զողորմութի, մի հարկաներ փող առաջի քո՝ որպէս կեղծաւորքն առնեն ՚ի ժողովուրդս և ՚ի հրապարակս, որպէս զի փառաւորեսցին ՚ի մարդկանէ: Ամէն ասեմ՝ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա:

3 Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես, մի զի տասցէ ձախ քո՝ զինչ գործէ աջ քո:

4 Որպէս զի եղիցի ողորմութիւն քո ՚ի ծածուկ, և հայրն քո՝ որ տեսանէ ՚ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս:

5 Եւ յորժամ յաղօթս կայցէս, մի լինիցիս որպէս կեղծաւորքն՝ զի սիրեն ՚ի ժողովուրդս և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս, որպէս զի երեւեսցին մարդկան: Ամէն ասեմ՝ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա:

6 Այլ դու յորժամ կայցես յաղօթս, մնտ ՚ի սենեակ քո, և փակես զուրս քո, և կանց յաղօթս առ հայր քո ՚ի ծածուկ, և հայրն քո, որ տեսանէ ՚ի ծածուկ՝ հատուցէ քեզ յայտնապէս:

անես, փող չի՛ տաս փչել քո առաջիդ. ինչպէս որ կեղծաւորներն անումեն ժողովարաններն մէջն և փողոյնբուռն՝ որ մարդկանցից փառաւորվիս: Ղշմարտարն ասումեմ՝ ձեզ՝ որ նորանց վարձքըն մէնակ էն է:

3 Բայց երբոր դու ողորմութիւն անես, թող չի մանայ քո ձախ ձեռք՝ թէ ինչ է գործուիմ աջդ:

4 Որ էսպէս քո ողորմութիւնն ծածուկ լինի, և քո հայրն որ ծածուկն տեսնումէ, յայտնի հատուցումըն տայ քեզ:

5 Եւ երբոր աղօթք անես, չի՛ լինիս կեղծաւորներն պէս. ինչուոր՝ նորանք սիրումեն ժողովարաններն մէջն և փողոյներն գլխումն աղօթք անել, որ մարդկանց երևին: Ղշմարտարն ասումեմ՝ ձեզ, որ նորանց վարձքն մէնակ էն է:

6 Բայց դու ինչ ժամանակ որ աղօթք անես, մտի՛ր քո խուցդ՝ և քո դրոշները փակի՛ր, և ծածուկ աղօթք արա՛ դէպի քո հայրդ, և քո հայրդ որ ծածուկըն տեսնողէ՝ յայտնի հատուցումըն կրտայ քեզ:

7 Եւ յորժամ կայցէք յա-
ղօթս, մի շատախօսք լինիք
իբրև զհեթանոսն. զի հա-
մարին թէ ՚ի բազում խօսից
իւրեանց լսելի լինիցին:

8 Արդ՝ մի նմանիցէք նո-
ցս. զի դիտէ հայրն ձեր. զի՛նչ
պիտոց է ձեզ՝ մինչև ձեր
խնդրեալ ինչ իցէ ՚ի նմանէ:

9 Եւ արդ՝ այսպէս կա-
ցէք դուք յաղօթս. հայր մեր՝
որ յերկինս ես. քբ եղիցի ա-
նուն քո:

10 Եկեսցէ արքայութիւնքո.
եղիցին կամք քո՝ որպէս յեր-
կինս և յերկրի:

11 Ձ հաց մեր հանապաւ-
ղորդ տնւր մեզ պսօր:

12 Եւ թող մեզ զպարտիս
մեր՝ ուր և մեք թողումք մե-
րոց պարտապանաց:

13 Եւ մի ասնիր զմեզ ՚ի
փորձութիւն. այլ փրկեան զմեզ
՚ի չարէն. զի քո է արքայու-
թիւն և զօրութիւն և փառք
յաւիտեանս. ամէն:

14 Ձ ի եթէ թողուցուք
մարդկան զյանցանս նոցա՝
թողոցէ և ձեզ հայրն ձեր երկ-
նաւոր զյանցանս ձեր:

7 Եւ էն ժամանակն որ ա-
ղօթք անէք շատախօս չի՛ լի-
նիք՝ ինչպէս հեթանոսներն.
որ նորանք կարծումեն՝ թէ
իրանց շատ խօսելոյն համար
կըլավին:

8 Ուրեմն նորանց նման մի
լինիք. ինչուոր ձեր հայրն զի-
տումէ՝ թէ ինչ պէտք է
ձեզ, դեռ բանի որ մին բան
չէք խնդրել նորանից:

9 Ուրեմն դուք էսպէս ա-
ղօթք արէք՝ Մեր հայր որ
երկնքումն ես՝ քո անունդ
սուրբ լինի:

10 Քո արքայութիւնդ գայ
քո կամքդ լինի. ինչպէս երկն-
քումն, էնպէս էլ երկրիս վե-
րայ:

11 Մեր ամէն օրվան հացըն՝
էս օր տնւր մեզ:

12 Եւ մեր պարտքըն թող
մեզ՝ ինչպէս որ մեք էլ թո-
ղումենք մեր պարտաւաններին:

13 Եւ մեզ փորձանքի մէջ
մի քցել՝ բայց մեզ չարիցն
ազատիր, ինչուոր՝ քո է թա-
ղաւորութիւնն և զօրութիւն և
փառքն՝ յաւիտեանս. ամէն:

14 Պատճառն որ եթէ
դուք մարդկանց իրանց մեզ-
քըն թողէք, ձեր երկնաւոր
հայրն էլ թողութիւն կըտայ
ձեզ:

15 Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանսնոցա՛ր և ոչ հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր :

16 Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք . որ ապականեն զերեսս իւրեանց . որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն : Ամէն ասեմ ձեզ՝ այն խոյ ես վարձք նոցա :

17 Այլ դու՛ յորժամ պահիցես՝ օ՛ճ զգլուխ քո՛ և լուսն զերեսս քո :

18 Ձի մի երևեսցիս մարդկան իբրև զպահօղ . այլ հօրքում՝ ՚ի ծածուկ . և հայրըն քո՛ որ տեսանէ ՚ի ծածուկ հատուսցէ քեզ :

19 Ի՛ր՝ գանձէք ձեզ գանձս յերկրի . ուր յեց և ուտիճ ապականեն . և ուր դողք ական հատանեն . և գողանան :

20 Այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս . ուր ոչ յեց՝ և ոչ ուտիճ ապականեն՝ և ոչ գողք ական հատանեն և գողանան :

15 Ապա թէ որ դուք մարդկանց չէք թողիլ իրանց մեղքըն , ձեր հայրն էլ ձեր մեղքըն չի թողիլ ձեզ :

16 Եւ էն ժամանակն որ պաս կը պահէք , չի՛ լինի որ կեղծաւորներին պէս տրտում երևիք , որ իրանց երեսն տըլբարայնումեն , որ մարդկանց երևին թէ պահօղ են : Քըլմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ նորանց վարձքն մէնակ էն է :

17 Բայց դու ինչ ժամանակ որ պաս պահես , քո գլուխդ իւղով օճի՛ր՝ և քո երեսը լուսն :

18 Որ մարդկանց առաջին չերևիս պաս պահօղի նման . բայց ծածուկ քո հօրդ առաջին՝ և քո հայրն որ ծածուկն տեսնումէ , յայտնի հատուցումըն կը տայ քեզ :

19 Ձեզ համար գանձ (խոյ և նոյ) չի հաւտքէք երկրիս վերայ . որտեղ որ յեցն և ժանկն փտայնումեն և որտեղ որ գողերըն գետնի տակըն փորումեն և գողանում :

20 Բայց երկնքումէն ձեզ համար գանձ (խոյ և նոյ) ժողովեցէք՝ որ էնտեղ ոչ յեց և ոչ ժանկ չեն փտայնում , և գողերն գետնի տակըն չեն փորում և գողանում :

21 Ձի ուր դանձք ձեր են՝
անդ և սիրաք ձեր լիցին :

22 Դրագ մարմնոյ ակն է. ե-
թէ ակն քո առատ է. ա-
մենայն մարմինդ լուսաւոր ե-
ղիցի :

23 Ապա թէ ակն քո չար
է՝ ամենայն մարմինդ խաւա-
րին եղիցի : Իսկ արդ՝ եթէ
լոյսդ որ ՚ի քեզ է՝ խաւար է,
խաւարն՝ ճրչափ ևս :

24 Ոչ ոք կարէ երկուց տէ-
րանց ծառայել. կամ զմին ա-
տիցէ, և զմիւսն սիրիցէ. կամ
զմին մեծարիցէ, և զմիւսն ար-
համարհիցէ. ոչ կարէք ԱՅ
ծառայել և մամոնայի :

25 Ասան այգորիկ ասեմ
ձեզ՝ մի հոգայք վասն ոգւոյ
ձերոյ, զի՛նչ ուտիցէք՝ կամ
զի՛նչ ըմպիցէք. և մի վասն
մարմնոյ ձերոյ՝ թէ զի՛նչ ա-
գանիցիք. ոչ ապրքէն ոգի ա-
ռաւել է քան զկերակուր՝ և
մարմին քան զհանգերձ :

26 Հայեցարուք ՚ի թռչու-
նըս երկնից՝ զի ոչ վարեն. և
ոչ հնձեն. և ոչ ժողովեն ՚ի
շտեմարանս. և հայրն ձեր
երկնաւոր կերակրէ զնոսա.

24 Պատճառնոր՝ ինչտեղ
որ ձեր դանձերն են, էնտեղ
էլ ձեր սիրտն կըլինի :

22 Մարմնոյ ճրագն՝ աչքն
է. թէ որ քո աչքդ պարզ է,
քո ամէն մարմինդ լուսաւոր
կըլինի :

23 Բայց թէ որ քո տէքդ
չար է, քո ամէն մարմինդ խա-
ւար կըլինի : Նրահամար՝ թէ
որ էն լոյսն որ քեզանում է՝
խաւար է, ապա խաւարն ճր-
չափ կըլինի :

24 Ոչ ով կարող չէ երկու
տիրոջ ծառայուի անել՝ կամ
մընին կատէ, և մէկէլին կը-
սիրէ, կամ մընին կըպատուէ՝
և մէկէլին ոչինչի տեղ կըհա-
մարէ. կարող չէք ծառայուի
անել ԱՅ և մամոնային :

25 Սրահամար ասուածմ ձեզ.
հոգս չանէք ձեր հոգոյն հա-
մար. թէ ՚ի՛նչ պիտի ուտէք,
կամ ՚ի՛նչ պիտի խմէք. և ոչ
ձեր մարմնոյն համար՝ թէ
ի՛նչ պիտի հագնիք. չէ՞ որ
հոգին աւելի է կերակրիցն՝ և
մարմինն շորերիցն :

26 Մտի՛կ արէք երկընքի
թռչուններին՝ որ ոչ վարու-
մեն, և ոչ հնձումեն, և ոչ
ամբարներուքն ժողովումեն,
և ձեր երկնաւոր հայրն կը-

նչ սաղաքէն դուք առաւել
էք քան զնոսա :

27 Իսկ արդ՝ ո՞ր ՚ի ձէնջ առ
հոգալ իւրում՝ յաւելուլ կա-
րիցէ ՚ի հասակ իւր կան-
դուն մի :

28 Եւ վասն հանդերձի զը՞
հոգայք . հայեցարո՞ւք ՚ի շու-
շանն վայրենի՝ որպէս աճէ .
ոչ ջանայ՝ և ոչ նիւթէ :

29 Ասեմ՝ ձեզ՝ զի և ոչ սա-
ղովմոն յամեայն ՚ի փառսն իւ-
րում՝ զգեցաւ իբրև զմի ՚ի նո-
ցանէ :

30 Իսկ եթէ զխոսն՝ որ ՚ի
վայրի՝ որ այսօր է և վարիւն
՚ի հնոց արկանի, Ա՛ճ այնպի
զգեցուցանէ . ո՞րչափ և սա-
ռաւել զձեզ թերահաւատք :

31 Մի՛ այսուհետև հոգայ-
ցէք, և ասիցէք . զինչ կե-
րիցո՞ւք՝ կամ զինչ արբոցուք՝
կամ զինչ զգեցցուք :

32 Ձի դայդ ամհեթանօք
խնդրեն . քանզի զիտէ հայրն
ձեր երկնաւոր՝ թէ պիտոյ է
ձեզ այդ ամ :

33 Խնդրեցէք նախ զարքա-
յութիւն Աստուծոյ և զար-
դարութիւն նորա, և այդ ա-
մենայն յաւելցի ձեզ :

բակրումէ նորանց . չ՞ որ
դուք նորանցից աւելի էք :

27 Հիմիկ՝ ձեզանից ո՞վ է
կարօզ իրան հոգս անելոցն ի-
րան հոտակըն մին գաղ էլ ա-
ւելացնել :

28 Եւ շորերի համար ին-
չո՞ւ էք հոգս անում . մախկ
արէք վայրի շուշան ծաղկին՝
թէ ի՛նչպէս մեծանումէ . ոչ
ջանք է անում՝ և ոչ մա-
նումէ :

29 Ասումեմ՝ ձեզ՝ թէ սաղօ-
մօսն էլ իրան ամէն փառքի
մէջն նորանց մընին նըման
չի՛ հագաւ :

30 Բայց թէ որ վայրի խո-
տըն՝ որ էսօր կայ և էբուց
կրակըն կըքցվի, Ա՛ճ էնպէս
հազցնումէ, ապա ո՞րքան աւել-
լի ձեզ էլ՝ թերահաւատներ :

31 Սրահամար էլ հոգս չի՛
անէք՝ և չի՛ ասէք՝ թէ ի՛նչ
ուտենք, կամ ի՛նչ խմենք
կամ ի՛նչ հազնենք :

32 Ինչուոր՝ էդ ամէն բա-
ներըդ հեթանոսներըն են ու-
ղում . պատճառնոր՝ ձեր երկ-
նաւոր հայրն զիտումէ՝ թէ
էդ ամէնդ պէտք է ձեզ :

33 (Դուք) առաջ Ա՛յ ար-
քայութիւնըն, և նորա ար-
դարութիւնըն խնդրեցէք՝ և
էդ ամէն բաներդ կաւելանայ
ձեզ :

34 Մի՛ այսուհետև հոգսց-
ցէք վասն վաղուի, զի վա-
ղիւն վասն իւր հոգասցի. շնտ
է աւուրն չար իւր :

34 Ուրեմն է քուցվան համար
հոգս չի՛ անէք, ինչուոր՝ է-
քուցվան օրն իրան համար
հոգս կանէ. ամէն օրի համար
բաւական է իրան նեղուին :

ԳԼ . Է .

1 Մի՛ դատէք՝ զի մի՛ դա-
տիցիք :

1 Մի՛ դատէք՝ որ (դուք
էլ) չի դատվիք :

2 Ձի՛ որով դատաստա-
նաւ դատիք՝ դատելոց էք. և
որով չափով չափէք, չափես-
ցի ձեզ :

2 Պատճառնոր՝ ինչ դա-
տաստանով որ ուրիշին դա-
տէք, նորանով պիտի դատ-
վիք . և ի՛նչ չափով որ չա-
փէք, նորանով կըչափվի ձեզ :

3 Ձի՛ տեսանես զչիղ յա-
կան եղբօր քոյ, և ՚ի քումա-
կանդ զգերանդ ոչ նշմարես :

3 Ի՛նչու համար քո եղբօր
աչքի միջի ծեղն տեսնումես և
քո աչքիդ միջի գերանըն չես
տեսնում :

4 Կամ զիմօրդ ասես ցեղ-
բայր քո՝ թող հանից զչիղդ
յականէ քումմէ . և ահաւա-
զիկ ՚ի քում ալանդ գերան
կայ :

4 Կամ ի՞նչպէս ես ասում
եղբօրդ՝ թող քո աչքիցդ ծե-
ղն հանեմ, և ահա՛ քո աչ-
քիդ միջին գերան կայ :

5 Կեղծաւոր՝ հաննախ ըզ
գերանդ յականէ քումմէ՝ և
ապա հայեսցես հանել զչիղն
յականէ եղբօր քոյ :

5 Կեղծաւոր՝ առաջ գերո-
նըն քո աչքիցդ հանի՛ր, և
յետոյ մտի՛կ արա՛ որ ծեղըն
քո եղբօր աչքիցն հանես :

6 Մի՛ տայք զսրբուի շանց՝
և մի՛ արկանէք զմարդարևտս
ձեր առաջի խողաց. զի մի՛ առ-
ոան կոխիցեն զնոսա՝ և դար-
ձեալ երկիծուցանիցեն զձեզ :

6 Սուրբ բանըն չի՛ տաք
չնեղին, և ձեր մարդարևտն-
ըն խողբի առաջն չի՛ քցէք.
որ ոտով կօխ չի տան նորանց՝
և յետ դառնան ձեզ պատա-
ռեն :

7 Խնդրեցէք, և տայի ձեզ, հայցեցէք և գտջիք . բաղխեցէք և բացյի ձեզ :

8 Ձի ամ որ խնդրէ, առնու . և որ հայցէ, գտանէ . և որ բաղխէ, բացյի նմա :

9 Ո՛վ իցէ ՚ի ձէնջ մարդ՝ ցոր խնդրիցէ որդի իւր հայ, միթէ քա՛նր տայցէ նմա :

10 Կամ խնդրիցէ ձուկն, միթէ զձ տայցէ նմա :

11 Արդ եթէ դուք՝ որ չարքէք՝ գիտէք պարգևս բարիս տալ որդուց ձերոց . զի չտի ևս առաւել հայրն ձեր՝ որ յերկինս է՝ տայցէ բարիս այնոցիկ՝ որք խնդրեն զնա :

12 Ձ ամ զոր միանգամ կամ միջիք՝ թէ արտայեն ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա . զի այս իսկ են օրէնք և մարգարէք :

13 Մտէք ընդ նեղ դուռն՝ քանի ընդարձակ է դուռն՝ և համարձակ ճանապարհն՝ որ տանի ՚ի կորուստ . և բազումք են՝ որ մտանեն ընդ նա :

14 Քանի անձուկ է դուռնն, և նեղ ճանապարհն՝ որ տանի

7 Խնդրեցէք և կըտըվի ձեզ . հեռուեցէք և կըզատէք . (դուռնն) թակեցէք և կըբացվի ձեզ :

8 Ինչուոր՝ ամէն ո՛վ որ կըխնդրէ՝ կառնէ, ո՛վ կըհետևի՝ կըզատնէ, և ո՛վ որ կըթակէ՝ կըբացվի նորան :

9 Ո՛վ է ձեզանից էն մարդն՝ որ նորանից իրան որդին հայուցէ՝ միթէ քա՛նր կտայ նորան :

10 Եւ կամ ձուկըն ուզէ՝ միթէ զձ կըտայ նորան :

11 Ուրեմն թէ որ դուք որ չար էք՝ գիտումէք լուս պարգևներ տալ ձեր որդոցն . ապա զիքսն աւելի ձեր հայրն որ երկնքուքն է, բարի բաներ կըտայ նորանց որ իրանից ուզումեն :

12 Ամէն ինչոր ուզումէք՝ թէ մարդիքն ձեզ անեն, դուք էլ էնպէս արէք նորանց . ինչուոր՝ հենց էս է օրէնքն և մարգարէքն :

13 Նեղ դուռնովն ներս մտէք՝ ինչուոր՝ լայն է դուռն և համարձակ ճանապարհն, որ դէպի կորուստն է տանում . և շատ են նորանք՝ որ նորանով են մտնում :

14 Ո՛րքան նեղ է դուռն՝ և նեղ է ճանապարհն, որ դէպի

ի կեանս • և սակաւք են՝ որք զտանեն զնա :

15 Ձ դոյշ լերուք ՚ի սուտ մարգարէիցն՝ որք դան առ ձեզ հանդերձիւք ոչ խարաց՝ և ՚ի ներքոյ են գայլք յափըշ-տակողք :

16 Ի պողոյ նոցա ծանիջիք զնոսա • միթէ քաղիցե՞ն ՚ի փշոյ խաղող՝ Կամ ՚ի տատասկէ թուղ :

17 Այսպէս ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ • և ծառ չար՝ պտուղ չար առնէ :

18 Ո՛չ կարէ ծառ բարի պտուղ չար առնել • և ո՛չ ծառ չար պտուղ բարի առնել :

19 Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի • հատանի և ՚ի հուր արկանի :

20 Ապա ՚ի պողոյ նոցա ծանիջիք զնոսա :

21 Ո՛չ ամենայն որ ասէ յիս՝ Տէր՝ Տէր • մայէ յարքայուի երկնից • այլ որ առնէ զկամս հօր իմոյ՝ որ յերկինսն է :

22 Բապոււմք ասիցեն յիս յուուր յայնմիկ՝ Տ՛ր Տ՛ր • ո՛չ յանունքս մարգարէացաք • և յանունքս դես հանաք • և

կեանքն է տանում • և քիչ են նորանք՝ որ զանուամեն նորան :

15 Ձ դոյշ կայէք (էն) սուտ մարգարէիցն որ ոչ խարի շորերով ձեզ մտ են գալիս , և իրանց միջումն յափըշ-տակող գայլեր են :

16 Իրանց պողիցն ճանաչեք ցէք նորանց • կըլինի՞ որ փըշերիցն խաղող քաղեն՝ կամ տատասկիցն թուղ :

17 Եսպէս ամէն բարի ծառն՝ բարի պտուղ է բերում • և չար ծառն՝ չար պտուղ է բերում :

18 Չի՛ կարող բարի ծառն չար պտուղ բերել , և ոչ էլ չար ծառն բարի պտուղ բերել :

19 Ամէն ծառ՝ որ բարի սըտուղ չի՛ բերում , կարվումէ և կրակի մէջ է քցվում :

20 Ուրեմն իրանց պողիցըն ճանաչեցէք նորանց :

21 Ո՛չ թէ ամէն ով որ ինձ ասումէ՝ Տէր Տէր • երկնքի արքայութիւնն կըմանէ • բայց նո՛ որ իմ հօրս կամքըն կատարումէ՝ որ երկնքումն է :

22 Շատ մարդիք էն օրն կասեն ինձ • Տէր Տէր՝ չէ՞ որ մենք քո անունովք մարգարէութիւն արինք , և քո անու-

յանունն քո զօրուին բազումն
արարաք :

23 Եւ յայնժամ ասացից
ցնոսա՝ եթէ ոչ երբ էք գիտէի
դձեզ . ՚ի բաց կացէք յինէն
ամենեքեան՝ ոյք դործէիք զա-
նօրէնու[թ]իւն :

24 Ամենայն որ լսէ զբանս
իմ զայսոսիկ՝ և առնէ զոսա,
նմանեսցէ առն իմտանոց . որ
շինեաց զտուն իւր ՚ի վերայ
վլամի :

25 Իջին անձրեք՝ և խաղա-
ցին գէտք՝ շնչեցին հողմք՝ և
բաղխեցին զտունն՝ և ոչ կոր-
ծանեցաւ . քանզի ՚ի վերայ վի-
մի հաստատեալ էր :

26 Եւ ամ որ լսէ զբանս իմ
զայսոսիկ՝ և ոչ առնէ զոսա՝
նմանեսցի առն յիմարի՝ որ
շինեաց զտուն իւր ՚ի վերայ
աւտոզոյ :

27 Իջին անձրեք՝ յարեան
գետք՝ շնչեցին հողմք՝ հարին
զտունն՝ և անկաւ . և էր կոր-
ծանուցն նորա մեծ յոյժ :

28 Եւ եղև իբրև կատա-
րեաց Յիսուս զամ զբանս զայ-
սոսիկ՝ զարմանայլին ժողովրդքն

նովը գեւորը հանեցինք , և
քո անուսովդ շատ հրաշքներ
արինք :

23 Եւ էն ժամանակն կա-
սեմ նորանց՝ [թէ իսկի մին
ժամանակ չեմճանաչել ձեզ՝
ինձանից հեռացէք ամէնքդ՝ որ
անօրէնու[թ]իւն էք գործում :

24 Ամէն ով որ էս իմ խօս-
քերըս լսումէ՝ և նորանց կա-
տարումէ , նա էն իմաստուն
մարդոյն նման կըլինի , որ ի-
րան տունըն քարի վերայ շի-
նեց :

25 Անձրեւներն եկին՝ և գե-
տերըն վարարեցին՝ քամներ
փչեցին՝ և էն տունըն [թակե-
ցին , և չի կործանվեցաւ .
ինչուոր՝ քարի վերայ հաս-
տատված էր :

26 Եւ ամէն ով որ էս իմ
խօսքերըս լսումէ՝ և նորանց
չի կատարում , նա էն անխելք
մարդոյն նման կըլինի՝ որ ի-
րան տունըն աւազի վր շինեց :

27 Անձրեւներն եկին՝ և գե-
տերըն վերկացան՝ քամներ
փչեցին՝ և տունըն [թաղեցին
և վերընկաւ , և նորա քանդ-
վին շատ սաստիկ էր :

28 Եւ էլաւ երբոր Յսուս
ամէն բաներս կատարեց , ժո-
ղովուրդներն զարմանումէին

ընդ վարդապետունի նորա :
29 Ձի իբրև իշխանուք ու-
տուցանէր՝ և ոչ որպէս դը-
պիրքն նոցա :

ԳԼ :

1 Այլ իբրև էջ ՚ի լեռ-
նէ անտի, գնացին զլինի նորա
Ժողովուրդք բաղումք :

2 Եւ ահա մատուցել բո-
րոտ մի, երկիրպագանէր նմա՝
և տաէր . Տէր, եթէ կամիս՝
կարող ես զիս սրբել :

3 Չգեաց զձեռն իւր՝ և
հասոցց ՚ի նա Յս՝ և ասէ . կա-
միմ՝ սրբեայց, և վաղվաղա-
կի սրբեցաւ ՚ի նմանէ բորո-
տու թիւնն :

4 Եւ ասէ ցնա Յս՝ զգոյշ
լեր՝ մի ումեք ստիցես . այլ
երթ ցոյց զանձն քո քահանա-
լին . և մատն զպատարագն՝
դոր հրամայեայ մովսէս ՚ի
վկայու թիւն նոցա :

5 Եւ մտեալ ՚ի կափառ-
նաում, մտեաւ առ նա հա-
զարտպետ մի, աղաչէր զնա :

6 Եւ ասէր . Տէր՝ մանուկ
իմ անկեալ կայ ՚ի տան անդա :

նորա վարդապետունի վերայ :
29 Ինչուոր՝ իշխանուի ու-
նօղիպէս էր սովորցնում և
ոչ թէ իրանց կարդացող-
ներինպէս :

Ը :

1 Բայց երբոր էն սարիցն
վէրեկաւ . շատ Ժողովուրդներ
գնացին նորա ետևէն :

2 Եւ ահա մին բորոտ
մարդ մօտ եկաւ երկրպագու-
թիւն արաւ նորան և ասայ .
Տէր՝ թէ որ կամենաս, կա-
րող ես ենձ սըրբել :

3 Յս իրան ձեռնն մեկնեց
և նորան հասցրուց և ասայ .
կամենումեմ՝ սրբվի՛ր . և շու-
տով բորոտու թիւնն սրբվե-
ցաւ նորանից :

4 Եւ Յս նորան ասաց .
զգոյշ կայ՝ իսկի մին մարդոց
բան չուես . միայն թէ գնոս
քեզ ցոյց տուր քահանային՝
և մօսէսիցն հրամայեա՞ծ պա-
տարագըն արն, որ վկայու-
թիւն լինի նորանց :

5 Եւ երբոր մտաւ կա-
փառնայում, մին հարիւրա-
պետ եկաւ նորա մօտ . աղա-
չումէր նորան ,

6 Եւ ասումէր . Տէր՝ իմ
տղան անդամալոյ՞ծ վէրընկա՞ծ

մալոյձ՝ չարաչար սանջեալ :

է տան մէջն՝ և սաստիկ տանջ-
վումէ :

7 Ասէ ցնա Յս . ես եկից .
և բժշկեցից զնա :

7 Յս նորան սասց , ես կը-
գամ և նորան կըբժշկեմ :

8 Պտոսսխանի ետ հարիւ-
րապետն՝ և սսէ . Տէր չեմ
բաւական՝ եթէ ընդ հարկաւ
իմով մայես . այլ սսո՛ բա-
նիւ , և բժշկեսցի մանու-
կըն իմ :

8 Հարիւրապետն սլատաս-
խան տուաւ և սսաց . Տէր՝
արժանի չեմ որ իմ տան ծած-
քի տակն մանես , բայց մէ-
նակ խօսքով սսա՛ և իմ աը-
ղան կըբժշկվի :

9 Քանզի և ես այր մի եմ
ընդ իշխանուք . ունիմ ընդ
ինև զինուորս՝ սսեմ սմա
կերթ , և երթայ . և այլում
թէ եկ , և գայ . և ծառայի
իմում՝ թէ արս՛ զայս՝ և
առնէ :

9 Ինչուոր՝ ես էլ մին իշ-
խանուք տակ լինող մարդ եմ .
իմ ձեռիս տակն զինուորներ
ունիմ և սսումեմ սորան թէ
գնա՛ և գնումէ , և մէկէլին թէ
եկ՝ և գալիս է . և իմ ծառա-
յիս՝ թէ էս բանըս արս՛ և
անումէ :

10 Իբրև լուաւ Յիսուս՝
զարմացաւ՝ և սսէ ցայնո-
սիկ՝ որ ըզհետն երթային .
սմէն սսեմ ձեզ՝ և ոչ
յիսրայէլի այսպիսի հաւատո
դտի երբէք :

10 Երբոր Յս լսեց , զար-
մացաւ և սսաց նորանց որ ի-
րան ետևէն գնումէին . Ճըշ-
մարիտըն ստումեմ ձեզ , որ
իսրայէլի մէջն էլ իսկի մին
ժամանակ էսպէսի հաւատք
չի՛ գտի :

11 Բայց սսեմ ձեզ՝ զի բա-
զումք յարևելից և յարևմը-
տից եկեսցեն՝ և բազմոցին
ընդ աբրահամու՝ և ընդ իսա-
հակայ՝ և ընդ յակովբու
յարբայութեան երկնից :

11 Բայց ստումեմ ձեզ ,
որ շատ մարդիք արևելքիցն
և արևմտիցն կըբան և աբրա-
համի և իսահակի և յակօբէ
հետ երկնքի արքայութենու-
մըն կընստին :

12 Եւ որդիքն արքայութի
եկցեն ՚ի խաւարն արտաքին .

12 Եւ արքայութեան որ-
դիքն դուրս կըգնան դըրսի-

անդ եղիցի լալ և կրճեղ ա-
տամանց :

13 Եւ ասէ Յս ցհարիւ-
րապեան՝ երթ. և ուղ հաւա-
տացերդ, եղիցի քեզ. և ող-
ջացաւ մանուկն նր՝ յաւուր
յայնմիկ :

14 Եւ եկեալ Յս ՚ի տուն
պետրոսի. ետես՝ զի զըքանչ
նորա անկեալ դնէր տապա-
ցեալ :

15 Կալաւ զձեռանէ նր, և ե-
թող զնա ջերմին. յտան եկաց՝
և պաշտէր զնա :

16 Իբրև եղև երեկոյ՝ մա-
տուցին առ նա դիւահարս
բաղումս. և եհան զպտան
բանիւ. և զամ հիւանդսն
բժշկեաց :

17 Զի լցցի բանն՝ որ ա-
սացաւ ՚ի ձեռն ետայաց մար-
գարէի. նա զհիւանդութիւս
մեր վերացոց՝ և զցաւս մեր
եբարձ :

18 Տեսեալ Յիսուսի զժողո-
վուրդս բաղումս զիւրև՝ հրա-
մայեաց երթալ յայնկոց :

19 Եւ մատուցեալ զպիր մի
ասէ ցնա. վարդապետ՝ եկից
և ես զինի քո՝ յոր վայր և
երթիցես :

խաւարն, որ էնտեղ լաց և ա-
տամներ : կըրճըտելն կըլինի :

13 Եւ Յս ասաց հարիւրա-
պետին. գնա՛ և ինչպէս որ
հաւատացիր՝ թող էնպէս
լինի՛ քեզ. և նորա աղան ող-
ջացաւ էն օրուքն :

14 Եւ երբոր Յս եկաւ պե-
տրոսի տունն, տեսաւ որ նորա
զըքանչն տենտի մէջն վէր ըն-
կած էր :

15 Նորա ձեռիցն բռնեց,
և տենտն թողեց նորան. վեր-
կացաւ և ծառայութիւն էր
անուամ՝ նորանց :

16 Իբրբոր երիկուն էլաւ.
շատ դիւահարսներ բերին նո-
րա մօտ՝ և (մէնակ) խօբով
հանեց դևերն, և ամէն հի-
ւանդներն բժշկեց :

17 Որ կատարվի եսայի մար-
գարէի ձեռովն ասված բանն,
թէ նա մեր հիւանդութիւն-
ներն վերացրուց՝ և մեր ցա-
ւերն վերկալաւ :

18 Յս երբոր շատ ժողո-
վուրդներ տեսաւ իրան չորս
կողմովն, հրաման տուաւ, էն
կողմն գնալ :

19 Եւ մին կարդացող մօտ
եկաւ և նորան ասաց. վարդա-
պետ՝ ես էլ քո ետևէդ կը-
գամ որտեղ որ գնաս :

20 Ասէ ցնա Յիսուս . աղուեսուց որջք գոն՝ և թըռչնոց երկնից բոցնք . այլ որդւոց մարդոց ոչ գոց , ուր դիցէ զգլուխ իւր :

21 Եւ մի ոմն յաշակերտաց նորա ասէ ցնա . Տ'ը՛ տուր ինձ հրաման՝ զի երթայց նախ թաղեցից զհայր իմ :

22 Ասէ ցնա Յս՝ եկ զլնի իմ . և թոյլ տուր մեռելոցն , թաղել զմեռեալս իւրեանց :

23 Եւ իբրև եմուտ ՚ի նաւն , գնացին զլնի նր՝ աշակերտքն նորա :

24 Եւ ահա շարժումն մեծեղև ՚ի ծովուն . մինչ նաւին ճածկել յալեաց անտի . և ինքն ննջէր :

25 Եւ մատուցեալ աշակերտքն յարուցին զնա՝ և ասեն . Տը՛ փրկեա զմեզ՝ զի կորնչիմք :

26 Եւ ասէ ցնոսա՝ ընդէ՞ր վատասիրտք էք՝ սակաւահաւատք : Յայնժամ յարուցեալ սաստեաց հողմոցն և ծովուն . և եղև խաղաղութիւն մեծ :

27 Եւ մարդիկն զարմացան՝ և ասէին . որպիսի ոք իցէ սա՛ զի և հողմք և ծով հնազանդին ամա :

20 Եւ Յս նորան ասաց . աղուեսներն կենալոյ փոսեր ունին , և երկնքի թռչուններն բուն . բայց որդին մարդոց մին տեղ չունի՝ որ իրան գլուխն զնէ :

21 Եւ նորա աշակերտներին մինն ասաց նորան՝ Տէ՛ր ինձ հրաման տուր՝ որ գնամ առաջ իմ հայրն թաղեմ :

22 Յս նորան ասաց՝ ի՛մ ետեւս եկ՝ և թող արա մեռելներին՝ որ իրանց մեռելներն թաղեն :

23 Եւ երբոր մտուս նաւն , նորա աշակերտներն գնացին նորա ետեւն :

24 Եւ ահա մեծ ալէկոծումն էլաւ ծովի մէջն . մինչև որ նաւն էլ ճածկվումէր ալիքներին . և ինքն քնած էր :

25 Եւ աշակերտներն մօտեկին՝ նորան զարթնացրին և ստացին . Տէ՛ր՝ մեզ փրկի՛ր՝ որ կորչումէք :

26 Եւ նորանց ասաց . ի՞նչու վախկոտ էք պակասահաւատներ : Ի՛ն ժամանակ վերկացաւ՝ քամիներն և ծովին սաստեց և մեծ խաղաղուի էլաւ :

27 Եւ մարդիքն զարմացան և ասումէին . էս ի՞նչպիսի մարդ է՝ որ քամիներն և ծովն էլ հնազանդվումեն սորան :

28 Եւ իբրև անցին յայն-
կոյս յերկիրն գերգեսացւոց՝
պատահեցին նմա գիւտհարը
երկու՝ ելեալը ՚ի գերեզմանայն
չարաչարը յոյժ . որպէս զի
չէր հնար անցանել ումք ընդ
այն ճանապարհ :

29 Եւ ահա աղաղակեցին՝
և ասեն . զի՛ կայ մեր և քո՝
Յ՞ որդի Ա.Յ. եկիր տարա-
ժամ տանջել զմեզ :

30 Եւ էր հեռագոյն ՚ի նո-
յանէ երամակ մի խողից արօ-
տական :

31 Եւ դեքն աղաչէին զնա՝
և ասէին . եթէ հանես զմեզ
աստի , հրաման աուր մեզ եր-
թալ յերամակ խողիցն :

32 Եւ ասէ ցնոտա՝ երթո՛յք .
և նորա ելել զնացին յերամա-
կըն խողից , և դիմեաց ամենայն
երամակն ՚ի դարէ անտի ՚ի
ծով՝ և մեռան ՚ի ջուրսն :

33 Եւ խողարածքն փախեան
և երթեալ ՚ի քաղաքն պատ-
մեցին զմով , և զիրս դիւտհա-
րացն :

34 Եւ ահա ամենայն քաղա-
քըն ել ընդ առաջ Յիսուսի .

28 Եւ երբ որ էն կողմն ան-
ցին գերգեսացոց երկիրն , եր-
կու դիւտհար մարդ պատա-
հեցին նորան , գերեզմանե-
րիցըն դուրս եկած՝ որ էնքան
չատ չար էին , մինչև որ հնար
չէր թէ մին մարդ էն ճանա-
պարհովն անցկենայ :

29 Եւ ահա՛ աղաղակեցին և
տասցին . Յ՞ որդի Ա.Յ. քեզ
լ՞նչ բան կայ մեզ հետ . որ ե-
կելես անժամանակ մեզ տան-
ջել :

30 Եւ նորանցից հեռու մին
խողի երամակ («իւրու») կար
որ արածուէր :

31 Եւ դեքն աղաչումէին
նորան և ասում , թէ որ մեզ
էս տեղիցս հանես , հրաման
տուր մեզ՝ որ գնանք էն խո-
ղերի երամակն («իւրու») :

32 Եւ նորանց ասոց . գնո-
յէք՝ և նորանք դուրս եկին
գնացին խողերի երամակն . և
ամէն խողերի երամակն էն
բարձր տեղիցն վազեց ծովի
մէջն՝ և ջրերի միջումն մեռան :

33 Եւ խողարածներն փա-
խան և գնացին քաղաքն՝ ա-
մէնըն պատմեցին , և դիւտ-
հարների բաներըն էլ :

34 Եւ ահա՛ ամէն քաղաքն
դուրս եկաւ Յիսուսին՝ երբ

Լիբրև տեսին զնա, ազաչեցին,
զի գնացոյէ 'ի սահմանաց նց :

որ նորան տեսին՝ ազաչեցին՝
որ գնաց իրանց երկրիցն :

ԳԼ .

Թ .

1 Եւ մտեալ 'ի նաւ՝ անց
յայնկոյս՝ և եկն 'ի քաղաք
իւր :

1 Եւ նաւն մտաւ անցաւ
էն կողմն, և եկաւ իրան քա-
ղաքն :

2 Եւ ահա մտառուցին առ
նա անդամալոյծ մի, որ գնէր
'ի մահիւծս . և տեսեալ Յի
զհաւատս նոցա՝ ասէ ցանդա-
մալոյծն՝ Թողեալ լիցին քեզ
մեղք քո :

2 Եւ ահա մին անդամա-
լոյծ (մարդ) բերին նորամօտ,
որ մահիւծի (աէօշէէն) մէջն էր
դրած . և Յս նորանց հաւատ-
քն տեսնելով՝ անդամալու-
ծին ասաց . քո մեղքերն Թող-
ված լինին քեզ :

3 Եւ ահա՝ ոմանք 'ի դըպ-
րացն ասեն ընդ միտս՝ հայհոյէ
դա :

3 Եւ ահա կարգացօղներիցն
մին քանինն իրանց մտբու-
սասցին՝ Թէ հայհոյումէ դա :

4 Եւ ճանուցել Յի զխոր-
հուրդս նոցա՝ ասէ ցնոսա .
ընդէ՞ր խորհիք դուք չարիս
'ի սիրտս ձեր :

4 Եւ Յս նորանց մտած-
մունքն իմացաւ և նորանց
ասաց . ի՞նչու էք չար բան մը-
տածում՝ դուք ձեր սրտերուսն :

5 Ձիւնչ դիւրին է . ասել՝
Թողեալ լիցին քեզ մեղք քո՝
Թէ ասել՝ արի՛ և շքեաց :

5 Ո՞րն է հեշտ՝ ասել՝ Թէ
քո մեղքերդ Թողված լինին
քեզ, Թէ ասել՝ վերկաց և
մոն եկ :

6 Եւ զի գիտասցիք՝ եթէ
իշխանութի ունի որդի մար-
դոց յերկրի Թողալ զմեղս .
յայնժամ ասէ ցանդամա-
լոյծն՝ արի՛, սա զմահիւծս քո՝
և երթ 'ի տուն քո :

6 Բայց որ դուք իմանաք՝
Թէ որդին մարդ իշխանութի
ունի երկրիս վի՛ մեղաց Թո-
ղուի տալոց . էն ժամանակն
անդամալուծին ասաց . վերկաց
քո մահիւծը (աէօշէէր) վեր-
աւ և գնս՝ քո տունդ :

7 Եւ յարուցեալ գնաց 'ի

7 Եւ նա վերկացաւ և զը-

տունն իւր :

8 Իբրև տեսին ժողովուրդքըն, զարմացան . և վառաւոր առնէին զած զառիչն այնպիսի իշխանուն՝ մարդկան :

9 Եւ անցել ընդ այն յսի՝ ետես այր մի՝ զի նստէր ՚ի մաքսաւորութեան, մատթէոս տնուն . և ասէ ցնա՝ Եկ զկնի իմ, և յարուցեալ գնաց զկնի նորա :

10 Եւ եղև իբրև բազմեալ էր նա ՚ի տանն, և ահա մաքսաւորք և մեղաւորք եկեալ և բազմեալ էին ընդ Յիսուսի և ընդ աշակերտս նորա :

11 Իբրև տեսին փարիսեյիքըն՝ ասեն ցաշակերտս նորա . ընդէ՞ր ընդ մաքսաւորս և ընդ մեղաւորս ուտէ վարդապետն ձեր :

12 Իսկ յս իբրև լուաւ՝ ասէ ցնոսա, ոչ պիտոյ է բժիշկ կարողայ՝ այլ հիւանդաց :

13 Երթայք ուսարնօք, զի՞նչ է՝ զզորմութիւն կամ միմ, և ոչ զզօհ, զի ոչ եկի կօչել զարդարս՝ այլ զմեղաւորս :

նաց իրան տունն :

8 Երբոր ժողովուրդներն տեսին, զարմացան՝ և վառք էին տալիս Այ, որ հնպիսի իշխանուն է տուել մարդկանց :

9 Եւ Յս երբոր հետեղից առաջ գնաց, տեսաւ մին մատթէոս անուն մարդ, որ նատած մաքսաւորութիւն (հէօֆու-չու-է-ն) էր անուամբ . և նորան ասաց . իմ ետեհս եկ . և նա վերկացաւ գնաց նորա ետեհն :

10 Եւ էլաւ երբոր նորատան մէջն սեղանի վերայ նըստելէր, և ահա ուրիշ էլ շատ մաքսաւորներ (հէօֆու-չու-է-ն) և մեղաւորներ եկելէին՝ և Յսի և նորա աշակերտների հետ նստել էին :

11 Երբոր փարիսեյիքն ասին, նորա աշակերտներին ասային . ի՞նչու ձեր վարդապետն մաքսաւորներին և մեղաւորներին հետ ուտում է :

12 Բայց Յս երբոր լսեց, նորանց ասաց . կարողներին բժիշկ պէտք չէ, բայց հիւանդներին :

13 Գնացէք սովորեցէք՝ թէ ի՞նչ է (որ կասվի) ողորմութիւն եմ ուզում . և ոչ պատարագ . ինչու որ՝ ես չեմ եկել որ արդարներն կանչեմ, բայց մեղաւորներն :

14 Յայնժամ մատենան առ նա աշակերտքն յովհաննու՝ և ասեն . ընդէ՞ր մե՛ք և փարիսեցիքն պահեմք յաճախ, և քո աշակերտքդ ո՛չ պահեն :

15 Ասէ ցնոսա յս . մի՛ եթէ մտրթ ինչ իցէ մանկանց առաքաաստի սուգ առնուլ՝ մինչ փեսայն ընդ նոսա իցէ . այլ եկեցցեն առուրք՝ յորժամ բարձցի ՚ի նոցանէ փեսայն, և ապա պահեսցեն :

16 Ոչոք արկանէ կապերտանթափ ՚ի վերայ հնացեալ ձորձոց . վի առնու ելանէ ըզլ ըրութիւն նորա ՚ի հանդերձէն, և և՛ս չար պատառուսմի լինի :

17 Եւ ոչ արկանեն գինի նոր ՚ի տիկս հինս . ապա թէ ոչ՝ տիկքն պատառին, և գինին հեղու, և տիկքն կորնչին . այլ արկանեն գինի նոր ՚ի տիկս նորս . և երկոքին պահին^ք :

18 Մինչ դեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիր պազանէր նմա՝ և ասէր, դուստր իմ՝ անդևս վախճանեցաւ, այլ՝ ե-

14 Ին ժամանակն յօհաննէսի աշակերտներն նորա մօտ եկին և ատային . ի՞նչու մենք և փարիսեցիքն շատ պառ ենք պահում, և քո աշակերտներդ չեն պահում :

15 Յս նորանց ասաց . միթէ կարելի՞ է որ հարսանիքի տըղայքն սուգ անեն՝ քանի որ փեսայն նորանց հետ է . բայց օրեր կըզան՝ որ փեսայն նորանցից վերկառնվի, և նրանից ետև կըպահեն :

16 Ոչ ով չի մաշած կտրկատանի կտոր հին հագուստի վերայ չի՛ քցիլ . ինչու որ՝ նա էն հին շորի ուժըն էլ կառնէ դուրս կըզնայ . և նորս պատառվածքն էլաւելի չալ կըլինի :

17 Եւ նոր գինին հին տըղերի մէջ չեն լցնիլ . ապա թէ ոչ՝ տըղերն կըպատառվին, և գինին կըթափվի, և տըղերն էլ կըկորչին . բայց նոր գինին նոր տըղերի մէջ կըլցնեն, և երկուքն էլ կըպահին :

18 Դեր քանի որ նա էն խօսումէր նորանց հետ, ահա մին իշխան եկաւ նորան երկրպագութիւն արաւ՝ և ասաց . իմ աղջիկս հիմիկ մեռնելոց վերայ

կեալ դիցեն զձեռն քո 'ի վերայ նորա՝ և կեցցէ :

19 Յարեաւ յս' և գնաց ըզկնիսն աշակերտօքն հանդերձ :

20 Եւ ահա կին մի՝ տեառտես երկոտասանամեայ , մատուցեալ յետոյ մերձեցաւ 'ի դրօշակ հանդերձի նորա :

21 Քանզի ստէր 'ի մտի իւրում , թէ միայն մերձենամ 'ի հանդերձս նորա՝ փրկիմ :

22 Իսկ յս իբրև դարձաւ և ետես զնա , ստէ՝ քաջալերեսոյ դուտոր՝ հաւատք քո կեցուցին զքեզ . և փրկեցաւ կինն 'ի ժամէն յայնմանէ :

23 Իբրև եկն յս 'ի տուն իշխանին , և ետես զփողարուրն՝ և ամբօխ յոյժ , ստէ զընտա՝ 'ի բնոյ գնացէք .

24 Ձի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ :

25 Եւ ծաղր առնէին զնա . և իբրև ել ամբօխն 'ի բաց , եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա և յարեան աղջիկն :

26 Եւ ել համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն :

27 Եւ մինչ դեռ անցանէր ընդ այն յս , զհետ եղեն նո-

է , բայց եկ և քո ձեռքդ նորա վերայ դիր . և կապրի :

19 Յս վերկացաւ և աշակերտներովն գնաց նր ետեւէն :

20 Եւ ահա մին կին , որ տասներկու տարի միշտ արիւն թափելով . ցաւակարէր . մօտ եկաւ՝ և ետեւիցն նորա շորի ծայրին զխպաւ :

21 Ինչուոր՝ իրան մտքումն տուամէր՝ թէ մէտակ նորա շորին զխպիմ՝ կրփրկվիմ :

22 Բայց Յս երբոր յետ դարձաւ և նորան տեսաւ , ասաց . Ժիր կաց ուր դուտոր՝ քո հաւատք քեզ սպրեցրին . և հենց էն ժամն (սահման) կինն ազատվեցաւ :

23 Երբոր Յս եկաւ իշխանի տունն , և տեսաւ փողարուրն և շատ ամբօխ (սուրճ) , նորանց ասաց՝ հեռու գնացէք :

24 Ինչուոր՝ էդ աղջիկդ մեռած չէ , բայց քնած է :

25 Եւ ծաղր էին անում նորա վերայ . և երբոր ամբօխն (սուրճ) հեռացաւ , ներսմտաւ՝ նորա ձեռիցն բռնեց . և աղջիկն վերկացաւ :

26 Եւ էս ձայնս գնաց էն ամէն երկիրն :

27 Եւ ինչ ժամանակ որ Յս էնտեղիցն անցէր կենում ,

րա կոյրք երկու, աղաղակէին
և ասէին. ողորմեաց մեզ որ-
դի դաւթի :

28 Եւ իբրև եկն ՚ի տուն,
մատենն առ նա կոյրքն. և ա-
սէ զնոսա յս. յաւատանք՝ ե-
թէ կարող եմ առնել ձեզ
զայդ. ասեն զնա՝ այն տէր :

29 Յայնժամ մերձեցաւ յաչո
նոցա՝ և ասէ. ըստ հաւատոց
ձերոց եղիցի ձեզ :

30 Եւ բացան աչք նոցա .
և սաստեաց նոցա յս՝ և ա-
սէ . զգոյշ կացէք՝ մի ոք զի-
տասցէ :

31 Եւ նոքա ելեալ՝ համ-
բաւեցին զնա ընդ ամենայն
երկիրն ընդ այն :

32 Եւ յեւանելն նոցա ար-
տաքս, ահա մտառցին առ նա
այր մի համր զիւահար :

33 Եւ յեւանել զիւին՝ խո-
սեցաւ համրն. և զարմացան
ժողովուրդքն՝ և ասեն, թէ
և ոչ երբէք երևեցաւ այս-
պիսի ինչ յիսրայէլի :

34 Իսկ փարիսեցիքն ասէին,
թէ իշխանաւ զիւաց հանէ դա
զլէս :

երկու կոյր աղաղակումէին նո-
րա ետէն՝ և ասում . որդի
դաւթի՝ մեզ ողորմեաց :

58 Եւ երբոր առնն մտաւ,
կուրերն նորա մօտ եկին . և
Յս նորանց ասաց. հաւատնւ-
մէք թէ կարողեմ էդ անել
ձեզ . և նորանք ասացին. հո-
Տէր :

59 Ին ժամանակն նորանց
աչքերին մօտեցաւ՝ և ասաց.
ձեր հաւատալոյն պէս թող
լինի ձեզ :

30 Եւ նորանց աչքերն բաց-
վան. և Յս նորանց սաստեց՝
և ասաց. զգոյշ կացէք . որ
մին մարդ չիմանայ :

31 Եւ նորանք որ դուրս
գնացին, էն ամէն երկրումն
նորա անունըն յայտնի արին :

32 Եւ երբոր նորանք դուրս
էին գնում, ահա մին համր
(լուկ) զիւահար մարդ բե-
րին նորա մօտ :

33 Եւ երբոր դէն դուրս
եկաւ, համր (մարդն) խօսեց.
և ժողովուրդներն զարմացան
և ասացին. իսկի մին ժամա-
նակ իսրայէլի մէջն՝ էսպիսի
բան չի երևեցաւ :

34 Բայց փարիսեցիքն ասում-
էին՝ թէ դա դևերի իշխա-
նովն է հանում զևերըն :

35 Եւ շրջէր յս ընդ ամե-
նայն քաղաքս և ընդ գեղս ,
ուսուցանէր ՚ի ժողովուրդս
նոցա , և քարոզէր զաւետա-
րանն արքայութեան . և բժշ-
կէր զամ ակտս և զամենայն հի-
ւանդուի՛նս ՚ի ժողովրդեանն :

36 Եւ տեսեալ զժողովուրդ-
սըն՝ զթացաւ ՚ի նոսա . զի էին
աշխատեալք և ցրուեալք ի բ-
րև զոչևարս՝ որոց ոչ իցէ
հովիւ :

37 Յայնժամ ստէ ցաշա-
կերտս իւր . հունձք բազում
են՝ և մշակք սակաւ :

38 Արդ՝ աղաչեցէք զտէր
հնձոց՝ զի հանցէ մշակս ՚ի
հունձս իւր :

35 Եւ Յս ամէն քաղաքներն
և զիւղերն մանկէր դալիս՝ նո-
րանց ժողովարանների մէջն
սովորցնումէր՝ և արքայու-
թեան աւետարանն քարոզու-
մէր . և ժողովուրդի միջն ա-
մէն ցաւերըն և ամէն հիւան-
դութիւններըն բժշկումէր :

36 Եւ ժողովուրդներըն որ
տեսաւ՝ խեղճն եկաւ նորանց
վերայ . որ աշխատած և ցրված
էին՝ ինչպէս ոչխարներ որ հո-
վիւ (շօպոս) չունին :

37 Ին ժամանակն իրան ա-
շակերտներին ասաց . հունձքն
շատ են՝ և մշակներն քիչ :

38 Ուրեմն աղաչեցէք հնձի
տիրոջն՝ որ մշակներ ուղար-
կէ իրան հունձն :

ԳԼ . Ժ .

1 Եւ կոչեցեալ առ ինքն
զերկոտասանեսին աշակերտան
իւր , ետ նոցա իշխանութիւն
այսոց պղծոց հանել զնոսա ,
և բժշկել զամենայն ցաւս և
զամենայն հիւանդութիւնս :

2 Եւ առաքելոյն երկոտա-
սանից՝ էին անուանք այսպիկ .
առաջին , սիմոն՝ անուանելն
պետրոս , և անդրէաս եղբայր
նորա :

1 Եւ իրան տասներկու
աշակերտներն իրան մօտ կան-
չեց , և նորանց իշխանութիւն
տուաւ ամէն պղծ դեւերին
վերայ , որ նորանց հանեն . և
ամէն ցաւերըն և ամէն հի-
ւանդութիւններըն բժշկեն :

2 Եւ էն տասներկու առա-
քելոց անուաներն էս էին . ա-
ռաջինն սիմոն՝ պետրոս կոչ-
վածն , և նորա եղբայր անդ-
րէասն :

3 Յակովբոս զեբեդեայ, և յովհաննէս եղբայր նորա. փիլիլիպպոս, և բարթողովմէս. թովմաս, և մատթէոս մաքսաւոր. յակովբոս ալփեայ, և զաբէոս՝ որ անուանեցաւն թադէոս :

4 Սիմօն կաննանայի, և յուզա սկարիովտայի՝ որ և մատնեայն զնա :

5 Չնոսա երկոտասանեւրին առաքեաց յս, սրտոռերեաց նոցա և ասէ, ՚ի ճանապարհ հեթանոսայ մի երթայցէք, և ՚ի քաղաք սամարայւոց մի մտանիցէք :

6 Այլ երթայք առաւել առ ոչխորսն կորուսեալս տան իւրայցլի :

7 Եւ իբրև երթայցէք՝ քարոզեցէք և ասացէք, թէ մերձեալ է արքայուի երկնից :

8 Չհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք, զլեւս հանէք. ձրի առէք՝ և ձրի տուրք :

9 Մի ստանայք ոսկի, և մի արծաթ, և մի պղինձ ՚ի զօտիս ձեր :

10 Մի պարկ ՚ի ճանապարհ և մի նրկուս հանդերձս. մի

3 Յակօբոս զեբեդեանն, և նորա եղբայր յօհաննէսն. փիլիպպոս և բարդողովմէս՝ թօմաս և մատթէոս մաքսաւորն (հիւսրոսիս). յակօբոս ալփեանն. և զէբէոսն որ թադէոս կոչվեցաւ :

4 Սիմօն կանանայի՛ն՝ և յուզայ իսկարիօտայի՛ն՝ նա, որ մատնեց նորան :

5 Ես տասներկուսին Յսուս առաքեաց, նորանց հրամանս տուաւ և ասաց. հեթանոսների ճանապարհն չի դնաք. և սամարայոց քաղաքն չի՛ մտնէք :

6 Բայց աւելի դնայէք իւրայցլի տան կորած ոչխարներին մօտ :

7 Եւ իբր կրկնաք, քարոզեցէք և ասացէք. թէ երկնքի արքայու թիւնն մօտացել է :

8 Հիւանդներըն բժշկեցէք. բորոտներըն սրբեցէք. դեերն հանեցէք. առանց փողի առելէք՝ առանց փողի տուէք :

9 Աւեր չի՛ առնէք ոչ ոսկի՛ և ոչ արծաթ, և ոչ պղինձէ փող ձեր զօտիկներու ֆ :

10 Ոչ ճանապարհի պարկ և ոչ նրկուս հագուստ՝ ոչ կօ-

կոշիկս , մի ցուպ . զի արժա-
նի է մշտին կերակրոյ իւրում :

11 Յոր քաղաք մտանիցէք
կամ 'ի գեղ , հարցանիցէք
թէ ո՞ր է 'ի նմա արժանի . և
անդ լինիջիք մինչև ելանիցէք
անտի :

12 Եւ իբրև մտանիցէք 'ի
տունն , ողջոյն տաջիք նմա՝
և առասջիք , ողջոյն տանս
այսմիկ :

13 Եթէ իցէ տունն արժա-
նի, եկեսցէ ողջոյնն ձեր 'ի վե-
րայ նորա . ապա թէ ոչ իցէ
արժանի , ողջոյնն ձեր առ ձեզ
դարձցի :

14 Եւ որ ոչ ընկալցի զձեզ՝
և ոչ լուիցէ բանից ձերոց,
իբրև ելանիցէք 'ի քաղաքէն
յայնմանէ , թօթափեսջիք
զփոշին յոտից ձերոց :

15 Ամէն ստեմ ձեզ՝ դիւ-
րագոյն լիցի երկրին սողով-
մացւոց և դոմորացւոց յառու-
րըն դատաստանի , քան քա-
ղաքին այսմիկ :

16 Եւ հաւասնիկ ես առքեմ
ձեզ իբրև զոչխորս 'ի մէջ
գայլոց . եղերո՞ւք այսուհետև
խորագէտք իբրև զօձս , և մի-
ամիտք իբրև զաղաւնիս :

17 Չգոյշ լինիջիք 'ի մարդ-

շիկ՝ ոչ գուազան . ինչուոր՝
մշտին իրան կերակրին արժա-
նի է :

11 Ո՛ր քաղաք՝ կամ (որ)
զեղ որ մանէք, հարցրէք՝ թէ
նորանում ո՞վ է արժանի, և
հետեղ կացէք՝ մինչև որ հն-
տեղից դուրս դնաք :

12 Եւ երբոր տունն կը-
մանէք, ողջոյն տուէք նորան և
առասցէք, ողջոյն էս տանս :

13 Թէ որ հն տունն ար-
ժանի է , ձեր ողջոյնն նորա
վերայ կըգայ . բայց թէ որ
արժանի չէ՛ , ձեր ողջոյնն յեա-
կըդառնայ զէպի ձեզ :

14 Եւ ո՞վ որ ձեզ չի՛ ըն-
դունի՝ և ձեր խօսքին ահանջ չի
դնէ, երբոր հն տանիցն կամ
հն քաղաքիցն դուրս դնաք, ձեր
ոտներիցն փոշին թօփ տուէք :

15 Շճմարիտըն ասումեմ
ձեզ , որ սօդօմացոց և դօմօ-
րացոց երկրին համար աւելի
հեշտ կըլինի դատաստանի օ-
րուքն՝ քան հն քաղաքին :

16 Եւ հո՞ւ ես ուղարկումեմ
ձեզ ինչպէս ոչխարներ գայլե-
րի մէջն . սրահամար խորա-
գէտ էլէք՝ ինչպէս օձերն, և
միամիտ՝ ինչպէս աղաւնիքն :

17 Չգոյշ կացէք Մարդ-

կանէ . զի մատնեսցեն զձեզ յատեանս , և 'ի ժողովուրդս լուրեանց տանջեսցեն զձեզ :

18 Եւ առաջի դատաւորաց և թաղաւորաց տանխցին զձեզ վասն իմ , 'ի վկայութիւն նոցա՝ և հեթանոսաց :

19 Այլ յորժամ մատնիցեն զձեզ , մի հոգացէք՝ թէ որ սկսուի կամ զինչ խօսիցիք . զի տացի ձեզ 'ի ժամուն յայնմիկ զինչ խօսիցիք :

20 Ձի ոչ եթէ դուք իցէք որ խօսիցիքն , այլ հոգին հօր ձերոյ՝ որ խօսիցի 'ի ձեզ :

21 Մատնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ , և հայր՝ զորդի . յառնիցեն որդիք 'ի վերայ հարց՝ և սպանանիցեն զնոսա :

22 Եւ եղիջիք տեսցեալք յամենեցունց վասն անուան իմոյ . իսկ որ համբերեսցէ 'ի սպառ , նա կեցցէ :

23 Եւ յորժամ հալածիցեն զձեզ 'ի քաղաքիս յայտիկ՝ փախիջիք յոյլ . և եթէ յայնմանէ հալածիցեն զձեզ՝ փախիջիք 'ի միւսն . ամէն ասեմ ձեզ , ոչ սպառեսջիք զքաղաքս

կանցից . ինչուոր ձեզ դատաւորան կրքաշեն և իրանց ժողովարանների մէջն կըտանջեն ձեզ :

18 Եւ դատաւորների և թաղաւորների առաջն կըտանին ձեզ իմ պատճառովն որ (ինձ համար) նորանց և հեթանոսներին վկայուի լինի :

19 Բայց երբոր կըմտանեն ձեզ , հոգս չի՛ անէք՝ թէ ի՞նչ սկսուի կամ ինչ սխալ խօսիք . ինչուոր՝ հենցէն ժամուսն (« հասուն ») կըտրվի ձեզ ինչ որ սխալ խօսիք :

20 Պատճառնոր՝ չէ՛ թէ դուք էք որ կըխօսիք , բայց ձեր հօր հոգին է որ ձեզ անուամ կըխօսի :

21 Եղբայրն եղբօրըն մահու կըմտանէ , և հայրն որդոյն . որդիքն վերկրկենան իրանց հօր վերայ՝ և նորանց կըսպանեն :

22 Եւ ամէնին տեսլի կըլինիք իմ անունիս համար . բայց ով որ կըհամբերէ մինչև վերջն՝ նա կապրի :

23 Եւ երբոր էս քաղաքումս հալածեն ձեզ , փախէք ուրիշն . և թէ որ նորանից էլ հալածեն ձեզ , փախէք էն մէկէն : Ղշմարտաւորն ասուեմ ձեզ , որ չէք վերջացնել իս

խորայելի՛ մինչև եկեսցէ որ-
դի մարդոց :

24 Ո՛չ է աշակերտ առաւել
քան զվարդապետ, և ոչ ծա-
ռայ քան զտէր իւր :

25 Շո՛տ իցէ աշակերտին՝
եթէ եզիցի իբրև զվարդա-
պետ իւր, և ծառային՝ իբրև
զտէր իւր: Եթէ զտանուտէրն
բէեզգեբուղ կոչեցին, որչափ
ևս առաւել զընտանիս նորա :

26 Ի՞նչ այսուհետև երկնչի-
ցիք ՚ի նոցանէ . զի ոչ ինչ է
՚ի ծածուկ՝ որ ոչ յայանեսցի,
և գաղանի՛ որ ոչ ծանիցի :

27 Ձ որ սսեմ՝ ձեզ ՚ի խա-
ւարի՛ սասցէք ՚ի լոյս . և զոր
լսիցէք յունկանէ՛ քարոզե-
ցէք ՚ի վերայ տանեաց :

28 Եւ մի՛ երկնչիք յայնցա-
նէ՛ որ սպանանեն զմարմին, և
զողի ոչ կարեն սպանանել .
այլ երկերուք դուք առաւել
յայնմանէ՛ որ կարողն է զողի
և զմարմին՝ կորուսանել ՚ի
զեհենի :

29 Ո՛չ ապաքէն երկու ճըն-
ճզուկք դանդի միջ վաճա-
ռին, և մի ՚ի նոցանէ յերկիր
ոչ անկցի առանց հօր ձերոց :

30 Այլ ձեր՝ և ամենայն իսկ

լայելի քաղաքներըն՝ մինչև
որդին մարդոց կըգայ :

24 Աշակերտն վարպետիցն
աւելի չէ, և ոչ էլ ծառայն
իրան տէրիցն :

25 Բաւական է՝ թէ աշա-
կերտն իրան վարպետի նման
լինի . և ծառայն՝ իրան տե-
րոջ նման : Թէ որ տանու-
տէրըն բէեզգեբուղ ասացին,
այ՞մ որքան աւելի նորա ըն-
տանիքըն :

26 Սրահամար չի՛ վախենաք
նորանցից . ինչուոր՝ իսկի ծա-
ծուկ բան չի կայ՝ որ յայտնի
չի լինի . և թաքուռ բան՝ որ
չիմացվի :

27 Ինչ որ խաւարումն ա-
սումեմ՝ ձեզ, լուսի մէջն ա-
սացէք . և ինչ որ տկանջում
լսումէք՝ արներին վերայ քա-
րոզեցէք :

28 Ձի՛ վախենաք նորան-
ցից՝ որ մարմինըն սպանումեն
և հողին կարող չեն սպանել .
բայց աւելի վախեցէք նորա-
նից՝ որ կարող է հողին և
մարմինըն կորցնել դժոխքի
մէջն :

29 Չէ՞ որ երկու ճիտ մին
դանկի ծախվին . և նորանցից
մինն չի՛ ընկնիլ գետինն ա-
ռանց ձեր հօրն :

30 Բայց ձեր զլսի ամէն մա-

հեր զլևոյ թուեալ է :

31 Եւ արդ՝ մի երկնչիցիք՝ զի լաւ էք քան զբազում ճշն- ճղուկս :

32 Ամենայն որ խոստովա- նեայի յիս առաջի մարդկան , խոստովանեցից և ես զնմանէ առաջի հօր իմոյ որ յերկինս սըն է :

33 Եւ որ ուրաայի զիս ա- ռաջի մարդկան , ուրայոյց և ես զնա առաջի հօր իմոյ՝ որ յերկինս է :

34 Մի համարէք եթէ եկի արկանել խաղաղութիւն յեր- կիր . ոչ եկի արկանել խաղա- ղութիւն , այլ սուր :

35 Քանզի եկի քակել զայր՝ ՚ի հօրէ իւրմէ , և զբոսոր ՚ի մօրէ , և զհարսն ՚ի սկեսրէ իւրմէ :

36 Եւ թշնամիք առն՝ ըն- տանիք իւր :

37 Որ սիրէ զհայր կամ ըղ- մայր առաւել քան զիս , ոչ է ինձ արժանի . և որ սիրէ զուս- տըր կա՛ր զբոսոր առաւել քան զիս , չէ՛ ինձ արժանի :

38 Եւ որ ոչ առնու զխնչ իւր՝ և զայ զինի իմ , չէ՛ ինձ արժանի :

39 Որ գտանէ զանձն իւր՝

զերն էլ համարիած է :

31 Ուրեմն չի՛ վախենաք . ինչ- չուոր՝ դուք աւելի լաւ էք քան շատ ծըտերն :

32 Ամէն ո՛վ որ ինձ մարդ- կանց առաջին կըդաւանէ . ես էլ նորան կըդաւանեմ իմ հօրս առաջին որ երկնքուսն է :

33 Եւ ո՛վ որ ինձ կուրանայ մարդկանց առաջին՝ ես էլ նո- րան կուրանամ իմ հօրս առաջին՝ որ երկնքուսն է :

34 Չի կարծէք թէ եկել է մ երկրիս վերայ խաղաղու- թիւն քցել , չեմ եկել խաղա- ղութիւն քցել , բայց սուր :

35 Պատճառնոր՝ եկի որ մարդըն իրան հօրիցն , և աղ- ջիկըն իրան մօրիցն , և հարս սըն իրան սկեսուրիցն բաժա- նեմ :

36 Եւ մարդոյ թշնամինե- րըն իրան ընտանիքն կըլինին :

37 Ո՛վ որ հայրն կամ մայ- րըն ինձանից աւելի կըսիրէ , նա ինձ արժանի չէ՛ . և ո՛վ որ իրան որդին կամ աղջիկըն ինչ- ձանից աւելի կըսիրէ , նա ինձ արժանի չէ՛ :

38 Եւ ո՛վ որ իրան խաչըն չառնէ և իմ ետեւէս դայ , նա ինձ արժանի չէ՛ :

39 Ո՛վ որ իրան անձըն զըս-

կորուսցէ զնա, և որ կորցս զանձն իւր վասն իմ, գոցէ զնա :

40 Որ ընդունի զձեզ՝ զնա ընդունի, և որ զնա ընդունի՝ ընդունի զառաքելն իմ :

41 Որ ընդունի զմարգարէ յանուն մարգարէի, զվարձս մարգարէի առցէ . և որ ընդունի զարգար յանուն արգարցի՝ զվարձս արգարցի առցէ :

42 Եւ որ արքուսցէ միում ՚ի փոքրկանցս յայցոյանէ բաժակ մի ջուր ցուրա միայն՝ յանուն աշակերտի, ամէն սանմ ձեզ, ոչ կորուսցէ զվարձս իւր :

ԳԼ • ԺԱ •

1 Եւ եղև եբրև կատարեաց յս զպատուէր երկուսանից աշակերտացն իւրոց, գնաց անտի քարոզել և ուսուցանել ՚ի քաղաքս նոցա :

2 Իսկ յովհաննէս իբրև լուաւ ՚ի բանտին զգործսն քսի, առաքեաց ՚ի ձեռն աշակերտաց իւրոց :

3 Եւ ասէ ցնա. դձև ես որ

նումէ՝ կըկորցնէ նորան, և ով որ իրան անձնն ինձ համար կորցրուց, կըզանէ նրան :

40 Ով որ ձեզ կընդունի՝ ինձ կընդունի . և ով որ ինձ կընդունի, իմ ուղարկողն կընդունի :

41 Ով որ մարգարէ կընդունի մարգարէի անունովն՝ նա մարգարէի վարձք կառնէ . և ով որ արգարը կընդունի արգարի անունովն՝ արգարի վարձք կառնէ :

42 Եւ ով որ էս փոքրնէրիցս մընին՝ մէնակ մին աման ցուրտ ջուր խմայցնէ աշակերտի անունովն, ճշմարիտըն սուսմմ ձեզ, նա չի՛ կորցնի իրան վարձքըն :

1 Եւ էլաւ եբբոր Յս իրան ասաներկու աշակերտներ ի պատուիրանքներն վերջացրուց, էստեղիցն գնաց նրանց քաղաքներումն քարոզաւուց և սովորցնելուց համար :

2 Բայց յօհաննէս եբբոր բանտումն (զընասանս) քսի գործքերն լսեց, իրան աշակերտների ձեռովն ուղարկեց :

3 Եւ նորան ասաց . դձև

գալոյն ես, եթէ այլում ակն կայցուք :

4 Պատասխանի ետ յս՝ և ասէ ցնոսա . գնայէք պատմեցէք յովհաննու՝ զոր լուայք և տեսէք :

5 Այլք՝ տեսանեն, կազք՝ գնան, բորոտք՝ սրբին, և խուլք լսեն, և մեռեալք յառնեն, և աղքատք աւետարանին :

6 Եւ երանեալ է՝ որ ոչ գայթազդեսցի յիս :

7 Եւ իբրև նոքա գնային, սկսաւ յիսուս ասել ցժողովուրդսն զյովհաննէ . զի՞նչ ելէք տեսանել յանապատին . եղե՞զն շարժուն ՚ի հողմց :

8 Այլ զի՞նչ ելէք տեսանել, մա՞րդ ՚ի հանդերձս փափկուէ զարդարեալ . ահաւտնիկ որ զփափուկսն զգեցեալ են՝ ՚ի տունս թագաւորաց են :

9 Այլ զի՞նչ ելէք տեսանել . մարդարէ՞ . այո՛ . ասեմ ձեզ, և առաւել ևս քան ըզմարդարէ :

10 Զի նո՛ս է՝ վասն որոյ գրեալն է . ահա ես առաքե-

աւ էն որ պէտք է գաս, թէ ուրեշի սպասենք :

4 Յս պատասխան տուաւ և նորանց ասաց . զընայէք՝ յօհաննէսին պատմեցէք . ինչ որ լսեցիք և տեսիք :

5 Աուրերն տեսնումեն, կազերն գնումեն . բորոտներն սրբովումեն . խուլերն (սառէրն) լսումեն, մեռելներն յարուէն առնում, և աղքատներն աւետարան է քարոզվում :

6 Եւ երանելի է նա, որ ինձ վերայ չի՛ գայթակղվի :

7 Բայց երբ որ նորանք գնացին, Յս սկսեց ժողովուրդներին ասել յօհաննէսին համար . (դուք) դուրս գնացիք ի՞նչ տեսնել անապատումն (չէօղտն) . եղևրբն (դասիշքն)՝ որ քամուցն շարժվումէ :

8 Ապա ի՞նչ տեսնել դուրս գնացիք, մա՞րդ փափուկ շրթերով զարդարված . ահա նրնք որ փափուկ հագած են՝ թագաւորաց տներուքն են :

9 Ուրեմն (դուք) ի՞նչ տեսնել դուրս գնացիք . մարդարէ՞՞ իրաւի ասումեմ ձեզ, որ մարդարէից էլ շատ աւելի է :

10 Ինչու որ՝ նա է էն՝ որ նորա համար գրված է . ահա ես

ցից զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց , որ պատրաստեսցէ զճանապարհ քո առաջի քոյն :

11 Լ՛մէն ստեմ՝ ձեզ . չէ՛ յարուցեալ ՚ի ծնունդս կանանց մեծ քան զյովհաննէս մկրտիչ . բայց փոքրիկն յարքայայուէ երկնից մե՛ծ է քան զնա :

12 Բայց յաւուրցն յովհաննու մկրտչի մինչև ցայժմ , արքայութիւն երկնից բռնադատի , և բռնուք յափշտակեն զնա :

13 Քանզի ամենայն օրէնք և մարգարէք մինչև յովհան մարգարէացան :

14 Եւ թէ կամիք ընդունել՝ նա է եղիա՝ որ գալոցն է :

15 Որ ունիցի աղանջո լսելոյ՝ լուիցէ :

16 Ո՞ւմ նմանեցուցից զազգըս զայս . նման է մանկաւոյ՝ որ նստիցին ՚ի հրապարակս , կարդայցեն զընկերս իւրեանց ,

17 Եւ ասիցեն . փողս հարաք ձեզ՝ և ոչ կաքաւեցէք , ողբացաք ձեզ՝ և ոչ կոծեցարուք :

18 Եկն յովհաննէս , ոչ ուտէր և ոչ ըմպէր . և ասեն՝

իմ հրեշտակըս կուղորկեմք երեսիդ առաջին , որ քո առաջիդ քո ճանապարհըն պատրաստէ :

11 Ղըմարիտըն ստուեմ՝ ձեզ՝ որ կանանց ծնվածների մէջն աւելի մեծ առաջեկած չէ . քան յօհաննէս մկրտիչն . բայց երկնքի արքայութեան միջի փոքրն նորանից մեծ է :

12 Բայց յօհաննէս մկրտչի օրերիցն մինչև հիմիկ երկնքի արքայութիւն ուժով առնվումէ՝ և ուժովներն յափշտակումեն նորան :

13 Ինչու որ՝ ամէն օրէնքն և մարգարէքն մինչև յօհաննէսն մարգարէացան :

14 Եւ թէ կամենաք ընդունել , նա է եղիան՝ որ պէտք էր գայ :

15 Ո՞վ որ լսելոյ աղանջ ունի՝ թող լսէ :

16 Ո՞ւմ նմանեցնեմ էս ազգըս . էն աղայոցն նման է՝ որ փողոցներումն նստին և իրանց ընկերներին կանչեն :

17 Եւ ասեն . փող փչեցինք ձեզ համար՝ և պար չի՛ եկիք . ողբ արինք ձեզ համար՝ և լազ չէլաք :

18 Յօհաննէսն եկաւ , ոչ ուտումէր և ոչ լսումէր՝ և

դե՛լ գոյ ՚ի նմա :

19 Եկն որդի մարդոց՝ ուտէ և ըմպէ, և ստեն, ահա այր կերող և արբեցող, բարեկամ մարտաւարաց և մեղաւորաց, և արդարացուն իմաստութիւն յորդոց իւրոց :

20 Յայնժամ սկսաւ նախատել զքաղաքսն՝ յորս եղեն բազում զօրութիւնք նորա, և ոչ ապաշխարեցին :

21 Ասի քեզ քորազին, վայրեզ բեթսայիդա. զի եթէ ՚ի տիւրոս և ՚ի սիտոֆն եղեալ էին զօրութիւնքն՝ որ ՚ի ձեզ եղեն, վաղու ևս արդեօք խորդով և մոխրով ապաշխարեալ էր :

22 Բայց ասեմ ձեզ. դիւրագոյն լիցի երկրին տիւրոսի և սիգոֆնի յաւուրն ՚դատաստանի՝ քան ձեզ :

23 Եւ դու կանխաւնաում, մի մինչև յերկինս բարձրացիս. այլ մինչև ՚ի դժոխս իջցիս. զի եթէ ՚ի սողոմ եղեալ էին զօրութիւնքն՝ որ եղեն ՚ի քեզ, ապաքէն կալին ևս մինչև ցայս օր :

24 Բայց ասեմ ձեզ՝ եթէ երկրին սողովմացոց դիւրա-

ստումեն՝ դե կայ նորանում :

19 Որդին մարդոց եկաւ՝ ուտումէ և խմումէ, և ստումեն. ահա ուտող և խմող մարդ, մարտաւորների (հիւսթիւ-սչինէրի) և մեղաւորների բարեկամ և իմաստունն արդար դատվեցաւ իրան որդիքներիցն :

20 Ինչժամանակն սկսեց նախատինք տալէն քաղաքներին՝ ուր որ նորա շատ հրաշքներն էլան՝ և չի՛ ապաշխարեցին :

21 Ասի քեզ քորազին. վայրեզ բեթսայիդա. ինչուոր եթէ տիւրոսի և սիգոֆնի մէջն էլած էին էն հրաշքներն որ ձեր մէջն էլան, շատ կանուխ քրձով (ճաղի շորոջ) և մոխրով ապաշխարել էին :

22 Բայց ասումեմ ձեզ, դատաստանի օրումն աւելի հեշտ կըլինի տիւրոսի և սիգոֆնի երկրին համար՝ քան ձեզ :

23 Եւ դու կանխաւնայում մինչև երկինքն չի՛ բարձրանաս, բայց մինչև դժոխքն կը ցածանաս : Ինչուոր՝ եթէ սողոմի մէջն էլած էին էն հրաշքներն՝ որ քեզանում էլան, ուղորդ է որ մինչև էսօր դեռ մնումէին :

24 Բայց ասումեմ ձեզ, որ դատաստանի օրումն սողոմա-

դնին լիցի յառուրն զատաստանի՝ քան քեզ :

25 Յայնմ ժամանակի պատասխանի ետ յս՝ և սսէ . գոհատամ զքէն հայր՝ աէր երկնի և երկրի . զի ծածկեցեր զայս յիմաստնոյ և ՚ի գիտնոյ , և յայսնեցե՛ր տղայոյ :

26 Այս հայր . զի սյապէս հաճոյ եղև առաջի քոյ :

27 Ամենայն ինչ տուաւ ինձ ՚ի հօրէ իմմէ . և ոչ ոք ճանաչէ զորդի՛ եթէ ոչ հայր . և ոչ զհայր որ ճանաչէ՛ եթէ ոչ որդի, և ում որդին կամիցի յայտնել :

28 Եկոյք առիս ամենայն վատտակեալք և բեռնաւորք , և ես հանգուցից զձեզ :

29 Առէք զլուծ իմ ՚ի ձեզ , և ուսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնորհ սրտիւ . և զըաջիք հանգիստ անձանց ձերոյ :

30 Ձի լուծ իմ քողցր է , և բեռն իմ փոքրոզի :

ԳԼ .

1 Յայնժամ գնաց յս ընդ

ցոյ երկրին համար աւելի հեշտ կըլինի քան ձեզ :

25 Ին ժամանակն Յս պատասխան տուաւ և սասց . գոհատամ քեզանից . ով հայր երկնի և երկրի Տէր . որ իմաստուններիցն և զիտուններին էս բանըս ծածկեցիր՝ և տղաներին յայտնեցեր :

26 Ի՛սպէս է ով հայր . ինչու որ՝ հսպէս հաճոյ էլաւ քո առաջիդ :

27 Ամէն բան ինձ տըվլաւ իմ հօրիցն . և ոչ ով չի՛ ճանաչում որդոյն . բայց միայն հայրն . և ոչ ով չի՛ ճանաչում հօրըն՝ բայց միայն որդին . և ում որ որդին կամենայ յայտնել :

28 Ինձ մօտ եկէք՝ ամէն վատտակածներ և բեռնաւորներ , և ես հանգիստ կըտամ ձեզ :

29 Իմ լուծըս ձեզ վերայ առէք , և ինձանից ստիղբեցէք . ինչու որ՝ ես հեզահօզի եմ և սրտովս խոնորհ . և ձեր անձին համար հանգստութիւն կըզանէք :

30 Ինչու որ՝ իմ լուծս քողցր է , և իմ բերս թեթև է :

ԺԲ .

1 Ին ժամանակն Յս շա-

արտորայսն նոցա ՚ի շաբաթու . և աշակերտքն նորա քաղցեան, և սկսան հասկ կորզել և ուտել :

2 Փարխեցիքն իբրև տեղին՝ ստեն ցնա . ահաւանիկ աշակերտքն քո գործեն, զորնչ է արժան գործել ՚ի շաբաթու :

3 Եւ նա սսէ ցնոսա . ոչ էցէ ընթերցեալ ձեր՝ զորարձր դաւիթ, յորժամ քաղցեաւն, և որ ընդ նմայն էին :

4 Չ իմրդ եմուտ ՚ի տունըն իմ և եկեր զհաց զառաջաւորութեանն . զորնչ էր օրէն նմա ուտել, և ոչ՝ օրոց ընդ նմայն էին, բայց միայն քահանայից :

5 Աամ թէ չիցէ՝ ընթերցեալ յօրէնս, զի ՚ի շաբաթս քահանայքն՝ ՚ի տաճարին պղծեն զշաբաթն, և անմեղք են :

6 Բայց սսեմ ձեզ՝ զի մեծքան զտաճարն է սստ :

7 Եւ եթէ զխտէիք զինչ է՝ զողորմութիւն կամիմ՝ և ոչ զզոհ . ապա ոչ դատապարտէիք դուք զանպօրտորն :

բաթ օրումն գնաց նորանց արտերի մէջն, և նորա աշակերտներն սովեցին, և սկսեցին հասկ պոկել և ուտել :

2 Երբոր փարխեցիքն տեղին՝ նորան սսային . ահա՛ քո աշակերտներդ բան են անում որ արժան չէ շաբաթ օրումն անել :

3 Նա էլ սսաց նորանց դուք չէ՞ք կարգացել էն՝ որ դաւիթն արաւ էն ժամանակն որ ինքն սովեց . և նորանք էլ որ նորա հետ էին :

4 Թէ ինչպէս մտաւ Այտունն՝ և առաջաւորութեան հացըն (Աստուծոյ սէղանին մէջս դրած հացքն) կերաւ . որ օրէնք չէր նորան ուտել, և ոչ էլ նորանց որ նորա հետ էին, բայց միայն քահանայից :

5 Աամ թէ՛ չէ՞ք կարգացել օրէնքումն, որ քահանայքըն շաբաթ օրերումն տաճարի մէջն շաբաթըն պղծումն և մեղք չէ՛ նորանց :

6 Բայց ստուեմ ձեզ, որ տաճարիցըն էլ մեծն է էստեղ :

7 Եւ թէ որ զխտէիք ինչ է էն բանն՝ թէ ողորմութիւն եմ ուզում և ոչ թէ պատարադ, դուք չէիք դատապարտիլ էն անմեղներն :

8 Ձի աէր է շաբաթու՝
որդին մարդոյ :

9 Եւ զնայեալ անտի յս,
եկն ՚ի ժողովուրդն նոցա :

10 Եւ անդ էր անժամբ՝ որոյ
ձեռն իւր գօսացեալ էր. հար-
ցին ցնա՝ և ասեն, եթէ պարտ
իցէ ՚ի շաբաթու բժշկել. զի
չարախօսեսցեն զնմանէ :

11 Եւ նա՝ ասէ ցնոսա . ո՛վ
իցէ ՚ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ
ոչխար մի, և անկանիցի պն՝ ՚ի
խորխորատ ՚ի շաբաթու . մի
թէ ոչ ունիցի և յարուցանի-
ցէ զնա :

12 Իսկ արդ՝ զնա փ ևս՝ ա-
ռաւել է մարդ քան զոչխար,
սպա ուրեմն պարտ է ՚ի շա-
բաթու բարին գործել :

13 Յայնժամ ասէ ցայրն .
ձգեա՛ զձեռն քո, և նա ձը-
գեաց՝ և եղև ո՛ղջ իբրև ըզ-
մուսն :

14 Իսկ փարիսեցիքն ելեալ
արտաքս խորհուրդ արարին
զնմանէ՝ թէ զնա պէտք կորուս-
ցեն զնա :

15 Եւ յս իբրև գիտաց,
մեկնեցաւ անտի . և գնացին
զհետ նորա ժողովուրդք բա-
զումք, և բժշկեաց զամենե-
սեան :

8 Ինչուոր՝ շաբաթու աէ-
րըն՝ որդին մարդոյ է :

9 Եւ Յս կնտեղից գնաց՝
եկաւ նորանց ժողովարանի
մէջ :

10 Եւ կնտեղ մին մարդ
կար՝ որ նորա ձեռն չորացած
էր. նրն հարցրին և ասացին.
Թէ շաբաթ օրուսն պէտք
է բժշկութիւն անել . որ
նորանից չարախօսեն :

11 Եւ նա ասաց նորանց. ո՛վ
է ձեզանից էն մարդն՝ որ մին
ոչխար ունենայ և էն ընկնի
փոսի մէջ շաբաթ օրուսն. մի-
թէ չի՞ բռնիլ նորան և վեր-
կացնիլ :

12 Ապա՛ որքան աւելի է
մարդ քան թէ ոչխար . նրա-
համար պէտք է շաբաթ օ-
րուսն բարիք գործել :

13 Ինչ ժամանակն ասաց էն
մարդոցն. ձեռը միկնիլ, նա
էլ մեկնեց. և ողջէլաւ էն մէ-
կէլին պէս :

14 Բայց փարիսեցիքն դուրս
գնացին՝ և նորահամար խոր-
հուրդ արին՝ թէ չպէտք կոր-
ցնեն նորան :

15 Եւ Յս երբոր խմացաւ,
էն տեղից հեռացաւ . և շատ
ժողովուրդներ նորա ետեէն
գնացին՝ և ամէնքըն բժշկեց :

16 Եւ սաստեաց նոցա՝ զի մի յայանեոցին զնմանէ ումեք :

17 Ձի լցցի որ սասցաւն ՚ի ձեռն եսայայ մարդարէի :

18 Ահա մանուկ իմ՝ զոր ընտրեցի, և սիրելի իմ՝ ընդ որ հաճեցաւ անձն իմ. եղից զողի իմ ՚ի վերայ նորա, և բաւուեսս հեթանոսաց պատմեցէ :

19 Ոչ հակառակեսցի՝ և ոչ աղաղակեսցէ, և ոչ չոք լուկցէ ՚ի հրապարակս զբարբաւ նր :

20 Ձեղէգն ջաղջախեալ ոչ փշոնցէ, և զպտորոցին առկայծեալ ոչ շիջուցէ. մինչև հանցէ ՚ի յաղթուածիւն զդատաստանն :

21 Եւ յանուեն նորա հեթանոսք յուսացին :

22 Յայնժամ մատուցաւ առ նա զիւրահար մի կոյր և համբ, և բժշկեաց զնա. որպէս զի համբն և կոյրն խօսիցի և տեսանիցէ :

23 Ձարմացան ամենայն ժողովուրդքն՝ և ասէին. միթէ՛ սօ իցէ Քրիստոսն որդի դաւթի :

24 Բայց փարիսեցիքն իբրև

16 Եւ նորանց սաստեց՝ որ իրանից մին մարդոց բան չի յայանեն :

17 Որ կտտարվի եսայի մարդարէի ձեռովն ասլածն :

18 Ահա իմ մանուկս՝ որ ես ընտրեցի. և իմ սիրելիս՝ որ իմ անձն հաւանել է նորան. իմ հօգիս նորա վերայ կը դնեմ, և հեթանոսներին իրաւունքըն կը պատմէ :

19 (Նա) չի՛ հակառակիլ՝ և չի՛ աղաղակիլ, և փողոցներէ մէջն՝ ոչ ով նորա ձայնըն չի լսիլ :

20 Ձարդված եղէգն (չափշն) չի փշոիլ, և վերջի կայծըն հասած պատրիքըն չի անցկացնիլ. մինչև դատաստանըն զլուսի հանէ յաղթուածիւնով :

21 Եւ նորա անուենին՝ հեթանոսներն յոյս կը դնեն :

22 Ին ժամանակն մին կոյր և համբ (լուկէ) զիւրահար բերին նորա մօտ՝ և նորան բժշկեց Կնպէս որ համբըն և կոյրն խօսեց և տեսաւ :

23 Ամէն ժողովուրդներըն զարմացան և ասումէին. չի՛ նի՞ թէ սո՛ է Քրիստոսն դաւթի որդին :

24 Բայց փարիսեցիքն երբ

իման՝ ասեն . ոչ իւրք հանէ
դա զգեա՝ եթէ ոչ բէեղղե-
բուղաւ իշխանաւն զիւաց :

25 Իբրև գիտաց յս զխոր-
հուրդս նոցա՝ ասէ յնոսս . ա-
մենայն թագաւորութիւն բա-
ժանեալ յանձն իւր՝ աւերի .
և ամենայն քաղաք կամ տուն
բաժանեալ յանձն իւր՝ ոչ
կայցէ :

26 Եւ եթէ ստտանայ զստ-
տանայ հանէ, յանձն իւր բա-
ժանեցաւ . արդ՝ զիւրդ կաց-
ցէ թագաւորութիւն նորա :

27 Եւ եթէ ես բէեղղեբու-
ղաւ հանեմ զգեա՝ որդիքն
ձեր ի՞նչ հանիցեն . վասն այ-
նորիկ նոքս եղիցին ձեր դա-
տաւորք :

28 Ապա եթէ հողաւ ոյ
հանեմ զգեա՝, ուրեմն հա-
մեալ է ՚ի վերայ ձեր արքա-
յութիւն Աստուծոյ :

29 Կամ՝ զիւրդ կարէ ոք
մասնել ՚ի տուն հլօրի՝ և ըզ
դործին նորա յափշտակել .
եթէ ոչ նախ կապիցէ զհօրն
և ապա զտունն նորա յափշ-
տակիցէ :

30 Որ ոչ բնդիս է՝ հակա-

բոր լսելին՝ ստացին , թէ
դա դեւերն ուրիշ բանով չի
հանում՝ բայց միայն բէեղղե-
բուղ դեւերի իշխանի ձեռովն :

25 Երբոր Յս նորանց միա-
քըն իմացաւ , նորանց ստաց ,
ամէն թագաւորութի որ իբան
մէջն բաժանված է՝ կըկոր-
ծանիլ . և ամէն քաղաք կամ
տուն որ իբան մէջն բաժան-
ված է՝ չի մնալ :

26 Եւ թէ որ ստտանայն
ստտանային հանէ , իբան մի-
ջումն բաժանվեցաւ , էլ ինչ
պէս նորա թագաւորութիւնն
կըկենայ :

27 Եւ եթէ ես բէեղղեբու-
ղաւն եմ հանում դեւերն , ա-
պա ձեր որդիքն ինչով կըհա-
նեն . նրահամար նորանք կը-
լինին ձեզ դատաւոր :

28 Ապա թէ որ ես Այ հո-
գովն եմ հանում դեւերն , ու-
րեմն Այ արքայութիւնն ձեզ
վերայ հասել է :

29 Կամ ինչպէս մին մարդ
կարող է զօրաւոր մարդոյ
տունն մանել , և նորա բա-
ներն յափշտակել . թէ որ
առաջ էն զօրաւոր մարդըն
չի կապէ և յետոյ նորա տունն
յափշտակէ :

30 Ով որ ինձ հետ չէ . (նա)

ևսկ իմ է . և որ ոչ ժողովէ
ընդ իս՝ ցրուէ :

31 Ասան այդորիկ սսեմ
ձեզ . ամենայն մեղք և հայհո-
յուլթիւնք թողցին մարդկան,
բայց զհոգւոյն հայհոյուլթիւն
մի թողցի :

32 Եւ որ ոք ստիցէ բան
ղորդուց մարդոյ՝ թողցի նմա .
բայց որ զհոգւոյն սքայ ստիցէ՝
մի թողցի նմա , մի յայսմ աշ-
խարհի , և մի ՚ի հանդերձե-
լումն :

33 Կամ արարէք ծառն բա-
րի՝ և զպտուղ նորա բարի ,
կամ արարէք զծառն չար՝ և
զպտուղ նորա չար . քանզի ՚ի
պտղոյ անտի ծառն ճանաչի :

34 Ծնունդք իժից , զիմորդ
կարիցէք բարիս խօսել՝ որ
չարքէ էք . քանզի ՚ի յաւել-
ուածոյ սրտի խօսի բերան :

35 Մարդ բարի՝ ՚ի բարի
գանձուց սրտի իւրոց հանէ ըզ
բարիս . և մարդ չար՝ ՚ի չար
գանձուց սրտի իւրոց հանէ ըզ
չարիս :

36 Բայց սսեմ ձեզ , թէ
ընդ ամենայն դատարկ բանի
զոր խօսիցին մարդիկ , տացեն

ինձ հակառակ է . և ով որ
ինձ հետ չի՝ ժողովում՝ (նա)
ցըրվումէ :

31 Դրահամար սսուսեմ
ձեզ՝ ամէն մեղք և հայհոյանք
կըթողվին մարդկանց , բայց
հոգոյն դէմ հայհոյանքն չի՝
թողվիլ :

32 Եւ ով որ որդոյն մար-
դոց դէմ բան սսէ՝ կըթողվի
նորան . բայց ով որ սք հո-
գոյն դէմ սսէ , նորան չի՝
թողվիլ , ոչ էս աշխարհ-
քումս՝ և ոչ էն :

33 Կամ ծառն բարի ա-
րէք՝ և նորա պտուղն էլ բա-
րի . կամ ծառն չար արէք՝
և նորա պտուղն էլ չար .
ինչուոր ծառն իրան պտղիցն
կըճանաչվի :

34 Օձի զաւակներ՝ դուք
ի՛նչպէս կարօղ էք բարի բա-
ներ խօսիլ , որ չար էք , ին-
չուոր՝ սրտի աւելացածիցն կը
խօսի բերանն :

35 Բարի մարդն իրան սըր-
տի բարի գանձիցն (խաղնայն-
ցն) բարիք կըհանէ , և չար
մարդն իրան սրտի չար գանձի-
ցն չար կըհանէ :

36 Միայն թէ սսուսեմ ձեզ .
թէ ամէն դատարկ բանի հա-
մար որ մարդէք կըխօսին՝ պա-

Համար յառուրն դատաստանի :

37 Ձի ՚ի բանից քոյ՝ արդարացիս , և ՚ի բանից քոյ՝ պարտաւորեսցիս :

38 Յայնժամ պատասխանի ետուն նմա ոմանք ՚ի դպրայն և ՚ի փարիսեցւոց՝ և տեսն . վանդապետ՝ կամիմք նշան ինչ տեսանե՞լ ՚ի քէն :

39 Նա պատասխանի ետ՝ և առէ ցնոսա . ազգ չար և շնացող նշան խնդրէ . և նշան՝ մի տացի նմա , բայց նշանն յովնանու մարգարէի :

40 Ձի որպէս էր յովնան ՚ի փոր կիտին զերիս տիւս և զերիս գիշերս , նոյնպէս եղիցի և որդի մարդոյ ՚ի սիրտ երկրի զերիս տիւս և զերիս գիշերս :

44 Ա՛րք նինուէացիք յարիցեն ՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապարտեսցեն զսա , զի զոջայանն ՚ի քարոզուէն յովնանու . և արդ աւասիկ մե՛ծ քան զյովնանն՝ է սատ :

42 Դշնոյն հարաւոյ յարիցէ ՚ի դատաստանի ընդ ազգիս ընդ այսմիկ՝ և դատապար-

տասխան պիտի տան դատաստանի օրուսն :

37 Ինչուոր՝ քո խօսքերիցդ կարդարանաս , և քո խօսքերիցդ կըդատապարտվիս :

38 Ի՛ն ժամանակն մին քանիսն կարդացողներինցն և փարիսեցիքներինցն պատասխան տուին և ասացին . վարդապետ՝ ուզումես որ քեզանից մին նշան տեսնեմք :

39 Նա պատասխան տուաւ և նորանց ասաց . չար և շնացող ազգն նշան է ուզում , և նշան չի՛ տրվվի՛լ նորան . բայց միայն յօնան մարգարէի նշանըն :

40 Պատճառնոր՝ ինչպէս յօնան երեք օր և երեք գիշեր կէտ ձկան փորուսն էլաւ՝ էնպէս էլ որդին մարդոյ երեք օր և երեք գիշեր երկրի սրտուսն կըլինի :

44 Նինուէացոյ մարդիքն դատաստանուսն վերկրկենան էս ազգիս հետ , և սորան կըդատապարտեն . ինչուոր՝ նրնք յօնանու քարոզութենովն ապաշխարեցին . և հիմիկ ահա յօնանիցն էլ մեծն է էստեղ :

42 Հարաւային երկրի թագուհին դատաստանուսն վերկրկենայ էս ազգիս հետ՝ և սո .

տեսցէ զսա . զի եկն ՚ի ծա-
գաց երկրի լսել զլմաստու-
թիւնն սողովմոնի . և ահա
մե՛ծ քան զսողովմոն՝ է աստ:

43 Այլ յորժամ այսն պիղծ-
եւանիցէ ՚ի մարդոց՝ շրջի ընդ
անջրդին տեղիս, խնդրէ հան-
դիստ՝ և ոչ գտանէ :

44 Յայնժամ ասէ . դարձոյց
՚ի տուն իմ՝ ուստի ելի . և ե-
կել գտանէ պարսպոնք մտք-
քեալ և յարդարեալ :

45 Յայնժամ երթայ և առ-
նու ընդ իւր՝ եօթն այլ այսս
չարագոյնս քան զինքն, և մը-
տեալ բնակէ անդ . և լինի յե-
սին մարդոցն այնորիկ չար
քան զառաջինն . այնպէս եղի-
ցի և ազգիս այսմիկ չարի :

46 Մինչդեռ նա ընդ ժողո-
վուրդսն խօսէր , ահա մայր
նորա և եղբարք նորա կային
արտաքոյ՝ և խնդրէին խօսել
ընդ նմա :

47 Եւ ասէ զմն ցնա , ահա
մայր քո՝ և եղբարք քո՝ կան
արտաքոյ , և խնդրեն խօսել
ընդ քեզ :

րան կըրտատարտէ . ինչու-
որ՝ նա երկրի ծայրիցն եկաւ՝
որ սաղօմօնի խմաստութիւնն
լսէ , և ահա՛ սաղօմօնիցն էլ
մեծն է էստեղ :

43 Բայց ինչ ժամանակ որ
պիղծ դեն դուրս կըրայ մար-
դուցն՝ անջուր տեղերումն
շուռ կըրայ , հանդիստ կըլսըն-
դրէ և չի՛ գտնիլ :

44 Ին ժամանակն կասէ .
յետկըդառնամ իմ տունս՝
որ էնտեղից դուրս եկի . և կը-
գայ նորան կըրտնէ՝ պարսպ՝
սրբված և պարսաստված :

45 Ին ժամանակն կըրնայ
իրանից էլ աւելի չար՝ եօթըն
դե կառնէ իրան հետ , և
կըմտնէ կըբնակիլի էնտեղ . և
էն մարդոց յետինն աւելի
չար կըլինի քան առաջինն .
էսպէս էլ կըլինի էս չար ազ-
գիս :

46 Դեռ քանի որ նա ժողո-
վուրդներին հետ խօսումէր ,
ահա՛ նորա մայրն և նորա եղ-
բարքն դուրսն կանգնել էին՝ և
ուզումէին որ նորահետ խօսին :

47 Եւ մին մարդ նորան ա-
սոց . ահա՛ քո մայրդ և քո
եղբարքդ դուրսն կանգնել են ,
և ուզումն որ քեզ հետ խօ-
սին :

48 Նա պատասխանի ետայն միկ՝ որ ասացն ցնա, և ասէ • ո՞վ է իմ մայր, կամ ո՞վ են իմ եղբարք :

49 Եւ ձգեալ զձեռն իւր յաշակերտանն՝ ասէ • Կհաւատալի մայր իմ և եղբարք իմ :

50 Չի որ անխցի զկամս հօր իմց որ յերկինսն է, նո՞ է իմ եղբայր՝ և քոյր և մայր :

48 Նա պատասխան տուաւ նորան՝ որ ասաց նորան, և ասաց • ո՞վ է իմ մայրս կամ ո՞վ են իմ եղբարքս :

49 Եւ իրան ձեռնն դէպի աշակերտներն մեկնեց՝ և ասաց • Կհաւատալի մայրս և իմ եղբարքս :

50 Ինչուոր՝ ո՞վ որ իմ հօրս կամբքն կըկատարէ որ երկնքուսն է, նո՞ է իմ եղբայրս՝ քոյրս և մայրս :

ԳԼ • ԺԳ •

1 Յաւուր յայնմիկ ելեալ յս ՚ի տանէն՝ նստէր առ ծով եզերն :

2 Եւ ժողովեցան առ նա ժողովուրդք բազումք, մինչև մասնեւ նմա ՚ի նաւն՝ և նըստեւ • և ամենայն ժողովուրդն կայր առ ծովեզերքն :

3 Եւ խօսէր ընդ նոսա բազումս առակօք, և ասէր :

4 Ահսն եւ սերմանահան սերմանեւ • և ՚ի սերմանելն իւրում, էր որ անկաւ առ ճանապարհաւ, և եկն թռչուն երկնից՝ և եկեր զնա :

5 Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հոգ բազում, և վաղվաղակի բուսաւ •

1 Ինչ որուսն Յս տանիցն դուրս գնաց՝ և ծովի եզերն (չբաղն) մօտ նստեց :

2 Եւ շատ ժողովուրդներ նորա մօտ ժողովեցան մինչև որ նա նաւն մտաւ և նստեց, և ամեն ժողովուրդն ծովի եզրուսն (չբաղն) կար :

3 Եւ նորանց հետ շատ բաներ խօսումէր առակներով և ասումէր :

4 Ահսն մին սերմ ցանօղ մարդ դուրս գնաց որ սերմնն ցանէ, և իրան սերմելոյ ժամանակն՝ մինքանիսն ճանապարհին վր ընկաւ • և երկնքի թռչունն եկաւ և նրն կերաւ :

5 Եւ մէկէն ապառաժի վերայ ընկաւ որտեղոր շատ հող չի՛ կար, և շուտով բու-

առ ՚ի չդոյէ հիւթոյ երկրին՝

6 Ի ծագել արևուն տա-
պացան, և զի ոչ գոյին ար-
մատք չորացաւ :

7 Եւ այլն անկաւ ՚ի մէջ
փրշոց, և ելին փուշքն և հեղ-
ձուցին զնա :

8 Եւ այլն անկաւ յերկիր
բարի, և տայր պտուղ . էր՝
որ հարիւրաւոր, և էր՝ որ
վաթսանաւոր, և էր՝ որ երես-
նուոր :

9 Որ ունիցի ականջս լսե-
լոյ՝ լուիցէ :

10 Եւ մատուցեալ աշա-
կերտքն ասեն ցնա, ընդէ՞ր
առաւիօք խօսիս ընդ նոսա :

11 Նա պատասխանի ետ և
ասէ ցնոսա. քանզի ձեզ տու-
եալ է գիտել զխորհուրդս
արքայութեանն երկնից, և նո-
ցա չէ տուեալ :

12 Ձի ոյր գուցէ՝ տոցի
նմա և յաւելցի, և ոյր ոչն
գուցէ՝ և զոր ունիցին բարձ-
ցի ՚ի նմանէ :

13 Ասան անորիկ առաւիօք
խօսիմ ընդ նոսա. զի տեսա-
նեն՝ և ոչ փեսանեն, և լսեն՝

առ հողի պակասութեն պատ-
ճառովն :

6 Երբոր արեգակն ծագեց,
տաքացաւ . և որովհետև ար-
մատ չունէր՝ չորացաւ :

7 Եւ մէկէն ընկաւ փշերի
մէջն՝ և փշերն դուրս եկին և
խեղդեցին նորան :

8 Եւ մէկէն բարի երկրի
վերայ ընկաւ՝ և պտուղ էր
տալիս . որն հարիւր, և որն
վաթսան, և որն երեսուն :

9 Ով որ լսելոյ ականջ ու-
նի՝ թող լսէ :

10 Եւ աշակերտներն մօտ
եկին՝ և նորան ասացին. ին-
չո՞ւ նորանց հետ առականբով
ես խօսում :

11 Նա պատասխան տուաւ՝
և նորանց ասաց . նրահամար
որ՝ ձեզ տրված է գիտել
երկնքի արքայութեան խոր-
հուրդներն, բայց նորանց
չի՛ տրված :

12 Պատճառն որ՝ ով որ ու-
նի՝ նորան կըտրվի և կաւե-
լանայ . և ով որ չունի, նո-
րանից էն էլ որ ունի վեր-
կանվի :

13 Նրահամար առականբով
եմ խօսում՝ նորանց հետ, որ
տեսնուեն՝ և չեն փեսնում :

և ոչ լսեն, և ոչ առնուեն 'ի միտ :

14 Եւ կատարի առ նոսա մարդարէու թիւնն եսայայ՝ որ տսէ . լսելով լուիջիք՝ և մի ի մտոջիք, և տեսանելով տեսջիք և մի տեսջիք :

15 Ձի թանձրացաւ սիրտ ժողովրդեանս այտրիկ, և ազրնջօք իւրեանց ծանոննս լուան . և զաչա իւրեանց կափուցին, զի մի երբէք տեսցեն աչօք՝ և ակնջօքն լուիցեն՝ և սրտիւքն իմասցին, և դարձցին՝ և բժշկեցինց զնոսա :

16 Բայց ձեր երանի է աչայդ՝ զի տեսանեն, և ակրնջայ ձերոց՝ զի լսեն :

17 Լմէն ասեմ ձեզ . զի բազում մարդարէք և արդարք ցանկացան տեսանել զոր տեսանէքդ՝ և ոչ տեսին, և լսել զոր լսէքդ՝ և ոչ լուան :

18 Եւ արդ՝ լուարնօք դուք զառակ սերմանայանին :

19 Յամենայն է՝ որ լսէ ըզբանն արքայութեան՝ և ոչ սուսու 'ի միտ, զայ չարն՝ և յափշտակէ զսերմանեալն 'ի սիրտ նորա . սյն է՝ որ առ

և լսումեն՝ և չեն լսում, և մտքներն չեն առնում :

14 Եւ եսայեայ մարդարէու թիւնն կատարիլումէ նօբանց վերայ՝ որ ասումէ . լսելով կըլսէք, և չէք իմանալ, և տեսնելով կըտեսնէք, և չէք տեսնիլ :

15 Ինչուոր՝ էս ժողովուրդիս սիրտն թանձրացաւ, և իրանց ականջներովն ծանր լսեցին, և իրանց աչքերըն լսիեցին՝ որ իսկի մին ժամանակ աչքերով չի՛ տեսնեն՝ և ականջներով չի՛ լսեն, և սըրտով չիմանան, և յետ դառնան, և ես նորանց բժշկեմ :

16 Բայց երանի է ձեր աչքերին՝ որ տեսնումեն, և ձեր ականջներին՝ որ լսումեն :

17 Ղշմարիտըն ասումեմ ձեզ, որ շատ մարդարէներ և արդարներ ցանկացան տեսնել էն՝ որ դուք տեսնումէք՝ և չի՛ տեսին . և լսել էն՝ որ դուք լսումէք՝ և չի՛ լսեցին :

18 Եւ հիմիկ լսեցէք դուք սերմ ցանօղի առակըն :

19 Ին ամէնիցն՝ որ արքայութեան բանըն լսումէ և միտքն չի՛ առնում, կըզայ չարն և նորա սրտի մէջ սերմաճըն կըյափշտակէ . սա էն

Ճանապարհաւն սերմանեցաւ :

20 Եւ որ յապառաժին սերմանեցաւ՝ այն է, որ իբրև լսէ զբանն, և վազվազակի խնդուլթեամբ ընդունի զնա :

21 Բայց քանզի ոչ ունի արմատս յինքեան, այլ առ ժամանակ մի է. ՚ի լինել նեղուեն և հալածանաց վտանքան իս՝ վազվազակի դայթազ զին :

22 Իսկ որ ՚ի մէջ փշոյն սերմանեցաւ, այն է՝ որ իբրև լսէ զբանն, և հողք աշխարհիս և պտորանք մեծութեան հեղձուցանեն զբանն, և լինի անպտուղ :

23 Իսկ որ յերկիրն բարի սերմանեցաւ, այն է՝ որ իբրև լսէ զբանն, և ՚ի միտ առնու, և տայ զպտուղ, է՝ որ հարիւր, և է՝ որ վաթսուս, և է՝ որ երեսուն. որ ունիցի տկանջս լսելոյ՝ լուսիցէ :

24 Եւ առակ արկառ նուս՝ և սոսի. նմանեցաւ արքայութիւնն երկնից՝ առն որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում :

25 Եւ ՚ի բուն լինել մարդ-

է՝ որ ճանապարհին վերայ սերմվեցաւ :

20 Եւ (էն) որ ապառաժի վերայ սերմվեցաւ՝ նա է, որ երբոր բանըն կըլսէ՝ շուտով ուրախութեամբ կընդունի նորան :

21 Բայց որովհետև արմատ չունի իրան մէջ, քիչ ժամանակ կըճայ. երբոր նեղութիւն և հալածանք կըլինին էն բանին համար, շուտով կըդայթազըզվի :

22 Բայց (էն) որ փշերի մէջն սերմվեցաւ՝ նա է, որ երբոր բանըն կըլսէ, աշխարհքի զբազմունքն և մեծութեան լաբեբայութիւնն էն բանըն խեղդումեն՝ և անպտուղ է լինում :

23 Բայց (էն) որ բարի երկրութեան սերմվեցաւ՝ նա է, որ երբոր բանըն լսումէ՝ (նորան) էլ միտքն է առնում և պտուղ է տալիս. կայ որ հարիւր, և կայ որ վաթսուս, և կայ որ երեսուն :

24 Ուրիշ առակ էլ նրնց առաջին դրաւ և ստայ. երկընքի արքայութիւնն նմանվեցաւ մին մարդոյ՝ որ իրան արտուսն բարի սերմըն ցանեց :

25 Եւ որ ժամանակ մար-

կան , եկն թշնամի նորա , և ցանեաց ՚ի յԵրայ որոմն ՚ի մէջ ցորենոյն և գնաց :

26 Եւ իբրև բուսաւ խոտն և արար պտուղ , ապա երևեցաւ և որոմն :

27 Մատուցել ծառայք տանուտեառնն ասեն ցնա . տէր՝ ոչ սերմն բարի սերմանեցեր յազարակին քում , արդ՝ ուստի՞ ունիցի զորոմն :

28 Եւ նա ասէ ցնոսա . սյր թշնամի արար զայն . ասեն ցնա ծառայքն . կամի՞ս՝ զի երթիցուք քաղեսցուք զայն ՚ի բաց :

29 Եւ նա ասէ ցնոսա . մի . զուցէ մինչ քաղցէր զորոմնն , և զցորեանն ընդ նմին ՚ի բաց խլիցէք :

30 Թո՛ղ տուք երկոցունց աճել ՚ի միասին մինչև ՚ի հունձս . և ՚ի ժամանակի հնձոց ասացից ցհնձօղան . քաղեցէք նախ զորոմնդ , և կապեցէք զայդ խրձունս առ ՚ի յայրել . և զցորեանն ժողովեցէք ՚ի շտեմարանս իմ :

31 Ա՛յլ առակ արկ առ նոսա՝ և ասէ . նման է արքայու թիւն երկնից հառոյ մանանխոյ . զոր առեալ մարդոյ՝

դիքըն քուն էլան , նի թըշնամին եկաւ և ցորենին մէջ որում (քաղհան խոտէք) ցանեց և գնաց :

26 Եւ երբոր խոտն բուսաւ և պտուղ տուաւ՝ ապա որոմն էլ երևեցաւ :

27 Տան տիրոջ ծառաներն եկին նորան ասացին . Տէր՝ չէ՞ որ դու քո արտումն բարի սերմըն սերմեցիր՝ ապա ի՞նչ տեղից է էն որումըն :

28 Նա էլ ասաց նորանց . Թշնամի մարդ է արել էն . ծառաներն ասացին նորան . կամե՞նո՞ւմես որ գնանք էն քաղենք դուքս հանենք :

29 Նա էլ նորանց ասաց . չէ՛ . չի՛ լինի թէ երբոր որումըն քաղէք , ցորենըն էլ նորա հետ դուքս հանէք :

30 Թո՛ղ տուէք որ երկունս միտեղ մեծանան մինչև հունձըն . և հնձի ժամանակն հընձօղներին կասեմ՝ առաջ որումըն քաղեցէք և նորան խուրձ խուրձ կապեցէք այրելոյ համար՝ և ցորենըն ժողովեցէք իմ ամբարներիս մէջն :

31 Մին ուրիշ առակ էլ նորանց առաջին դբաւ՝ և ասաց . երկնքի արքայուին նման է մանանխոյ (խալսալի) հատի՝ որ

սերմանեաց յագարակի իւրում:

32 Որ փոքր է քան զամենայն սերմանիս . և յորժամ աճիցէ, մե՛ծ է քան զամենայն քանջարս . և լինի ծառ՝ մինչև զալ թռչնոց երկնից՝ և հանգչել յոստս նորա :

33 Այլ առակ խօսեցաւ ընդ նոսա՝ և ասէ . նման է արքայութիւն երկնից խմորոց . զոր առեալ կնոջ թաքոյց ՚ի դրիւս երիս ալեր՝ մինչև ամենայն խմորեցաւ :

34 Չայս ամենայն խօսեցաւ յս առակօ՛ք ընդ ժողովուրդսն . և առանց առակի նչինչ խօսէր ընդ նոսա :

35 Ձի լցցի ասացեալն ՚ի մարդարէէ . բացից առակօք զբերան իմ, բղխեցից զծածկեալսն ՚ի սկզբանէ աշխարհի :

36 Յայնժամ թողեալ յս ի զժողովուրդսն՝ եկն ՚ի տուն . մատեան առ նա աշակերտքն՝ և ասեն, մեկնեա՛ մեզ զառակ որոմանցն ագարակի :

37 Նա սլատասխանի ետ՝ և ասէ ցնոսա . որ սերմանէ սերմըն բարի՝ է որդի մարդոց :

նորան մին մարդ առաւ՝ և իւրան արտի մէջն սերմեց :

32 Որ ամէն սերմունքիցն փոքր է . և երբոր կաճի, ամէն քանջարի վերայ կըմեծանայ, և ծառ կըլինի՝ մինչև որ երկրիքի թռչուններն դան և նրճըղերին վր զհանգիստ առնեն :

33 Ուրիշ առակ էլ խօսեց նորանց հետ և ասաց . երկիքի արքայութիւն նման է խմորի՝ որ նորան մին կին առաւ՝ և երեք չափ ալիւրի մէջ պահեց, մինչև որ ամէնն էլ խմորվեցաւ :

34 Իս ամէն բաներըս Յս առակներով խօսեց ժողովուրդներին հետ . և առանց առակի բան չէր խօսում նորանց հետ :

35 Որ կատարվի մարդարէի ասլածն՝ թէ առակներով կըբանամ իմ բերանըս՝ և դուրըս կըբղխեմ աշխարհի ըսկըզբիցըն ծածկված բաներըն :

36 Ին ժամանակն Յս ժողովուրդներին թողեց՝ եկաւ տուն . աշակերտներն նր մօտ եկին և ասացին . էն արտի որոմունքի (սաղհամ իսրայէլի) առակըն մեկնի՛ր մեզ :

37 Նա սլատասխան տուաւ և նորանց ասաց . էն բարի սերմըն ցանօղն՝ որդին մարդոց է :

38 Եւ ազարակն աշխարհս է . սերմն բարի՝ նորա են , որ որդիքն արքայութեան են . իսկ որոմն՝ որդիք չարին են :

36 Եւ թշնամին որ վարեաց զայն՝ սատանայ է . և հունձքն կատարած աշխարհիս է . և հնձողքն՝ հրեշտակք են :

40 Որպէս ժողովի որոմն՝ և ՚ի հուր պրի, այնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհիս :

44 Աւաբեսցէ որդի մարդոց զհրեշտակս իւր, և ժողովեսցեն յարքայութենէ նորա զամենայն գայթաղութիւնս՝ և զայնոսիկ ոչք գործեն զանօրէնութիւն :

42 Եւ արկեցն զնոսա ՚ի հընոց հրոյ . անդ եղիցի լալ՝ և կրճեւ առամանց :

43 Յայնժամ արդարքն ծագեսցին իբրև զարեգակն յարքայութեան երկնից . որ ունիցի տկանջս լսելոյ՝ լուսիցէ :

44 Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից գանձի ծածկելոյ յազարակի, զոր գտեալ մարդոյ՝ թաքոյց . և ՚ի խնդութեանէ անտի երթաց վաճառէ զամենայն ինչ զոր

38 Եւ արտն՝ էս աշխարհքս է . բարի սերմն նորանք են՝ որ արքայութեան որդիք են՝ և որոմն՝ չարի որդիքն են :

39 Եւ թշնամին որ էս սերմեց, սատանայ է . և հունձքն՝ աշխարհքի վերջն է . և հնձողներն՝ հրեշտակներն են :

40 Ինչպէս ոչ որոմն հաւաքովումէ և կրակի մէջ այրուամ, էնպէս էլ աշխարհքի վերջումն կըլինի :

44 Որդին մարդոց իրան հըրեշտակներն կուղարկէ՝ և նո՛ր արքայութենիցն ամէն գայթաղութիւններն կըժողովեն՝ և նորանց էլ՝ որ անօրէնութիւն են գործում :

42 Եւ նորանց կըքցեն կրակի վառան մէջն որ էնտեղ լաց և առամների կըրճատէն կըլինի :

43 Ինչ ժամանակն արդարներն արեգակին պէս կըլուսաւորեն երկնքի արքայուէ մէջն . ո՛վ որ լսելոյ տկանջ ունի՝ թող լսէ :

44 Մինչէլ՝ երկնքի արքայութիւնն նման է մին արտի մէջ սլահալած գանձի (թաքնոյն), ու նորան մին մարդ գտաւ սաւհեց, և ուրախութեանիցն գընումէ ամէն ինչ որ ունի ծա

ուենի, և գնէ զագարակն զայն:

45 Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից սուս վաճառականի, որ խնդրուցէ մարգարիտս գեղեցիկս:

46 Եւ գտեալ մի պատուական մարգարիտ՝ երթեալ վաճառեաց զամենայն ինչ զոր ունէր՝ և գնեաց զայն մարգարիտ:

47 Դարձեալ՝ նման է արքայութիւն երկնից ուսականի արկելոյ ՚ի ծով՝ և յամենայն ազգաց ժողովելոյ:

48 Ձոր՝ իբրև լցաւ, հանեալ ՚ի ցամաք, և նստեալ ժողովեցին զբարի բարին յամանս. և զխտանն ՚ի բաց ընկեցին:

49 Ա՛յնպէս եղիցի ՚ի կատարածի աշխարհիս. ելցեն հրեշտակք՝ և մեկնեսցեն զչարս ՚ի միջոյ արդարոց,

50 Եւ արկեցեն զնոսա ՚ի հնոց հրոյն. անդ եղիցի լալ և կրճեւատամանց:

51 Ասէ ցնոսա յս. իմացարձք զայս ամենայն. ասեն ցնա. սցն սր:

52 Եւ նա ասէ ցնոսա. վասն այսորիկ ամենայն դպիր աշա-

խումէ՝ և էն արտըն գնումէ:

45 Մինէլ՝ երկնքի արքայութիւն նման է մին վաճառական մարդոյ. որ գեղեցիկ մարգարիտների մանկըզայ:

46 Եւ երբ որ մին պատուական մարգարիտ գտաւ, գնաց ամէն ինչ որ ունէր ծախեց՝ և էն մարգարիտըն գնեց:

47 Մինէլ՝ երկնքի արքայութիւն մին ծոփն քցած ուսականի (Աստի) նման է. որ ամէն կերպ (ձրկներ) ժողովեց:

48 Եւ երբ որ լցվաւ՝ նորան ցամաքն հանեցին, նստեցին և լաւերըն ժողովեցին ամանների մէջ՝ և անպէտքներըն դուրս քցեցին:

49 Այնպէս էլ կըլինի աշխարհքիս վերջումս. հրեշտակներըն դուրս կըդան՝ և չարերըն կըջոկեն արդարներն միջոցն,

50 Եւ նորանց կըբցեն կրակի փառան մէջն, որէնտեղ լաց և ատաֆների կրճըտելն կըլինի:

51 Յս նորանց ասաց. հասկացձք էս ամէն բաներըս. ասացին նորան. հա՛ հէր:

52 Եւ էլ նորանց ասաց. սրահամար ամէն կարգացողն

կերտեալ արքայութեան երկնից, նման է առն տանուտեառն՝ որ հանէ ՚ի գանձէ իւրմէ զնոր և զհին :

53 Եւ եղև իբրև կատարեաց յս զառակս զայսոսիկ՝ փոխեցսւս անտի :

54 Եւ եկեալ ՚ի գաւառ իւր՝ ուսուցանէր զնոսս ՚ի ժողովրդեանն նոցա • մինչև զարմանալ նոցա՝ և ասել • սմա՛ ուստի՞ իցէ այս իմաստուի և զօրութիւնք :

55 Ո՛չ սո՛ է հիւսանն որդի • ի՛նչ մայր սորա կոչի մարիամ • և եղբարք սորա յակովբոս՝ և յովսէս՝ և սիմոն՝ և յուզա :

56 Եւ քորք սորա ի՛նչ ամենեքեան առ մե՛զ են • և արդ՝ ուստի՞ է սմա այս ամենայն :

57 Եւ գայթաղէին ՚ի նա • և յս ասէ ցնոսս • չի՞ք մարգարէ անարգ՝ եթէ ոչ յիւրում գաւառի՝ և յիւրում տան :

58 Եւ ի՛նչ արար անդ զօրուութիւնս բաղումս վասն անհաւատութեան նոցա :

որ երկնքի արքայութեան բաներին տեղեկացած է, նման է տան տէր մարդոյ՝ որ իրան գանձիցն (խաղնայիցն) նորըն և հինըն կը հանէ :

53 Եւ էլաւ երբոր Յսուս առակներըս կատարեց, էնտեղից գնաց :

54 Եւ եկաւ իրան գաւառն՝ և նորանց ժողովարաններէ մէջըն սովորցնումէր նորանց • մինչև որ զարմանումէին նորանք և ասումէին • սորան ի՞ր տեղից է էս իմաստուիս և զօրութիւններս :

55 Չէ՞ որ սա հուսան (սէօւէքի) որդին է • չէ՞ որ սորա մայրն՝ մարիամ կը կոչվի • և սորա եղբարքն յակովբոս՝ և յոսէս՝ և սիմոն, և յուզայ :

56 Եւ չէ՞ որ սորա ամէն քրքովերքըն մեզ մօտ են • ապա ի՞ր տեղից է սորան էս ամէն բաներըս :

57 Եւ գայթակղվումէին նորա վերայ • Յսուս էլ նորանց ասաց • մարգարէ անարգված չի՛ լինիլ՝ բայց իրան երկրումն և իրան տանն :

58 Ինտեղ շատ հրաշքներ չի՛ արաւ՝ նորանց անհաւատութեան պատճառաւն :

ԳԼ. ԺԴ.

1 Յայնմ ժամանակի լու-
ւաւ հերովդէս չորրորդապետ
զլուր Յիսուսի :

2 Եւ ասէ ցճառայտ իւր .
նոս է յովհաննէս մկրտիչ, նոս
յարեաւ 'ի մեռելոց . և վասն
այնորիկ զօրու[թիւնք լինին
նովաւ :

3 Քանզի հերովդէս կալաւ
ըյովհաննէս՝ կապեաց գնա՝ և
եդ 'ի բանտի՝ վասն հերով-
դէսայ կնօջ փիլիսպոսի եղբօր
նորա :

4 Ձի ասէր ցնա յովհան-
նէս . չէ արժան քեզ ունել
զլա :

5 Եւ կամէր զնա սպանա-
նել, բայց երկնչէր 'ի ժողո-
վրդենէ անտի . քանզի իբրև
զմարգարէ ունէին զնա :

6 Եւ իբրև եղեն ծնունդք
հերովդի, կաքաւեաց դուստ-
րըն հերովդիսայ 'ի մէջ բազ-
մականին . և հաճոյ թուե-
ցաւ հերովդի :

7 Ուստի և երդմամբ խոս-
տացաւ տալ նմա զինչ և
լինդրեսոյէ :

8 Եւ նա յառաջագոյն խը-
րատեալ 'ի մօրէ իւրմէ, սուր

1 Էն ժամանակն հերօ-
դէս չորրորդապետն լսեց Յի
վերայ էլած ձայնըն :

2 Եւ իրան ծառաներին ա-
սաց . նա յօհաննէս մկրտիչն
է, նա մեռելների միջիցն յա-
րու[թիւն առաւ՝ և նրահա-
մար հրաշքներ են լինում
նորանով :

3 Պատճառնոր՝ հերօդէս
բռնեց յօհաննէսին՝ նորան
կապեց և բանտի (զքնասնի)
մէջ դրաւ՝ հերօդիայի հա-
մար՝ որ իրան եղբայր փիլիպ-
պոսի կինն էր :

4 Ինչուոր՝ յօհաննէս նո-
րան ասումէր, թէ արժան չէ
քեզ՝ որ դորան առնես :

5 Եւ ուզումէր որ նորան
սպանէ, բայց ժողովըրդիցն
վախումէր . ինչուոր՝ նրն մար-
գարէի տեղ էին համարում :

6 Եւ երբոր հերօդէսի
ծնունդի օրն էլաւ, հերօդիա-
յի աղջիկն սեղանի նստօղնե-
րի մէջն պարեկաւ՝ և հերօ-
դէսին լաւ թուեցաւ :

7 Նրահամար էլ երդումով
խոստացաւ նորան . թէ ինչ
որ ուզէ՝ ապ նորան :

8 Նա էլ ինչպէս որ ա-
ռաջ իրան մօրիցն խրատ էր

ինձ ասէ այսր՝ ՚ի վերայ սկտեղ
զգլուին յովհաննու մկրտչի :

9 Եւ տրտմեցաւ թաղա-
ւորն . բայց վասն երգման-
ցըն , և բարձակցացն՝ հրա-
մայեաց տակ նմա :

10 Եւ առաքեաց զլիւս-
տեանց զյովհաննէս ՚ի բանտի :

11 Եւ բերաւ զլուին նորա
սկտեղք՝ և տուան աղջկանն .
և տարաւ առ մայր իւր :

12 Եւ մատուցեալ աշա-
կերտքն նորա՝ բարձին զմար-
մինն և թաղեցին . և եկեալ
պատմեցին յիսուսի :

13 Եւ իբրև լուաւ յս , զը-
նաց անտի նաւու յանապատ
տեղի առանձինն . իբրև լու-
ւան ժողովուրդքն՝ զնացին
զհետ նորա հետի ՚ի քաղաքաց
անտի :

14 Եւ իբրև ել , ետես ժո-
ղովուրդ բազում , զթացաւ ՚ի
նոսա , և բժշկեանց զհիւանդս
նոցա :

15 Իբրև ընդ երեկս եղև ,
մատեան առ նա աշակերտքն՝
և ասեն . տեղիս անապատ է ,
և օրս՝ տարաժամեալ , արձա-
կեա զժողովուրդսդ՝ զի երթի-

տուել՝ ասաց . էս սկտեղի
(Էֆֆշէ) վերայ յօհաննէս
մկրտչի զլուսըն տուր ինձ :

9 Եւ թաղաւորն տրտմեցաւ՝
բայց իրան երգումին՝ և իրան
հետ նստած մարդկանց հա-
մար՝ հրաման տուաւ , որ տան
նորան :

10 Եւ ուղարկեց բանտի
(զընտանի) մէջն զլիստաեց յօ-
հաննէսին :

11 Եւ նորա զլուսըն սկու-
տեղի (Էֆֆշէ) վերայ բերին
և աղջկանն տուին՝ և նա տա-
րաւ իրան մօրն :

12 Եւ նորա աշակերտներն
եկին նորա մարմինըն վերկա-
լան և թաղեցին՝ և եկին
Յսին պատմեցին :

13 Եւ Յս երբօր լսեց , էն-
տեղից նստով զնաց առանձին
մին անապատ տեղ . ժողո-
վուրդքն երբօր լսեցին , էն-
տեղի քաղաքներէն ոտով գնա-
ցին նմոս ետէն .

14 Եւ երբօր օրուրս եկաւ՝
և էն շատ ժողովուրդքն տե-
սաւ , խճաց նորանց վերայ՝ և
նրոնց հիւանդներըն բժշկեց :

15 Եւ երբօր երկվան դէմ
հլաւ՝ աշակերտներն նր մօտ
եկին և ասացին . տեղս անա-
պատ է՝ և օրս հլ անցել է .
էդ ժողովուրդները թող ա-

Handwritten notes in Armenian script, including a circular stamp with the number 503668090.

յեն շուրջ 'ի շէնսն , գնեսցեն
իւրեանց կերակուրս :

16 Եւ ասէ յս . ոչինչ պի-
տոյ է դոցա երթալ . դուք
տուք դոցա ուտել :

17 Եւ նոքա ասեն յնա . ոչ-
ինչ ունիմք աստ , բայց հինգ
նկանակ՝ և երկուս ձկուես :

18 Եւ ասէ յնոսա . բերէք
այսր զայն :

19 Եւ հրամայեաց բազմե-
ցուցանել զժողովուրդն 'ի
վերայ խոտոյ . և առեալ ըզ-
հինգ նկանակն և զերկուս ձը-
կուեսս՝ հայեցուս յերկինս ,
օրհնեաց . և եբէկ՝ և ետ ցա-
շակերտսն զնկանակսն , և ա-
շակերտքն ժողովրդոցն :

20 Կերան ամենեքեան՝ և
յազեցան , և բարձին զնըշ-
խարս կոտորոցն երկուտասան
սակառի լի :

21 Եւ որք կերանն՝ էին արք
իբրև հինգ հազար . թող ըզ-
կանայս և զմանկտի :

22 Եւ ստիպեաց վաղվաղակի
ղաշակերտսն մտանել 'ի նաւ ,
և յառաջել յայն կոյս , մինչ
ինքն զժողովուրդսն արձա-
կիցէ :

րա՝ որ գնան չորս կողմի գիւ-
ղերն՝ իրանց համար կերակուր
գնեն :

16 Եւ Յս ասաց . պէտք չէ
դորանց որ գնան . դուք տո-
ւէք դորանց ուտել :

17 Եւ նորանք ասացին նո-
րան . մենք էստեղ բան չունենք,
բայց միայն հինգ հատ հաց՝
և երկու ձուկն :

18 Եւ նորանց ասաց . բե-
րէք նորանց էստեղ :

19 Եւ հրաման տուաւ որ ժո-
ղովուրդն խոտի վերայ նստալ-
նեն և էն հինգ հացըն և երկու
ձուկըն առաւ՝ դէպի երկինքն
նայեց՝ օրհնեց և կտրեց , և էն
հացերըն աշակերտներին տո-
ւաւ՝ և աշակերտներն էլ ժո-
ղովուրդներին :

20 Եւ մենքն կերին և կըշ-
տացան , և աւելցած կտոր-
ներիցն տասներկուք թոց լիքն
վերկալան :

21 Եւ նորանք որ կերին՝
հինգ հազարի չափ մարդիք
էին՝ կանանցիցն և տղանե-
րիցն ըով :

22 Եւ շուտով աշակերտներին
վաղաղացրուց որ նաւն մտնեն՝
և իրանից առաջ անցկենան էն
կողմն՝ մինչև որ ինքն էն ժո-
ղովուրդն երբն թողանէ :

23 Եւ իբրև արձակեաց ըզ ժողովուրդսն՝ եւ ՚ի լեառն առանձինն կալ յաղօթս • և իբրև ընդ երեկս եղև, անդ էր միայն :

24 Եւ նաւն մեկնեալ էր ՚ի ցամաքէն բազում ասպարիսօք՝ ծփեալ յալեացն • քան զի ընդդէմ էր հողմն :

25 Եւ ՚ի չորրորդում պահու գիշերոյն եկն առ նոսա յս՝ գնալով ՚ի վերայ ծովուն :

26 Իբրև տեսին զնա աշակերտքն զի գնայր ՚ի վերայ ծովուն՝ խռովեցան, և ասեն թէ առաջօք ինչ իցէ • և առ ահին՝ աղաղակեցին :

27 Եւ վաղվաղակի խօսեցաւ ընդ նոսա յս՝ և ասէ • քաջալերեցարուք, ես եմ մի երկընչեք :

28 Պատասխանի ետ նմա պետրոս՝ և ասէ • տէր՝ եթէ դու ես, հրամայեա ինձ գալ առ քեզ ՚ի վերայ ջրոցս :

29 Եւ նա ասէ, եկ • և իջեալ ՚ի նաւէն պետրոս՝ գնաց ՚ի վերայ ջուրցն, և եկն առ յիսուս :

30 Եւ տեսել զհողմն սաստիկ՝ երկեան • և իբրև սկսաւ ընկղմել՝ աղաղակեաց՝ և ասէ •

23 Եւ երբոր ժողովուրդսն երն ձթողարաւ, վերէլաւ սարն, որ մէնակ աղօթք անէ և երբոր իրեկուն էլաւ, մէնակ էնտեղ էր :

24 Եւ նաւն շատ ասպարէզով հեռացել էր ցամաքիցն՝ և ալէկոծութեան մէջն էր • ինչուոր քամին ներհակ էր :

25 Եւ գիշերի չորս բաժինի ժամանակն՝ Յս ծովին վերայ գնալով՝ նրնց մօտ եկաւ :

26 Աշակերտներն երբոր տեսին նորան՝ որ ծովին վերայ գնումէր, շփոթվեցան և առային՝ թէ աչքի երևոյթ բան է, և վախելուցն աղաղակեցին :

27 Եւ Յս շուտով խօսեց նորանց հետ՝ և ասաց • ժիր կացէք՝ ես եմ մի վախենաք :

28 Պետրոսն պատասխան տուաւ նորան և ասաց • Տէր՝ թէ որ դու ես, հրաման տուր ինձ • որ ջրիս վերայով քեզ մօտ գամ :

29 Նա էլ ասաց՝ եկ • և պետրոս նաւիցն վերեկաւ ջրի վերայովն գնաց՝ և եկաւ Յիսուսի մօտն :

30 Եւ էն սաստիկ քամին տեսնելով վախեցաւ • և երբոր սկսեց թաղվիլ, աղաղա -

տէր՝ փրկեա՛ զնա :

31 Եւ վաղվաղակի յս՝ ձը -
գեաց զձեռն իւր կալաւ զնա
և ասէ. թերահաւատ՝ ընդէ՞ր
երկմտեցեր :

32 Եւ իբրև ելին ՚ի նաւն՝
հանդարտեաց հողմն :

33 Եւ որ ՚ի նաւին էին՝ մա -
տեան երկիրպագին նմա՝ և
ասեն . արդարև որդի Աստու -
ծոյ ես դու :

34 Եւ անցեալ եկին ՚ի ցա -
մաք ՚ի գեննեսարէթ :

35 Եւ իբրև ծանեան զնա
արք տեղւոյն այնորիկ , առա -
քեցին ընդ ամենայն դաւառն՝
և ածին առ նա զամենայն հի -
ւանդս :

36 Եւ աղաչէին զնա , զի
դոնէ՛ միայն ՚ի քղանցս հան -
դերձի նորա մերձեսցին . և որ
միանգամ մերձեցանն՝ փրկե -
ցան :

ԳԼ .

1 Յայնժամ մատեան առ
յս որ յերուսաղէմէ փարիսե -
ցիքն և դպիրք՝ և ասեն :

2 Ընդէ՞ր աշակերտքն քո
անցանեն զաւանդութեամբ
ծերոյն . զի ոչ լուանան զձե -
զըս յորժամ հայ ուտեն :

կեց և ասաց Տէր՝ ինձ փրկիր :

31 Եւ շուտով Յս իրան
ձեռն մեկնեց նորան բռնեց
և ասաց . թերահաւատ՝ ին -
չու երկմտեցիր :

32 Եւ երբոր նաւն մտին ,
քամին հանդարտեց :

33 Եւ նորանք որ նաւի մէջն
էին՝ մօտ եկին նորան երկր -
պագութիւն տուին՝ և ասա -
ցին . շիտակ՝ որ դու Այ որ -
դին ես :

34 Եւ անցկացան ցամաքն՝
և եկին գեննեսարէթ :

35 Եւ երբոր էնտեղի մար -
դիքն ճանաչեցին նորան, ու -
ղարկեցին էն ամէն դաւառն՝
և ամէն հիւանդներն նորա
մօտ բերին :

36 Եւ նորան աղաչումէին՝
որ լինի թէ մէնակ նորա շորի
ծայրին դիպչին . և նորանք
որ մին անգամ դիպան , փրկե -
վեցան :

ԺԵ

1 Էն ժամանակն Յսի մօտ
եկին երուսաղէմիցն եկած փա -
րիսեցիքն և կարդացողներն և
ասացին :

2 Ինչու քո աշակերտներդ
ծերերի աւանդութենովն անց -
ենկենում . որ ձեռներն չեն
լուանում երբոր հայ են ու -
տում :

3 Նա պատասխանեի ետ՝ և ասէ ցնոսա . իսկ դուք՝ ընդէ՞ր անցանէք զպատուիրանանս յայ՝ վասն ձերոյ աւանդութեան .

4 Ձի ԱՅ ասաց . պատուեսն զհայր քո և զմայր :

5 Եւ որ բամբաստէ զհայր կամ զմայր՝ մահնու վտխճանեսցի :

6 Եւ դուք ասէք . որ ասիցէ ցհայր իւր կամ ցմայր իւր, թէ պատարագ է՝ զոր յինէն օգտիցիս, և ոչ պատուիցէ զհայր իւր և զմայր իւր . և խոտէք զքանն աստուծոյ վասն ձերոյ աւանդութեանն :

7 Աեղծաւորք՝ բարւոյք մարդարէացաւ ՚ի վերայ ձեր եսայի՝ և ասէ :

8 Ժողովուրդս այս շքթ թամբք պատուէ զիս, և սիրտք իւրեանց հեռացեալ մեկուսի է յինէն :

9 Ձ ուր պաշտեն զիս . ուսուցանեն վարդապետուիս՝ զմարդկան պատուիրեալս :

10 Եւ կոչեցեալ առ ինքն զԺողովուրդսն՝ ասէ ցնոսա . լուարնէք՝ և ՚ի միտ առէք :

3 Նա էլ պատասխան տուաւ և նորանց ասաց . ապա դուք ի՞նչու Այ պատուիրանքովն անցէք կենում ձեր ականդութեան պատճառան :

4 Ինչուոր՝ ան ասաց՝ թէ քո հօրըդ և մօրըդ պատուիր :

5 Եւ նա որ իրան հօրըն կամ մօրըն բամբաստուի, մահով պիտի մեռնի :

6 Եւ դուք ասուովք՝ թէ ո՞վ որ իրան հօրըն կամ մօրըն ասէ՝ թէ պատարագ է էն, որ ինձանից պէտք է շահիլիս, և չի պատուէ իրան հօրըն և իրան մօրըն . և (էսպէս) ձեր աւանդութեան համար՝ Այ խօսքըն ոչինչի տեղ էք դնում :

7 Աեղծաւորներ՝ լաւ մարդարէացաւ ձեզ վերայ եսայի՝ և ասուովք :

8 Ես ժողովուրդս մէնակ պաշտերովն է պատուում ինձ . և իրանց սիրան ինձանից հեռացած ջոկված է :

9 Ձ ուր տեղն են պաշտում ինձ . մարդկանցից պատուիրած վարդապետութիւններն են սովորցնում :

10 Եւ ժողովուրդներն իրան մօտ կանչեց, և նորանց ասաց . լսեցէք՝ և մտքներըդ առէք :

11 Ոչ որ ինչ մտանէ ընդ բերան՝ պղծէ զմարդ, այլ որ ինչ ելանէ ՚ի բերանոյ՝ այն պղծէ զմարդ :

12 Յայնժամ մատուցեալ աշակերտացն նորա՝ ասենցընա • զիտե՞ս՝ զի փարիսեցիքն իբրև լուան զքանն՝ դայժապղեցին :

13 Նա պատասխանի ետ նոցա՝ և ասէ • ամենայն տունկ՝ զոր ոչ անկեաց հայր իմ երկնաւոր, խլեսցի :

14 Թո՛ղ տուք զնոսա • կոյրք են՝ կուրաց առաջնորդք • կոյր կուրի յորժամ առաջնորդէ՝ սխալէ և երկօքին ՚ի խորխորատ անկանին :

15 Պատասխանի ետ նմա պետրոս՝ և ասէ • մեկնեա՛ մեզ զառակս զայս :

16 Ըսէ յս • տակաւին՝ և դո՛ւք անմիտք էք,

17 Եւ ոչ իմանայք • եթէ ամենայն որ մտանէ ՚ի բերան, յորովայն երթայ՝ և արտաքս ելանէ :

18 Իսկ որ ելանէ ՚ի բերանոյ՝ ՚ի սրտէ անտի դայ • և այն պղծէ զմարդ :

19 Ձի ՚ի սրտէ ելանեն խորհուրդք չարք, սպանու-

11 Ձէ թէ ինչ որ մտնումէ բերանն՝ պղծումէ մարդոցն, բայց ինչ որ բերանիցն դուրս է գալիս, էն է որ մարդոցն պղծումէ :

12 Ին՝ ժամանակն նորա աշակերտներն եկին նորան ասացին • զիտե՞մքս՝ որ փարիսեցիքն երբոր էն բանըն լըսեցին, դայժակղվեցան :

13 Նա էլ պատասխան տուաւ նորանց և ասաց • ամէն տունկ որ իմ երկնաւոր հայրըս չի՛ անկել՝ թող պոկվի :

14 Թողարէք նորանց՝ կոյր են կուրերի առաջնորդք • կոյրըն երբոր կուրին առաջնորդէ, կըմոլորվի՛ և երկօքն էլ փոսի մէջ կընկնին :

15 Պետրոս նորան պատասխան առաւ՝ և ասաց • էս առակըս մեզ համար մեկնի՛ր :

16 Յիսուս ասաց • դուք է՞լ դեռ անխելք էք :

17 Եւ չէ՞ք իմանում, թէ ամէն բան որ բերանն է մըտնում • փորն է գնում և դուրս է գալիս :

18 Բայց էն որ բերանիցն դուրս է գալիս, յատուկ սըրտիցն է գալիս՝ և էն պղծումէ մարդոցն :

19 Ինչուոր՝ սրտիցն են դուրս գալիս չար խորհուրդներ •

Թիւնք, շնուԹիւնք, պոռնկուԹիւնք, գողուԹիւնք, սուտ վկայուԹիւնք, հայհոյուԹիւնք :

20 Եւս ամենայն է՝ որ պղծէ զմարդ, այլ անլուայ ձեռք ուտել՝ ոչ պղծէ զմարդ :

21 Եւ ելեալ անտի յսի դնաց ՚ի կողմանս աիւրոսի և սիդոֆնի :

22 Եւ ահա՛ կին մի քանանացի ՚ի սահմանաց անտի նոցա՝ ելեալ, աղաղակէր և աւեր • ողորմեաց ինձ արդի դաւԹի, դուստր իմ՝ չարաչանք այսահարի :

23 Եւ նա ոչ ետ նմա պատասխանի • և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին ըզնա և ասէին • արձակեա՛ զնա՝ զի աղաղակէ զճետ մեր :

24 Եւ պատասխանի ետ և ասէ • ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն խորայէլի :

25 Եւ նա մատուցեալ, երկիր պագանէր նմա՝ և ասէր • Տէր՝ օգնեա՛ ինձ :

26 Պատասխանի ետ նմա՝ և ասէ • ոչ է բարեք առնուղ զճաց մանկանց՝ և արկանել շանց :

սպանուիններ, շնուիններ, պոռնկուիններ, գողուԹիւններ, սուտ վկայուԹիւններ, հայհոյուԹիւններ :

20 Ես ամէն է՝ որ մարդոյն պղծումէ • բայց անլուայ ձեռքով ուտելն՝ մարդոյն չի՛ պղծում :

21 Եւ յս էնտեղից դուրս եկաւ դնաց տիւրոսի և սիդոֆնի կողմերն :

22 Եւ ահա՛ մին քանանացի կին նորանց երկրիցն դուրս եկաւ աղաղակումէր և ասումէր • Տէր՝ որդի դաւԹի՛ ինձ ողորմեա՛, իմ աղջիկս սաստիկ դիւահարվումէ :

23 Եւ նա պատասխան չի տուաւ նորան • և նորա աշակերտներն եկին նորան աղաչումէին՝ և ասում՝ թող արա՛ նորան՝ ինչուոր՝ մեր ետեւն աղաղակումէ :

24 Եւ պատասխան տուաւ և ասաց • ես ուրիշտեղ չեմ ուղարկված՝ եթէ ոչ խորայէլի տան կորած ոչխարներին մօտ :

25 Եւ էլ մօտեցաւ նորան երկրպագուի էր անում և ասումէր • Տէր ինձ օգնիր :

26 Նորան պատասխան տուաւ՝ և ասաց • Լա՛ւ չէ երեխաների հացըն առնել՝ և շքաներին քցել :

27 Եւ նա ասէ . այն տէր , քանցիւ եւ շունք կերակրին 'ի փշրանաց անկեւոց 'ի սեղանոց տեսան իւրեանց :

28 Յայնժամ պատասխանի ետ նմա յիսուս' եւ ասէ . սլ կին դու' մե'ծ են հաւատք քո , եղիցի քեզ' որպէս եւ կամիս . եւ բժշկեցան դուստր նորա 'ի նմին ժամու :

29 Եւ գնացեալ անտի յիսուսի , եկն 'ի ծովեզրն գալիլէացոց . եւ ելեալ 'ի լեառըն նստէր անդ :

30 Մատեան առ նա ժողովուրդք բազումք , որ ունէին ընդ իւրեանս' կնոջս , կոյրս , համբ'րս , միակողմանիս , եւ այլս բազումս . եւ ընկեցին զնոսա առ ոտս նորա' եւ բժշկեաց զնոսա :

31 Մինչև զարմանալ ժողովրդոցն' որ տեսանէին , զի համբըն խօսէին , գաղք գընային , միակողմանիք բժշկէին , կոյրք տեսանէին . եւ փառասնոր առնէին զաճ խրայէլի :

32 Եւ կոչեցեալ առ ինքն Յիսուսի զաշակերտսն' ասէ . զԹամ' 'ի ժողովուրդդ , զի

27 Նա էլ ասաց . ուղորդէ Տէր' ինչուոր' շներն էլ իրանց տիրոջ սեղանիցն ընկած փշրանքներիցն են կերակրուամ' :

28 Ին՝ ժամանակն Յս' նորան պատասխան տուաւ . եւ տասաց . սլ կին դու' մեծ է քո հաւատքդ . ինչպէս որ ուզուեմս' էնպէս լինի քեզ . եւ նորա աղջիկն բժշկվեցաւ հենց էն ժամուսնի (ոսկոյնի) :

29 Եւ Յս' էնտեղից գնաց' գալիլէացոց ծովի եզրն (զբողն) եկաւ . եւ վերէլաւ սարն եւ էնտեղ նստեց :

30 Եւ շատ ժողովուրդներ նորա մօտ եկին , որ իրանց հետ ունէին կաղեր' կուրեր' համրներ (շախմէր)' միակողմանիներ , եւ ուրիշ շատեր էլ . եւ նորանց քցեցին նորա ոտներն , եւ նորանց բժշկեց :

31 Մինչև որ զարմանումէին էն ժողովուրդներն որ տեսնումէին , որ համրներն խօսումէին , կաղերն գնումէին , միակողմանիներն բժշկվումէին , կուրերն տեսնումէին , եւ փառաւորումէին խրայէլի Աստուածըն :

32 Եւ Յս' աշակերտներն իրան մօտ կանչեց եւ ասաց . խեղճս գալիս է էս ժողովըր-

արդ՝ երեք ուսուրբ են՝ զև
կան առ իս, և ոչ ունին
զինչ ուտիցեն. և արծա-
կել զգոսա նօթիս՝ չկամիմ՝,
գոուցէ նքթիցեն զճանապար-
հայն :

33 Ասեն ցնա աշակերտքն •
ինկ արդ՝ մեզ յանապատի
սաս՝ ուստի՞ իցէ այնչափ հայ՝
մինչ յագեցուցանել զոյս-
չափ ժողովուրդ :

34 Եւ ասէ ցնոսա յս • քա-
նի՞ նկանակ ունիք • և նոքա
ասեն • եօթն, և սակաւ ձկու-
նըս :

35 Եւ հրամայեաց ժողո-
վըդեանն քաղմն՝ լի վերայ
գեանց :

36 Եւ առեալ զեւթն նկա-
նակն և զձկուսնն՝ գոհացաւ և
եքեկ, և ետ ցաշակերտան • և
նոքա ժողովըդեանն :

37 Կերան ամենեքեան և յա-
գեցան • և բարձին զնշխարս
կոտորոցն՝ եւթն զամբիղ լի :

38 Եւ որք կերանն՝ էին
իբրև արք չորք հազարք • թող
զկանայս և զմանկտի :

39 Իբրև արձակեաց զժո-
ղովուրդսն՝ եւ ՚ի նաւ՝ և եկն

զիս վերայ • ինչուոր՝ երեք որ
է՛ որ իմ մօտս են, և բան չու-
նին որ ուտեն • և չեմ ուզում
նորանց սոված ճանապարհ
քցել • որ չըլինի թէ սովա-
ծու թեհիցն ճանապարհին վե-
րայ թուլանան :

33 Աշակերտներն նորան ա-
սացին • ապա մեզ հստեղ ա-
նապատումս (չօլս-ճո) ճրտե-
ղից էնչափ հայ կըլինի՝ որ
էքքան ժողովուրդը կըլտա-
ցնենք :

34 Եւ Յս նորանց ասաց •
քանի՞ հատ հայ ունիք • և նո-
բանք ասացին՝ եօթն, և քիչ
ձկներ :

35 Եւ հրաման տուաւ ժո-
ղովըդին՝ որ գեանի վերայ
նստին :

36 Եւ էն եօթըն հացըն՝ և
ձկներըն առաւ, գոհացաւ և
կտրեց և աշակերտներին տո-
ւաւ՝ և նրնք (էլ) ժողովըդին :

37 Ամենքն կերին և կշտա-
ցան • և աւելացած կտորնե-
րիցն եօթն քթոց լիքն վեր
կալան :

38 Եւ նորանք որ կերին՝ չո-
րքս հազարի չափ մարդիք էին •
կանանցիցն և երեխաներիցն
ջուկ :

39 Իբրոր էն ժողովուրդ-
ներըն թողարաւ, մտաւ

ի սահմանս մազդարայ :

նաւըն և եկաւ մազդարէի կողմերըն :

ԳԼ . ԺԶ .

1 Եւ մատուցեալ փարիսեցիքն և սաղակեցիք փորձելով խնդրէին ՚ի նմանէ՝ նըշան յերկնից ցուցանել նոցա :

1 Եւ փարիսեցիքն և սաղակեցիքն նորա մօտ եկին՝ և փորձելով նորանից խնդրու մէին՝ որ երկնքիցն մին նշան ցոյց տայ նորանց :

2 Նա պատասխանի ետ՝ և ասէ ցնոսա . յորժամ երեկոյ լինի՝ ասէք պարզ լինիցի . զի կարմրացեալ է երկին :

2 Նա պատասխան տուաւ և նորանց ասաց . որ ժամանակ իրիկուն է լինում . ասու մէք . թէ պարզ կըլինի . ինչու որ՝ երկինքն կարմրացել է :

3 Եւ առաւուռու՝ այսօր մըրիկ . զի շառագունի տրամուր երկին . արդ զերեսս երկնի կարէք քննել . իսկ զնշան ժամանակի ոչ կարէք զիտել :

3 Եւ առաւուսն՝ (ասումէք) էս օր մըրիկ (քրիստոսի քարոզի) կըլինի) ինչու որ երկինքն տրամուր թենով կարմրացել է . ապա երկնքի երեսըն կարօղէք քննել՝ բայց էս ժամանակիս նշանըն չէ՞ք կարօղ հասկանալ :

4 Ազգ չար և շնացօղ՝ նըշան խնդրէ , և նշան մի տացի նմա , բայց նշանն յովնանու մարգարէի . և եթող ըզնոսա և զնաց :

4 Չար և շնացօղ ազգն նըշան է խնդրում . և նշան չի տրվիլ նորան , բայց միայն յօնան մարգարէի նշանն . և նորանց թողեց և զնաց :

5 Գնացին և աշակերտքն յայնկոյս , և մուսացան առնուլ հաց :

5 Աշակերտներն էլ զնացին էն կողմն , և մուսացան հաց վերառնել :

6 Ասէ ցնոսա յս . տեսէք և զգոյշ լինուէք ՚ի խմորոց սաղակեցուցն և փարիսեցուց :

6 Յս նորանց ասաց . տեսէք և զգոյշ կացէք՝ սաղակեցոց և փարիսեցոց խմորիցն :

7 Նորա խորհէին ընդ միմեանս և ասէին՝ թէ հաց ոչ բարձաք :

7 Նորանք իրանց միջուկն միտք էին անում . և ասում էին . թէ հաց չենք վերկալել :

8 Գլխայ յս՝ և սսէ . զլ՛
խորհիք ՚ի միտս ձեր թերահա-
ւատք՝ եթէ հաց ոչ ունիք :

9 Տակուին չիմանայք՝ և
ոչ յեշէք զհինգ նկանակն ՚ի
հինգ հազարն , և քանի սա-
կառի բարձէք :

10 Եւ ոչ զեւթն նկանակն
՚ի չորս հազարն , և քանի
զամբիղս բարձէք :

11 Արդ՝ զիմարդ ոչ իմա-
նայք՝ եթէ ոչ վասն հացի ա-
սացի ձեզ՝ զգոյշ լինել ՚ի խը-
մորոյ փարխեցուցն և սադու-
կեցուոյ :

12 Յայնժամ ՚ի միտ առին,
եթէ ոչ ասաց զգուշանալ ՚ի
խմորոյ , այլ յաղանդոյ փա-
րխեցուցն և սադուկեցուոյ :

13 Եւ ելեալ յս՝ ՚ի կողմանս
փիլիպպեայ կեսարեայն , հար-
ցանէր ցաշակերտան՝ և սսէր .
զո՛ որ ասեն զինէն մարդիկն՝
թէ իցէ որդի մարդոյ :

14 Եւ նորա ասեն . ոմն՝ ըզ
յովհաննէս մկրտիչ , և այլք՝
զեղիս , և կէսք՝ զերեմիա ,
կամ զմի որ ՚ի մարդա-
րէկոյ :

8 Յս իմացաւ և ասաց . ով
թերահաւատներ՝ ի՞նչու ձեր
մտքումն՝ հոգս էք անու՛մ՝ թէ
հաց չունիք :

9 Դեռ չէք իմանում՝ և
մտքներդ չէք բերում էն
հինգ հացըն հինգ հազար մարդ-
կանցն , և քանի վեր-
տուիք :

10 Եւ ոչ էլ էն եօթըն հա-
ցըն չորս հազար մարդկանցն ,
և քանի վերաուիք :

11 Ուրեմն ի՞նչու չէք իմա-
նում՝ որ հացի համար չի՛
ասացի ձեզ՝ զգոյշ կացէք
փարխեցոց և սադուկեցոց
խմորիցն :

12 Ին՝ ժամանակն հասկա-
ցան՝ որ չի՛ ասաց . թէ խմո-
րիցն զգոյշ կենան , բայց փա-
րխեցոց և սադուկեցոց օրէն-
քիցն :

13 Եւ Յս դուրս գնաց փի-
լիպպեայ կեսարիայի կողմերն .
և աշակերտներուցն հարցնու-
մէր՝ և ասումէր . թէ մար-
դիքն ինձ համար ով են ա-
սում՝ որ որդին մարդոյ լինի :

14 Եւ նորանք ասացին՝ մինն
(ասումէ) թէ յօհաննէս մկր-
տիչն է . ուրիշներն էլ՝ թէ
եղիան . և կէսն էլ՝ թէ երե-
միան , կամ մարգարէներուցն
մինն :

15 Բսէ ցնոսա յս. խկ դուք
զն՝ որ ասէք զինէն թէ իցեմ :

16 Պատասխանի ետ նմա սի-
մոնի պետրոս՝ և ասէ . դո՛ւ ես
քսն որդի ցյ կենդանւոյ :

17 Պատասխանի ետ յս և
ասէ ցնա . երանի քեզ սիմոն
որդի յոնանոս , զի մարմին և
արիւն ոչ յայտնեաց քեզ՝ այլ
հոյր իմ՝ որ յերկինս է :

18 Եւ ես՝ քեզ ասեմ . զի
դո՛ւ ես վէմ , և ՚ի վերայ այդք
վիմի շինեցից զեկեղեցի իմ . և
դրունք դժոխոց զնա մի յաղ-
թահարեսցեն :

19 Եւ տաց քեզ զփականս
արքայութեան երկնից . և զոր
միանգամ կապեսցես յերկրի ,
եղիցի կապեալ յերկինս . և
զոր արձակեսցես յերկրի , ե-
ղիցի արձակեալ յերկինս :

20 Յայնժամ սաստեաց ա-
շակերտացն , զի մի ումք ա-
սացեն՝ թէ նա է Քրիստոսն :

21 Յոյնմ հետէ սկսաւ յս
ցուցանել աշակերտայն , թէ
պարտ է նմա երթալ յերու-
սաղէմ , և բաղում չարչա-

15 Յս նորանց ասաց . ապա
դուք ո՛վ էք ասում ինձ համար
որ լինիմ :

16 Սիմոն պետրոսն նորան
պատասխան տուաւ՝ և ասաց .
դո՛ւ ես Քսն՝ կենդանի Այ
որդին :

17 Յս պատասխան տուաւ՝
և նորան ասաց . երանի՛ քեզ՝
յօնանոս որդի սիմոն , ինչուոր՝
մարմին և արիւն քեզ չի՛ յայտ-
նեց , բայց իմ հայրս՝ որ երկն-
քուսն է :

18 Եւ ես ասումեմ քեզ՝
որ դու ես վէմ , և էդ վի-
միդ վերայ իմ եկեղեցիս կը-
շինեմ , և դժոխքի դռներն
չեն յաղթիլ դորան :

19 Եւ երկնքի արքայութե-
բանալքըն քեզ կըտամ , և
էն որ երկրի վերայ կըկապես ,
երկնքումն էլ կապված կըլինի .
և էն որ երկրի վերայ կարձա-
կես , երկնքումն էլ արձակ-
ված կըլինի :

20 Ինժամանակն աշակերտ-
ներին սաստեց՝ որ խկի մին
մարդոց չի՛ ասեն՝ թէ նա
Քսն է :

21 Նրանից ետև Յս սկսեց
աշակերտներին յայանել , թէ
պէտք է նորան՝ որ երուսա-
ղէմ դնայ և քահանայապետ-

բանս չարչարել և անարդել
 'ի բռնահասցալեանց և 'ի դըպ-
 րաց և 'ի ճերոց ժողովուրդեա-
 նրն, և սպանանել, և յերկր
 առուր յառնել :

22 Եւ առեալ զնա մեկուսի՝
 պետրոսի, սկսու և ազել ընդ
 նմա՝ և ասել . քու լիցի քեզ
 Տէր, մի եղևի քեզ այդ :

23 Եւ նա դարձեալ 'ի պետ-
 րոս՝ ասէ . երթ յեռս իմ
 սնտոնայ, զայ թագղութիւն
 իմ ես . զի ոչ խորհիս դու
 զաստուծոյն, այլ զմարդ-
 կան :

24 Յայնժամ յս ասէ ցաշա-
 կերտսն իւր . եթէ ոք կամի-
 ցի զինի իմ դալ՝ ուրասցի զան-
 ձըն, և առցէ զնաչ իւր՝ և
 եկեսցէ զինի իմ :

25 Ձի որ կամիցի զանձն
 իւր կեցուցանել՝ կորուսցէ
 զնա . և որ կորուսցէ զանձն
 իւր վասն իմ՝ գացէ զնա :

26 Ձինչ օրտիցի մարդ՝
 եթէ զաշխարհս ամենայն շա-
 հեսցի, և զանձն իւր տուժեա-
 ցի . կամ զինչ ասցէ մարդ
 վրկանս ընդ անձին իւրում :

ներկն և կարգացողներկն և
 ժողովուրդի ճերերկն շատ
 չարչարանքով չարչարի՝ ըս-
 պանիի և երեք օրուք յա-
 րութիւն առնէ :

22 Եւ պետրոսն նորան մի՛ն
 կողմ տարաւ՝ և սկսեց նորա
 հետ հակառակիլ և ասել՝
 քու լիցի քեզ Տէր՝ էդ բանդ
 չը՛ լինի քեզ :

23 Եւ նա դարձաւ դէպի
 պետրոսն և ասաց . յեռ գնս
 ինձանից ստտանայ՝ չինձ զայ-
 թակղութիւն ես . ինչու որ՝
 դու ԸՅ բաներըն միտք չես ա-
 նում, բայց մարդկանց բա-
 ներըն :

24 Ինչ ժամանակն Յս իրան
 աշակերտներին ասաց . թէ որ
 մին մարդ կամենայ իմ ետե-
 կս դալ, իրան անձըն պէտք
 է ուրանայ՝ և իրան խաչըն
 առնէ, և իմ ետեկս դայ :

25 Պատճառնոր՝ ով որ ի-
 րան անձըն կուզէ ապրեցնել,
 կըկորցնէ նորան . և ով որ
 իրան անձըն կըկորցնէ ինձ հա-
 մար, կըգտնէ նորան :

26 Ի՛նչ օրուտ է մարդոյն՝
 որ ամէն աշխարհքը ստանայ
 և իրան անձին փնաս տայ . կամ
 թէ ի՛նչ զին կըրայ մարդ,
 իրան անձըն վրկեց համար :

։ միայն զմիայն

27 **Ձ**ի գալոց է որդի մարդոց փառօր հօր իւրոյ՝ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուսցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր :

28 **Ա**մէն ասեմ ձեզ. զի իյեն ոմանք ՚ի սոցանէ՝ որ աստ կան. որք ոչ ճաշակեսցեն զմահ՝ մինչև տեսանիցեն զորդի մարդոց եկեալ արքայու թեամբ իւրով :

ԳԼ.

1 **Ե**ւ յետ վեց աւուր՝ առնու ընդ իւր յս զպէտրոս և զյակովբոս և զյովհաննէս զեղբայր նորա, և հանէ զնոսա ՚ի լեառն մի բարձր առանձինն :

2 **Ե**ւ այլակերպեցաւ առաջի նոցա. և լուսաւորեցան երեսք նորա իբրև զտրեղակն, և հանդերձք նորա եղեն սպիտակ իբրև զլոյս :

3 **Ե**ւ ահա՛ երևեցան նոցա մովսէս և եղիա՝ որ խօսէին ընդ նմա :

4 **Պ**ատասխանի ետ պետրոս և ասէ ցյս. Տէր՛ բարունք է մեզ աստ լինել. և եթէ կամիս՝ արասցուք երևս տաղաւոր ըս. մի՛ քեզ, և մի՛ մովսիսի, և մի՛ եղիայի :

27 **Ի**նչուոր՝ զալու է որդին մարդոց իրան հօր փառքովն իրան հրեշտակներին հետ, և էս ժամանակն ամէն մէկին հատուցում ըն կըտայ իրան գործքերի չափովն :

28 **Ղ**շմարիտ ըն ասումեմ ձեզ, որ հասեղ լինողներին մին քան իման կան, որ մահ չեն տեսնիլ՝ մինչև որ որդին մարդոց տեսնեն իրան թաղաւորութեանովն եկած :

ԺԷ.

1 **Ե**ւ վեց օրից ետև Յս պետրոսին և յակօբին և նորա եղբայր յօհաննէսին իրան հետ առաւ, և նորանց առանձին մին բարձր սար հանեց :

2 **Ե**ւ նորանց առաջին՝ նորա կերպարանքն՝ փոխուեցաւ՝ և նորա երեսն արեգակի պէս լուսաւորուեցաւ, և նորա շրթերն լուսի պէս սպիտակ էլան :

3 **Ե**ւ ահա՛ մօսէսն և եղիան նորանց երևեցան՝ որ նորա հետ խօսումէին :

4 **Պ**ետրոսն պատասխան տուաւ և ասաց Յսին՝ Տէր՛ լուս է որ մենք հասեղ կենանք. թէ որ կամենաս, երեք տաղաւոր (չառբբ) կըշինենք՝ մին ըն քեզ համար՝ մին ըն մօսէսին, և մին ըն եղիային :

5 Եւ մինչ դեռ նա խօսէր, ահա ամալ լուսաւոր՝ հովանի եղև ՚ի վերայ նոցա . ձայն եղև յամուցն՝ և ասէ . դա՛ է որդի իմ սիրելի՛ ընդ որ հաճեցայ, դմա՛ լուարուք :

6 Իբրև լուան աշակերտքն անկան ՚ի վերայ երեսայ լւրեանց՝ և երկեան յոյժ :

7 Եւ մատուցեալ յս՝ բնոււրն եհար զնոցանէ՛ և ասէ . յիտն կացէք և մի՛ երկնչիք :

8 Ամբարձին՝ զաչն իւրեանց, և ոչ՝ զըք տեսին՝ բայց միայն զյիսուսն :

9 Եւ մինչդեռ իջանէին ՚ի լեռնէ անտի, պատուիրեաց նոցա յս՝ և ասէ . մի՛ ումեք ա սիցէք զտեսիլդ՝ զայդ, մինչև որդի մարդոց ՚ի մեռելոց յարիցէ :

10 Հարցին ցնա աշակերտքն և ասեն . զիմո՞րդ զպիրքն ասեն, եթէ եղիայի՛ նախ պնրտ է գալ :

11 Պատասխանի եա յս՝ և ասէ ցնոսա . եղիա՛ գոյ, և հատուտեսցէ զամենայն :

12 Այլ ասեմ՝ ձեզ՛ զի և եղիա եկեալ իսկ է . և ոչ ծա-

5 Եւ դեռ քանի որ նա խօսուածք՝ ահա մին լուսաւոր ամալ շուաք արու նորանց վերայ . էն ամալիցն ձայն էլաւ և ասաց . դա՛ է իմ սիրելի որդին՝ որ դորան հաւանելեմ . դորան ականջ դրէք :

6 Երբոր աշակերտներն լսեցին, իրանց երեսներն վերայ ընկան և շատ վախեցան :

7 Եւ Յսմօտեցաւ՝ նորանց բռնեց և ասաց . վերկայէք՝ և մի՛ վախենաք :

8 Իրանց աչքերն բարձրացրին և ոչ ով չի տեսին՝ բայց միայն Յիսուսին :

9 Եւ երբոր էն սարկոց վերէին գալիս, Յսմօտեցաւ նորանց պատուէր տուաւ և ասաց . էդ տեսիլքդ իսկի մին մարդոց չի ասէք, մինչև որ որդին մարդոց մեռելներն միջիցն յարուժին ասնէ :

10 Աշակերտներն նորան հարցրին և ասացին . ինչպէս է՞ որ կարդացողներն ասումեն՝ թէ առաջ եղիան պէտք է գայ :

11 Յսմօտասխան տուաւ և ասաց նորանց . եղիան կը գայ՝ և ամէն բանն կը հաստատէ :

12 Բայց ասումեմ՝ ձեզ՛ որ եղիան իսկ եկած է՛ և նորան

նեան զնա , սյլ արտրին ընդ նա՛ զոր ինչ կամեցան . նոյն պէս և որդի մարդոյ չարչարելոյ է ՚ի նոցանէ :

13 Յայնժամ ՚ի միտ առին աշակերտքն , թէ վասն յովհաննոս մկրտչի՛ ասաց յնս .

14 Եւ իբրև եկին ՚ի ժողովուրդն , մատեաւ այր մի՛ ՚ի ծոննր իջանէր և ասէր . տը՛ որդրմեաց որդւոյ իմում , զի լուսնոտի և չարաչար հիւանդանայ . բազում անգամ անկանի ՚ի հուր , և երբէք ՚ի ջուր :

15 Եւ մատուցի զնա աշակերտացն քոյ , և ոչ կարացին բժշկել :

16 Պատասխանի ետ յս՝ և ասէ . ո՛վ ազդ՝ անհաւատ և թիւր , մինչև յերբ իցեմ ընդ ձեզ . մինչև յերբ անսայցեմ ձեզ . ա՛ճ զնա առ իս :

17 Եւ սաստեաց ՚ի նա յս՝ և ել ՚ի նմանէ դեն , և բժշկեցաւ մանուկն ՚ի ժամէն յայնմանէ :

18 Յայնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ և ասեն յս . մեք՛ ընդէ՞ր ոչ կարացոք հանել զնա :

չի՛ ճանաչեցին . բայց ինչ որ ուղեցին՝ նորան արին . էնպէս էլ որդին մարդոյ՝ նորանցից պիտի չարչարի :

13 Ինժամանակն աշակերտներն հասկացան՝ թէ յօհաննէս մկրտչին համար ասաց նորանց :

14 Եւ երբոր ժողովրդի մէջն եկին , մին մարդ մօտեցաւ՝ ծոննր էր դնում և ասումէր՝ Տէր իմ որդոյս որդրմեան . որ լուսնոտմէ՛ և սաստիկ հիւանդանումէ . շտտանգամ կրակն է ընկնում , և մինքանի անգամ էլ ջուրն :

15 Եւ նորան քո աշակերտների մօտն բերի՛ և չի՛ կարացին բժշկել :

16 Յս պատասխան տուաւ՝ և ասաց . ո՛վ անհաւատ և ծուռ ազդ՝ մինչև ե՞րբ ձեզ հետ լինիմ՝ մինչև ե՞րբ համբերեմ ձեզ՝ բեր նորան ինձ մօտ :

17 Եւ Յս նորան սաստեց՝ և դեն նորանցից դուրս եկաւ , և տղայն հենց էն ժամուսնի (սահալեանի) բժշկուեցաւ :

18 Ինժամանակն աշակերտներն առանձին մօտ եկին՝ և Յսին ասացին . մեք ինչո՞ւ չի կարացինք հանել նորան :

19 Եւ նա՛ ասէ ցնոսա . վանն թերահաւատու թեան ձերոյ . առէն՝ ասեմ՝ ձեզ , եթէ ունի . ցիւք հաւատոս քան զհնա մա . նանխոյ , առանջիւք լերինս պս . միկ՝ փոխեաց աստի անդր , և փոխեսցի . և ոչինչ անհնարին լիցի ձեզ :

20 Բայց այս ազգ ոչ իւլիք ելանէ , եթէ ոչ՝ ազօթիւք և պահուիք :

21 Եւ մինչդեռ շքշէին նոքա՛ ՚ի գալիլեա , ասէ ցնոսա յս . մասնելոց է որդի մարդոց ՚ի ձեռս մարդկան ,

22 Եւ սպանցեն զնա , և յերիր աւուր յարիցէ . և արքտմեցան յոյժ :

23 Իբրև եկին նոքա ՚ի կափառնառւմ , մատեան՝ որք զերկդրամեանն պահանջէին՝ առ պետրոս , և ասեն . վարդապետն ձեր ոչ տայ զերկդրամեանն . և նա ասէ՝ այո :

24 Եւ իբրև եմուտ ՚ի տուն՝ յառաջեաց քան զնա յս և ասէ . զիմորդ թուիլ քեզ յիմոյն . թաղաւորք ազգայ՝ յուամէ՞ առնուն զհարկս կամ զհասն , յորդեանց իւրեանց՝

19 Նա էլ նորանց ասաց . ձեր թերահաւատութե համար . ճշմարիտըն ասումեմ ձեզ՝ թէ որ մանանեխի (իսրայիլ) հատի չտի հաւատ ունենաք , և էս սարկս ասէք՝ էս տեղից էնաեղ փոխվի , կը փոխվի . և իսկի մին բան անկարելի չի՛ լինիլ ձեզ համար :

20 Միայն թէ՛ էս ցեղս որիշ բանով դուրս չի՛ գալ՝ եթէ ոչ ազօթքով . և պատու :

21 Եւ դեռ քանի որ նորանք գալիլեայի մէջն մանէին գալիս , Յս նորանց ասաց . որդին մարդոց պէտք է մատնը լի մարդկանց ձեռքն ,

22 Եւ նորան կըսպանեն՝ և երեք օրու մի յարութիւն կառնէ . և նորանք շատ արքտմեցան :

23 Երբ որ նորանք եկին կափառնայում , երկդրամեան հարկ ուզողներն եկին պետրոսի մօտն և ասացին . ձեր վարդապետն երկդրամեանըն չի՞ տալիս , և նա ասաց՝ հա :

24 Եւ երբ որ տունն մտաւ , Յս առաջ սկսեց և ասաց . սիմօն՝ ի՞նչպէս է երևում քեզ . աղքերի թաղաւորներն ու մից են առնում զլիսահարկըն կամ տուրքըն , իրանց որ-

[Թէ յօտարաց :

25 Եւ իբրև ասոց [Թէ յօտարաց , ասէ ցնա յս՝ ասպա ուրեքն ազատ են որդիքն :

26 Բայց զի մի գայթաղղեցուսյուրը զնոսա , երթ 'ի ծով եւ ընկես կործ , եւ զառաջին ձուկնն որ ելանէ՝ սոս , եւ բաց զբերան նորա , եւ դտանիցես ստտեր . եւ զնյն աւետալ՝ տայես նոցա ընդ իմ եւ ընդքս :

ԳԼ .

1 Յայնմ աուուր մատեան աշակերտքն առ յս՝ եւ ասեն . ով իցէ 'ի մէնջ մեծ յարքայութեան երկնից :

2 Եւ կոչեաց առ ինքն յս մանուկ մի , կացոյց զնա 'ի մէջ նոցա ,

3 Եւ ասէ . ամէն ասեմ ձեզ , եթէ ոչ դարձջիք , եւ լինիջիք եբրև զմանկտի , ոչ մտանիցէք յարքայուի երկնից :

4 Արդ՝ որ խոնարհեցուցանէ զանձն իբրև զմանուկս զայս , նա է մեծ յարքայու

ղիքներին , [Թէ օտարներին :

25 Եւ երբոր ասաց՝ [Թէ օտարներին , Յս նորան ասաց . ազա ուրեքն՝ ազատ են որդիքննն :

26 Բայց որ նորանց չի գայթաղղայնենք՝ զնա ծովն եւ ճանկըն քյիր , եւ առաջին ձուկըն որ դուրս կըզայ՝ բանիք , նորա բերանըն բաց՝ եւ մին ստտեր կըդտնես՝ եւ էն սուր եւ նորանց տուր ինձ տեղ եւ քեզ տեղ :

ԺԸ :

1 Լն օրուքն աշակերտներն Յսի մօտն եկին . եւ ասացին . մեզանից ով մեծ կըլինի երկիքի արքայութեան մէջն :

2 Եւ Յս մին երեսայ կանչեց իրան մօտ՝ եւ նորան կանգնացրուց նորանց միջուքն ,

3 Եւ ասաց . ճշմարիտըն , ասումեմ ձեզ՝ [Թէ որ չի դառնաք եւ լինիք երեսաների նման , չէք մանիլ երկնքի արքայութիւնն :

4 Ուրեքն ով որ իրան անձըն էս երեսայիս նման կըխոնարհացնէ , նա է մեծ երկն

Թեան երկնից :

5 Եւ որ ոք ընկալցի մա-
նուկ մի այսպիսի՝ յանուն իմ՝
զիս ընդունի :

6 Եւ որ ոք գայթաղե-
ցուսցէ զմի՝ի փոքրիկանցս յայս-
ցանէ յիս հաւատացելոց, լաւ
է նմա՝ եթէ կախիցի երկան
իշոյ ընդ պարանոց նորա՝ և
ընկղմիցի ՚ի խորս ծովու :

7 Անյաշխարհի գայթաղ-
ուածեանց • հարկ է գալ գայ-
թաղուածեանց • բայց վայ
մարդոցն այնմիկ՝ յոյր ձեռն
գայցէ գայթաղուածիւն :

8 Եթէ ձեռն քո կամ ոտն
գայթաղեցուցանէ զքեզ,
հատ զնա՝ և ընկեա՝ ՚ի քէն •
լաւ լիցէ քեզ՝ միաձեռանի կմ
կող մտանել ՚ի կեանս, քան
թէ երկուս ձեռս և երկուս
ոտս ունիցիս, և անկանել ՚ի
հուրն յաւիտենից :

9 Եւ եթէ սկն քո գայ-
թաղեցուցանէ զքեզ, լիւեա՝
զնա և ընկեա՝ ՚ի քէն • լաւ ի-
ցէ քեզ միականի մտանել ՚ի
կեանս, քան երկուս աչս
ունել՝ և անկանել ՚ի գեհէն
հրոցն :

10 Ձգոյշ լերուք մի ար-

քի արքայուածեան մէջն :

5 Եւ սով որ մին էսպէսի ե-
րկայ իմ՝ անունովս կընդու-
նի, նա ինձ կընդունի :

6 Եւ սով որ գայթաղացնէ
էս փոքրն երիցս մինըն՝ որ ինձ
հաւատացել են, լաւ էք նո-
րան՝ որ մին իշու ջաղացի քար
նորա վիցն կախի և ծովի
խոր տեղն խեղդվի :

7 Անյաշխարհքիս՝ գայ-
թաղուածիւններին համար,
պէտք է որ գայթաղուին եր
գան, բայց վայ էն մարդոցն
որ նորա ձեռովն կըգայ գայ-
թաղուածիւնն :

8 Թէ որ քո ձեռք կամ
ոտը քեզ գայթաղացնէ
կարիւր նորան՝ և քեզանից
զէն քցիւր՝ լաւ է քեզ՝ որ մին
ձեռնանի՝ կամ կազ մտնես
կեանքն, քան թէ երկու ձեռք
և երկու ոտք ունենաս՝ և յա-
ւիտենական կըակի մէջն ընկ-
նիս :

9 Եւ թէ որ քո աչքք քեզ
գայթաղացնէ, հանիւր նո-
րան • և քեզանից քցիւր • լաւ
է քեզ՝ որ մին աչքանի մըտ-
նես կեանքն, քան թէ երկու
աչք ունենաս՝ և դժոխքի կը-
րակն ընկնիս :

10 Ձգոյշ կացէք՝ որ էս

Համարհիցէք զմի՛ ՚ի փոքրկան-
ցրս յայսցանէ • ասեմ՝ ձեզ ,
զի հրեշտակք նոցա յերկինս՝
հանապազ անասնեն՝ զերեսս
հօր իմոյ՝ որ յերկինս է :

11 Զ ի եկն որդի մարդոյ
կեցուցանել զհորուսեալն :

12 Զ ինձրդ թուի ձեզ , ե-
թէ լինիցի մարդոյ հարիւր
ոչխար , և մոլորիցի մի ՚ի նո-
ցանէ , ո՛չ թողուցու զինն -
սունն և զինն ոչխարն ՚ի լե-
րինս , և երթացցէ խնդրիցէ
զմոլորեալն :

13 Եւ եթէ լինիցի գտա-
նել զնա • ամէն ասեմ՝ ձեզ՝
զի ուրանի լինի ՚ի վերայ նո-
րա , առաւել քան ՚ի վերայ
իննսուն և յինունցն որ չի-
ցեն մոլորեալ :

14 Այսպէս՝ ո՛չ են կամք ա-
ռաջի հօր իմոյ որ յերկինս է,
եթէ կորիցէ մի՛ ՚ի փոքրկանցս
յայսցանէ :

15 Եթէ մեղիցէ քեզ եղ-
բայր քո , երթ յանդիմանեա՛
զնա՝ յորժամ դու և նա մի-
այն իցէք • եթէ լուիցէ քեզ ,
շահեցար զեղբայրն քո :

16 Ապա թէ ո՛չ լուիցէ
քեզ , առ ընդ քեզ մի ևս՝
կամ երկուս • զի ՚ի բերանոյ

փոքրներիցս մինըն՝ չի՛ անար-
գէք • սուսմեմ ձեզ՝ որ նրնց
հրեշտակներն երկնքումն միշտ
իմ հօրս երեսուն անսուսմեն
որ երկնքումն է :

11 Պատճառն որ՝ որդին
մարդոյ եկաւ՝ որ ապրեցնէ
կորածըն :

12 Ի՞նչպէս է երեւում ձեզ՝
թէ որ մին մարդ հարիւր ոչ-
խար ունենայ՝ և նորանցից մի-
նըն մոլորվի , նա չի՞ թողիլ
իննսուն և ինն ոչխարըն սա-
րերումն • և զնալ էն մոլոր-
վածին մանդալ :

13 Եւ երբոր կըզանէ նո-
րան՝ ճշմարիտըն սուսմեմ՝
ձեզ՝ որ նորա վերայ աւելի
ուրախ կըլինի , քան էն ինն-
սուն և իննիւն վերայ՝ որ չեն
մոլորված :

14 Այսպէս էլ իմ հայրս՝ որ
երկնքումն է , չի՛ կամենում , որ
էս փոքրներիցս մինն կորչի :

15 Թէ որ քո եղբայրդ՝ քեզ
դէմ մեղք անէ • զնա նորան
յանդիմանիք՝ երբոր դու և
նա մենակ լինիք • թէ որ լսէ
քեզ՝ քո եղբայրըդ շահեցիր :

16 Բայց թէ որ չի՛ լսէ քեզ ,
մին կամ երկու ուրիշըն էլ
քեզ հետ առ • ինչուոր՝ եր-

երկուց և յերկից վկայից հաստատեսցի ամենայն բան :

17 Իսկ և թէ նոցսն ոչ լուրիցէ, աստաջի՛ր յեկեղեցւոջ ապա թէ և եկեղեցւոյն ոչ լուրիցէ, եղևցի քեզ իբրև զՏեթանոսն և զմարսաւոր :

18 Լ՛մէն ասեմ՝ ձեզ • զի զոր կատկեցէք յերկրի՛ եղևցի կապեալ յերկինս, և զոր արձակեցէք յերկրի՛ եղևցի արձակեալ յերկինս :

19 Դարձեալ ասեմ՝ ձեզ • եթէ երկու ՚ի ձէնջ միաբանիցեն յերկրի վասն ամենայն իրաց, զինչ և խնդրեսցեն՝ եղևցի նոցա ՚ի հօրէ իմմէ որ յերկինսն է :

20 Ձ ի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ՚ի մէջ նոցա :

21 Յայնժամ մատեաւ առ նա պետրոս՝ և ասէ. տի՛րքանի՛ցս անգամ թէ մեղիցէ ինձ եղբայր իմ, և թողից նմա. մինչև ցե՞լթն անգամ :

22 Ասէ ցնա յս. ոչ ասեմ քեզ՝ թէ մինչև յեւթն անգամ, այլ՝ մինչև յեւթա-

կու կամ երեք վկայի բերանով ամէն բան կը հաստատուի :

17 Բայց թէ որ նորանց էլ չի՛ լսէ, եկեղեցոյն ասս, ապա թէ որ եկեղեցոյն էլ չի՛ լսէ, թող լինի քեզ համար ինչպէս Տեթանոս կամ մարսաւոր (Հէ-Տրո-սէն) :

18 Ղշմարտորն ասումեմ ձեզ, թէ էն՝ որ երկրիս վերայ կը կապէք, երկնքումն էլ կապված կըլինի. և էն՝ որ երկրիս վերայ կարձակէք, երկնքումն էլ արձակված կըլինի :

19 Ես էլ ասումեմ ձեզ՝ թէ որ ձեզանից երկու հողի երկրի վերայ միաբան լինին ամէն բանի համար, ինչ որ խընդրեն՝ կըլինի նորանց իմ հօրիցս՝ որ երկնքումն է :

20 Ինչու որ՝ սր տեղ երկու կամ երեք հողի իմ անունով ժողովված լինին՝ էնտեղ ես նորանց մէջն եմ :

21 Են ժամանակն պետրոս նորա մօտ եկաւ և ասաց. Տէր. թէ որ իմ եղբայրս ինձ դէմ մեղք անէ՛ք անի՛ր անգամ պէտք է թողու թիւն տամ նորան. մինչև ե՞օթն անգամ :

22 Յս նորան ասաց. չեմ ասում քեզ՝ թէ մինչև եօթն անգամ, բայց մինչև եօթա-

նասնեկին եւթն :

23 Ասան պսոբիկ նմանեցաւ արքայուէ երկնից սուն թագաւորի, որ կամեցաւ համար առնել ՚ի մէջ ծառայից իւրոց :

24 Եւ իբրև սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բէւր քանքարոց :

25 Իբրև սէ ունէր հատուցանել, հրամայեաց՝ զնա վաճառել տէրն նորա, և զկին նորա, և զորդիս, և զամենայն որ զինչ և ունիցի՝ և հատուցանել :

26 Եւ անկեալ ծառայն երկիր պարանէր նմա՝ և ասէր • երկայնամիտ լեր առ իս, և զամենայն հատուցից քեզ :

28 Գթայեալ տէր ծառային պնտրիկ՝ արձակեաց զնա, և զիտին եթող նմա :

28 Եւ ելեալ ծառայն՝ եգիտ զմի ՚ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարեւր դահեկան • և կալեալ զնա՝ խեղդէր և ասէր • հասն ինձ զոր պարտիս :

29 Արդ՝ անկեալ ծառայակցին՝ առ ոստ նորա, աղաչէր զնա՝ և ասէր • երկայնամիտ լեր

նստուն անգամ եօթն :

23 Սրահամար երկնքի արքայուէն նմանվեցաւ մին թագաւոր մարդոց՝ որ ուզումէր իրան ծառաներիցն համար առնել :

24 Եւ երբոր սկսեց առնել՝ նորա մօտ մին տասն հազար քանքարի պարտական բերին :

25 Երբոր չունէր վճարել, նորա տէրն հրաման տուաւ՝ որ նորան՝ և նորա կինըն և նորդիքըն և ամէն ինչ որ ունէր ծախեն՝ և պարտքըն վճարէ :

26 Ծառայն էլ երեսին վերայ ընկնելով երկրպագուի էր տնում՝ նորան և ասում • երկայնամիտ կաց ինձ համար, և ամէնըն կրհատուցանեմ քեզ :

27 Տէրն խղճաց էն ծառայի վերայ՝ նորան արձակեց, և վիտըն էլ բաշխեց նորան :

28 Եւ երբոր էն ծառայն դուրս եկաւ՝ իրան ընկեր ծառաներիցն միւրն գտաւ՝ որ իրան հարիւր դահեկան պարտական էր, և նորան բռնեց՝ խեղդումէր և ասում • վճարիք ինձ՝ ինչ որ պարտական ես :

29 Ապա էն ընկեր ծառայն՝ նորա ոտներն ընկաւ, նորան աղաչումէր և ասումէր • եր-

առ իս՝ և հատուցից քեզ :

կայնամիտ կաց ինձ համար՝ և կըհասցնեմ քեզ :

30 Եւ նա ոչ կամէր • այլ չողաւ արկ զնա ՚ի բանտ՝ մինչև հատուցէ զպարտոն :

30 Եւ նա չէր ուզում՝ բայց գնաց՝ նորան քցեց բանտն (չբնասն) մինչև որ պարտաքըն վճարէ :

31 Իբրև տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղևն՝ տրտմեցան յոյժ, և եկեալ յուղին տեսան իւրեանց զամենայն որ ինչ եղևն :

31 Երբոր նորա ընկեր ծառաներն տեսին ինչ որ էլաւ՝ շատ տըրտմեցան՝ և եկին ամէն ինչ որ էլաւ իրանց տիրոջն յայտնեցին :

32 Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր՝ և ասէ • ծառայչար, զամենայն զպարտոն թողի՝ քեզ՝ վասն զի աղաչեցեր զիս :

32 Ինժամանակն իրան տէրն կանչեց նորան և ասաց • ուլչար ծառայ՝ ես ամէն պարտաքըդ բաշխեցի քեզ՝ որովհետև (դու) աղաչեցիր ինձ :

33 Իսկարդ՝ ոչ էր պսրտ և քեզ՝ ողորմել ծառայակցին քում, որպէս և ես քեզ ողորմեցայ :

33 Ուրեմն պէտք չէ՞ր քեզ՝ որ քո ընկեր ծառային ողորմէիր՝ ինչպէս որ ես քեզ ողորմեցայ :

34 Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դաճաւ, մինչև հատուցէ զամենայն զպարտոն :

34 Եւ նորա տէրն բարկացաւ՝ և նորան մատնեց դաճահներին (ճէլասներէ) ձեռքն • մինչև որ ամէն պարտքն վճարէ :

35 Նոյնպէս և հայր իմ որ յերկինս է՝ արասցէ ձեզ, եթէ ոչ թողուցուք իւրաքանչիւր եղբօր իւրում ՚ի սրտից ձերոց զյանցանս նոցա :

35 Իսպէսէլ իմ հայրս որ երկնքուքն է, ձեզ կանէ • թէ որ դուք ամէն մէկդ իրան եղբօրն՝ ձեր սրտիցն չի թողէք նորանց յանցանքըն :

ԳԼ • ԺԹ •

1 Եւ եղև իբրև կատարեաց յս զբանս զայստիկ, փո-

1 Եւ էլաւ՝ երբոր Յսուս էր խօսքերըս վերջացրուց, դա-

խեցան ՚ի գալիլեէ՝ և եկն ՚ի սաճմանս հրեաստանի յայն կոյս յորդանանու :

2 Եւ զնացին զճետ նորա ժողովուրդք բազումք, և բըժըշկեաց զնոսա անդ :

3 Եւ մատուցեալ առ նա փարիսեցիքն, փորձէին զնա՝ և ասէին . եթէ արժան իցէ ումեք արձակել զկին իւր, ըստ ամենայն վնասու :

4 Պատասխանի ետ նոցա և ասէ . չիցէ՞ ընթերցեալ ձեր՝ թէ որ հաստատեացն իսկզբանէ՝ արու և էգ արար զնոսա՝ և ասէ :

5 Ասն այսորիկ թողցէ այր՝ զհայր և զմայր՝ և երթիցէ զճետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան ՚ի մարմին մի :

6 Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մարմին . արդ՝ զոր անձ զուգեաց, մարդ՝ մի մեկնեսցէ :

7 Ասեն ցնա . իսկ մովսէս ընդէ՞ր պատուիրեաց մեզ ասլ թուղթ մեկնելոյ՝ և արձակել :

8 Ասէ ցնոսա . մովսէս՝ վասն խտասրտութեան ձերոյ հրամայեաց ձեզ արձակել զկանայս ձեր . այլ իսկզբանէ՝

լիեացիցն գնաց՝ և հրէաստանի (Ջահա-սահա-սահա) կողմերն եկաւ, յորդանանի էն կողմն :

2 Եւ շատ ժողովուրդներ նորա ետեւէն զնացին՝ և նորանց էնտեղ բժշկեց :

3 Եւ փարիսեցիքն նորա մօտ եկին՝ նորան փորձումէին և ասումէին . թէ անձան է մին մարդոյ՝ որ իրան կինըն թողանէ ամէն վնասի (ոռ-չէ) համար :

4 Նորանց պատասխան տուաւ և ասաց . դուք չէ՞ք կարգացել՝ թէ նա որ սկզբիցն ստեղծեց՝ նորանց որձ և էգ արաւ և ասաց :

5 Սրահամար մարդն իրան հայրըն և մայրըն կըթողէ՝ և իրան կընկան հեան կըզնայ՝ և երկուքն մին մարմին կըլինին :

6 Ուրեմն երկու չեն, բայց մին մարմին են . ասլա էն որ Աճ միաւորեց, պէտք է մարդն չի՛ ջոկէ :

7 Նորան ասացին . ապա ինչու մօսէսն պատուիրեց մեզ՝ որ դուրս անելոյ թուղթ տանք և թողանենք :

8 Նորանց ասաց . մօսէս ձեր քարսրտութեան համար պատուէր տուաւ ձեզ՝ որ ձեր կանայքըն թողանէք, բայց

նչ եղև այնպէս :

9 Բայց ասեմ՝ ձեզ, զի ամենայն որ արձակէ զինն իւր՝ և նչ վասն պոռնկութեան, և առնիցէ այլ՝ շնայ, և որ զարձակեանի առնէ՝ շնայ :

10 Ասենցնա աշակերտքն իւր • եթէ սոյդպէս ինչ փաստիցէ ընդ այր և ընդ կին, լաւ է՝ չամուսնանալ :

11 Եւ նա՛ ասէ ցնոսա • նչ ամենեքեան բաւական են սոյդըմ՝ բանի, այլ որոց տուեան է :

21 Ձի են ներքինիք՝ որ յորովայնէ մօր իւրեանց ծընան այնպէս • և են ներքինիք՝ որ ՚ի մարդկանէ եղեն ներքինիք • և են ներքինիք՝ որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայութեան երկնից • որ կարողն է տանել տարցի :

13 Յայնժամ մատուցան առ նա մանկաի, զի ձեռն դիցէ ՚ի վերայ նոցա՝ և աղօթա աւրասցէ • և աշակերտքն նորա՛ սաստէին նոցա :

14 Ասէ յս • թոյլ տուք

առաջուց էնպէս չէլաւ :

9 Միայն թէ ասուամեմ ձեզ՝ ամէն ո՛վ որ իրան կինըն թողանէ, և չէ թէ պոռնկուե պատճառաւն, և (մին) որ իշըն առնէ՛ նա շնուի է գործում • և նա էլ՝ որ էն թողարածըն է առնում, շնուի է գործում :

10 Իրան աշակերտներն նորան ասացին • թէ որ մարդոց և կնկան մէջն էդպէսի ինչ դժուարուի կայ • լաւ է չի կարգվիլն :

11 Եւ էլ նորանց ասաց • ամէնքն կարող չեն էդ բանիդ, բայց նորանք՝ որ նորանց տրված է :

12 Ինչու որ՝ կան ներքինիք (թասընէր)՝ որ իրանց մօր փորիցն էնպէս են ծնվել • և կան ներքինիք՝ որ մարդկանցից են էլած ներքինիք • և կան ներքինիք՝ որ իրանց անձըն ներքինի են արեւ երկնքի արքայութեան համար • ո՛վ որ կարող է տանիլ՝ թող տանի :

13 Ին ժամանակն երեխաներ բերին նորա մօտ՝ որ ձեռըն դնէ նորանց վերայ և աղօթք անէ • և նորա աշակերտներն սաստուակէին նորանց :

14 Յս ասաց • թող տուէք

Մանկաւոյդ՝ և մի՛ արգելուք
զգոսա զսլ առ խ, զի այդպի-
սեանցդ է արքայուի երկնից :

15 Եւ եղեալ ձեռս ՚ի վերայ
նոցա՝ զնոց անտի :

16 Եւ ահա, մատուցեալ
ոմն առ նա՝ ասէ . վարդապետ
բարի՛ զի՛նչ բարի դործեցից
զի ընդունիցիմ՝ զկեանսն յա-
ւիտենականս :

17 Եւ նա՝ ասէ ցնա . զի՞
հարցանես զիս զըսբւոյ, մի է
բարի . եթէ կամիս ՚ի կեանսն
յաւիտենականս մտանել, պա-
հեա՛ զպատուիրանսն :

18 Ասէ ցնա, զ՞որս . ասէ
ցնա յս . զմի սպանաներն, և
մի շնար, և մի դողանար, և մի
սուտ վկայեր :

19 Պատուեա՛ զհայր քո և
զմայր . և սիրեսցես զընկեր
քո իբրև զանձն քո :

20 Ասէ ցնա պատանին .
զայդ ամենայն պահեցի ՚ի ման-
կուլթեանէ իմմէ . արդ՝ ի՞նչ ի-
ւրք պահաս իցեմ :

21 Ասէ ցնա յս . եթէ կա-
միս կատարեալ լինել, երթ՝
վաճառեա՛ զինչս քո՝ և տուր
աղքատաց, և ունիցիս զանձս

էդ երեսաներիդ՝ և դորանց
մի արգելէք որ ինձ մօտ դան
ինչուոր՝ էդպէսիներին է եր-
կընքի արքայուլթիւնն :

15 Եւ նորանց վերայ ձեռք
դրաւ՝ և Էնտեղիցն զնաց :

16 Եւ ահա՛ մինն նորա մօտ
եկաւ և ասաց . բարի՛ վար-
դապետ՝ ես ի՞նչ բարի դոր-
ծեմ՝ որ յաւիտենական կեան-
քըն ընդունիմ :

17 Նա էլ նորան ասաց .
ի՞նչու ես ինձ բարոյ համար
հարցնում . մի է բարին . թէ
որ կամենումես յաւիտենական
կեանքն մտնել, պատուի-
րանքներըն պահիր :

18 Նորան ասաց . որքն . Յս
նորան ասաց . (էն որ ասումէ)
մի սպանիր, մի շնար, մի դո-
ղանար, մի սուտ վկայեր :

19 Պատուիր քո հայրն և
քո մայրըն, և սիրիր քո ըն-
կերըդ՝ քո անձիդ պէս :

20 Ինչ պտտանին (ճահել
Տորդն) նորան ասաց . էդ ա-
մէնըն իմ երեսայուլթեանիցն
պահեցի . ասա ի՞նչ բանով
եմ պահաս :

21 Յս նորան ասաց . թէ որ
կամենումես կատարեալ լի-
նիլ, զնա՛ քո ապրանքըդ ծա-
խիր . և աղքատներին տուր, և

յերկինս, և եկ զինի իմ :

22 Իբրև լուաւ պատանին զքանն, դնաց տրտմեալ, զի ունէր ստացուածս բազումս :

23 Ասէ յս ցաշակերտան . ամէն ասեմ՝ ձեզ . զի դժուաւ րոււ մտցէ մեծատունն յարքայութիւն երկնից :

24 Դարձեալ ասեմ՝ ձեզ . զիւրին է մալխոյ մտանել ընդ ծակ սողան, քան մեծտտան յարքայութիւն ինչ մտանել :

25 Իբրև լուան աշակերտքն՝ զարմացան յոյժ, և ասեն . իսկ՝ ո՞ն կարիցէ ապրել :

26 Հայեցաւ ՚ի նոսա յս՝ և ասէ . առ ՚ի մարդկանէ այդ անկոր է, այլ առ յոյ աւմենայն ինչ զօրաւոր :

27 Յայնժամ պատասխանի ետ պետրոս և ասէ ցնա . աւասիկ մեք՝ թողուք զամենայն, և եկանք զինի քո . արդ՝ զի՞նչ լինիցի մեզ :

28 Ասէ ցնոսա յս . ամէն ասեմ՝ ձեզ . զի դձը որ եկիք զինի իմ, ՚ի միւսանդամ դաւ

զանձ (խաղնայ) կուենեա երկրնքումն՝ և իմ ետեւս եկէ :

22 Երբ որ պատանին էսբանըս լսեց, տրտմեյաւ և դնաց պատճառն որ՝ շատ ապրանք ունէր :

23 Յս աշակերտներին ասաց . Ճշմարիտրն ասուամ՝ ձեզ՝ որ հարուստն շատ դժուար կըմանէ երկնքի արքայութիւնն :

24 Մինչև ասուամ՝ ձեզ՝ աւելի հեշտ է՝ որ ուղան ասեղի ծակովն անցկենայ՝ քան թէ հարուստն երկնքի արքայութիւնն մտնէ :

25 Աշակերտներն երբ որ լսեցին, շատ զարմացան և սասցին . ապա՞ ու՛ կարէ ապրել :

26 Յս նորանց մտիկ տուաւ և ասաց . Էդ (բանդ) մարդկանց կոշմանէ անկարելի է, բայց ինչ կողմանէ՝ ամէն բան կարելի է :

27 Ին՝ ժամանակն պետրոս պատասխան տուաւ և նորան ասաց . Ի՞նչ մեք ամէն բան թողինք և քո ետեւդ եկինք . սպա ի՞նչ պիտի լինի մեզ :

28 Յս նորանց ասաց . Ճշմարիտրն ասուամ՝ ձեզ՝ թէ դուք որ իմ ետեւս եկիք,

լստեան՝ յորժամ նստցի որ-
դի մարդոց յաթոռ փառաց
իւրոց • նստջի՛ք և դուք յեր-
կոտասան աթոռ՝ դատել զեր-
կոտասան ազգ իսրայէլի ։

29 Եւ ամենայն որ ոք ե -
թող զտուն, կամ զեղբարս •
կամ զքորս, կամ զհայր, կամ
զմայր, կամ զկիսն, կամ զոր-
դիս, կամ զազարակս՝ վն ա -
նուան իմոց, հարիւրապատիկ
առցէ՛ և զկենսս յաւիտեանս -
կանս ժառանգեսցէ ։

30 Բաղնամք եղիցին առա -
ջինք յետինք, և յետինք ա -
ռաջինք ։

ԳԼ Ի .

1 Բանգի նժան է արքա -
յուր իւն երկնից առն տանու -
տեառն, որ ել ընդ առաւօ -
